

**ԱՎՍՏՐՈ-ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ
ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅՈՑ ԳԵՂԱՄՂԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ
(19 15- 19 18 թթ.)**

9(47.925)

26-77

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԱՏՐՈ-ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ
ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻ
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(1915-1918թթ.)
(փաստաթղթերի ժողովածու)

Կազմող և առաջարանի
հեղինակ՝ Արտեմ Օհանջանյան
Գերմաներենից թարգմանեց՝
Վառլամ Մարտիրոսյան

3395



ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

Օ-453

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՒԹՅՈՒՆԸ

ՄԱՏԵՆԱՇԱՐ

Քիվ 3

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ ցեղասպանության
թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր Լ.Ա. Բարսեղյան

Օ 453 Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրու-
թյունները Հայոց ցեղասպանության մասին (1915-18 թթ.)
(փաստաթղթերի ժողովածու) [Կազմող և առաջաբանի հեղի-
նակ՝ Արտեմ Օհանջանյան, գերմաներենից թարգմանեց
Վառլամ Մարտիրոսյանը],-Երևան, ՀՀ ԳԱԱ, Հայոց
ցեղասպանության թանգարան-ինստիտուտ,
Նահապետ: 2004.-130էջ:

Օ $\frac{0503020913}{0076(01)-2004}$ 2004թ.

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99941-39-04-5

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Բազմամյա տքնաջան աշխատանքի շնորհիվ մեր կողմից ի մի
է բերվել ավստրիական արխիվների ֆոնդերում պահվող ավստրո-
հունգարական պաշտոնյաների շուրջ 3300 էջ կազմող զեկուցագրե-
րը՝ 1914-ից մինչև 1918թ. Հայկական հարցի և Հայոց ցեղասպանու-
թյան մասին, որոնց մի մասը, որը վերաբերում է միայն Հայոց ցեղաս-
պանությանը, ստորև հայերեն թարգմանությամբ ներկայացվում է
գիտական հասարակայնությանը:

Այս վավերագրերի իսկությունն, անտարակույս, կասկած չեն
հարուցում. Օսմանյան կայսրության հետ դաշնակից պետություննե-
րից մեկի պաշտոնյա զեկուցողներն, անշուշտ, դրանք հոգուտ հայե-
րի չեն «գունագարդել»:

Հայկական քարեփոխումների ծրագիրը ստորագրելուց մի
քանի ամիս հետո՝ 1914թ. օգոստոսին բռնկվեց Առաջին համաշխար-
հային պատերազմը: Արդեն այն ժամանակ ակնհայտ էր, որ երիտ-
թուրքերի՝ հայերի նկատմամբ կիրառվող քաղաքականությունը նպա-
տակաուղղված էր հայ ժողովրդի բնաջնջմանը:

Հայերը մեծ վտանգ էին ներկայացնում Օսմանյան կայսրու-
թյան համար: Եվրոպայի քրիստոնյաները շարունակ դուրս են մղել
թուրքերին դեպի Արևելք: Թուրքերը նրանց համար բարբարոս և մշա-
կույթից զուրկ ժողովուրդ էին, որոնք, համատարած, ուր էլ ոտք էին
դնում, ավերածություններ և մահ էին սփռում: Օսմանցիների երբեմ-
նի մեծ և հզոր կայսրությունը քայքայվում էր: Նրանք քրիստոնյանե-
րին ատում էին այն պատճառով, որ քրիստոնյաներն, իբր, հնարա-
վոր բոլոր միջոցներն օգտագործում էին նրանց հաշվին ավելի շահ
առանալու համար: Այդ ատելությունը պարպում էին թույլերի, այ-
սինքն հայերի վրա: Երբ նրանք նույնիսկ համագործակցում էին հա-
յերի հետ, ինչպես այդ պատահեց սուլթանին գահագրկելու ժամա-
նակ, հայատյացությունը միշտ էլ առկա էր: Սպասում էին միայն
պատեհ պահի՝ հայերին «վնասագերծելու» համար: Առաջին համաշ-
խարհային պատերազմի հետևանքով երիտթուրքերի կառավարու-
թյանը հնարավորություն ընձեռվեց յուրովի լուծելու Հայկական հար-
ցը այն լուծել՝ հայ ժողովրդին բնաջնջելու միջոցով: Եվ երբ թուրքերի
իշխանության ներքո գտնվող Հայաստանում այլևս հայ չկար,
առկա ժամանակի հարց էր, որպեսզի Հայաստանը, որը նշված էր
Փոքր Ասիայի բոլոր քարտեզների վրա՝ քարտեզներից չքանա: Այն
եզակիները, որոնք իրենց բազմաթիվ ներկայացուցչություններով,
ապաներով հանդերձ, ներկայացված էին Թուրքիայում և կարող էին

հայկական կոտորածների դեմ հանդես գալ (մասնավորապես՝ Ավստրո-Հունգարիան և Գերմանիան), Թուրքիայի դաշնակիցներն էին: 1914թ. օգոստոսի 8-ին Կոստանդնուպոլսում կ. և ք. (Ավստրո-Հունգարիայի կայսերական և բազավորական, այսուհետ՝ կ. և ք.) զինվորական կցորդ Պոմիանկովսկին հեռագրում է Վիեննա. «Բանակի զլխավոր հրամանատարն է պաշտպանության մինիստր Էնվեր փաշան: Կովկաս գործախմբի հրամանատարն է գեներալ Հասան Իզեբ փաշան: Բանակների զլխավոր շտաբների և բոլոր կորպուսների շտաբների պետերն ամբողջապես գերմանացի սպաներ են»:¹

1914թ. նոյեմբերի 19-ին Պալավիչինին գրում է. «Ավստրո-Հունգարիան և Գերմանիան այսօր Թուրքիան իրենց իշխանությանն են ենթարկել: Այն, որ Գերմանիայի դեպքում ավելի մեծ չափով է դա դրսևորվում, բացատրվում է այն պարագայով, որ վերջինս իր ձեռքում է պահում թուրքական բանակը և մավատորմը: Գրանից գատ, գերմանական կառավարության տրամադրության տակ գտնվող հույժ նշանակալից դրամական միջոցները հնարավորություն են ընձեռում այստեղ իրենց կամքը իրականացնել... Արդեն այժմ բազմաթիվ հանգամանքներից երևում է, որ գերմանացիները դիտում են Թուրքիան որպես իրենց գործունեության բացառիկ բնագավառ և յուրաքանչյուր պարագայում Թուրքիային տեր են ներկայանում»:²

Սակայն Եվրոպայի քրիստոնյա երկու մեծ տերություններն այլ շահեր ունեին քան հայ ժողովրդին ծրագրված և, ինչպես ավստրիական մի գեկուցագրում նշված է, «բավականին այլանդակ և ոչ սիստեմատիկ իրականացվող» բնաջնջումից փրկելը:³

Վավերագրերը վկայում են, որ հայերի հալածանքները սկսվել էին արդեն 1915թ. հունվարին: 1915թ. հունվարի 26-ի մի գեկուցագրում նշված է. «Շատ հաճախ հայ զինվորներին ուղարկում են ռազմաճակատի առաջին զիծ, որպեսզի նրանք այնտեղ սպանվեն: Քրդերը վերսկսել են կոտորել հայ գյուղացիներին, բայց առանձին գործողություններով, որ կասկած չհարուցեն, թե հայերի կոտորածներն ամենուրեք են իրականացվում»:⁴

Վավերագրերն, այնուհետև, վկայում են, որ հայերին հալածելու հրամանն երիտթուրքական կառավարությունն էր արձակել:

1915թ. հունիսի 24-ին Պալավիչինին գեկուցում է Վիեննա. «Ոչ մի կասկածի ենթակա չէ այն, որ հայերի հանդեպ կառավարության գործելակերպը սնանկ է...»:⁵ 1915թ. հոկտեմբերի 8-ին կ. և ք. բանակի զլխավոր հրամանատարությունը գեկուցում է Վիեննա.

«Թվում է, թե այս օրերը (հայերին հարկադրաբար վերաբնակեցումը. - Ա. Օ.) ընդհանրապես ստեղծվել է սոսկ նրա համար, որ օրերի պաշտպանության ներքո կարողանան իրականացնել հայերի բնաջնջումը»:⁶ 1917թ. մարտի 24-ին Պալավիչինին գեկուցում է Թուրքիայի տնտեսության մինիստր Ջալիլ բեյի հետ ունեցած գրույցի մասին. «... Մինիստրը հայերի հալածանքները բնորոշեց (...) որպես նախկին կառավարության շատ մեծ սխալ: Ամբողջ ազգեր հալածելը և բնաջնջելու ցանկությունը քաղաքական տեսակետից մեծ սխալ է եղել»:⁷

Բայց նաև հայերի ջարդերի ձևերն ու եղանակներն են նկարագրված բազմաթիվ վավերագրերում. 1915թ. սեպտեմբերի 30-ին կ. և ք. դեսպանության խորհրդական Տրատումանտոբֆը գրում է Վիեննա. «Տղամարդիկ մեծ մասամբ սպանվել են, կանանց և երեխաներին չնչին գնով վաճառել են թուրքերին: Նրանք, որոնց հետիոտն ուղևորել էին երկրի խորքերը, խիստ փոքր տոկոսով հասան իրենց նպատակին, քանզի ճանապարհին թերսնումից, հիվանդությունից և հյուծվածությունից վախճանվել են: Այսօր այլևս չի կարելի ժխտել, որ թուրքերն, անտարակույս, հայրենիքի դավաճանության և ապստամբության իբր տեղի ունեցած բազմաթիվ դեպքեր օգտագործել են որպես պատրվակ հայոց ցեղի բնաջնջումն իրականացնելու համար, մի իրողություն, որը, թվում է, նրանց մեծավ մասամբ հաջողվել է»:⁸

Հայերին բռնությամբ մահմեդականացնելու վերաբերյալ 1916թ. մարտի 3-ի գեկուցագրում նշված է. «միայն իսլամ ընդունելը կարող է խեղճ գոհերին (...) արսորից, այսինքն հավաստի մահից, փրկել»:⁹

Վիճելի հարցերից մեկը կոտորածների գոհերի թվաքանակն է:

Ավստրիական վավերագրերում մինչև 1915թ. դեկտեմբերը կոտորված հայերի թվաքանակը նշված է մոտ մեկ միլիոն. «Այլ հաշվարկումների հետ համեմաշխություն ցուցաբերելով, իմ երաշխավորյալ անձը հավաստիացնում է, որ մոտ մեկ միլիոն հայ է բնաջնջվել»:¹⁰

Չինադադարից հետո իշխանության եկած թուրքական կառավարությունը խոսում էր 800000 սպանված հայերի մասին:¹¹

Ավստրիական վավերագրերն ի հայտ են բերում նաև մի այլ խնդիր՝ Թուրքիայի դաշնակիցների՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հանցակից լինելու խնդիրը: Փաստն այն է, որ ինչպես Գերմանիայի, այնպես էլ Ավստրո-Հունգարիայի դեսպանները լրջորեն

չեն հանդես եկել ի պաշտպանություն հայերի: Եվ նույնիսկ երբ նրանք նման քայլերի էին դիմում, ապա դա անում էին, ինչպես այդ ընդգծել է Պալավիչինին, Թուրքիայի հանդեպ «քարեկամական ձևով»:

Հօգուտ հայերի՝ գերմանացիների ջանքերի մասին, մասնավորապես՝ երբ Յոհաննես Լեփսիուսը 1915թ. օգոստոսին գտնվում էր Կոստանդնուպոլսում, Պալավիչինին գրել է. «Երբ Հայկական հարցը և Թուրքիայի գործելակերպը քննության ենթարկվի, Գերմանիայի դեսպանի երեկվա քայլը նրան ակնհայտորեն պատեհություն է ընձևեռելու վկայակոչել, որ իրենք թուրքական կառավարությանը հայերի նկատմամբ նրանց քաղաքականության հետևանքների վերաբերյալ զգուշացրել են»:¹²

Հայերին կոտորելու ոճրագործության մեջ գերմանացիների հանցակից լինելու մասին հստակորեն վկայում են հետևյալ երկու փաստաթղթերը. 1915թ. հոկտեմբերի 22-ին կ. և ք. հյուպատոս Ավիատկովսկին գեկուցում էր Տրապիզոնից. «Գերմանական հուսալի աղբյուրից տեղեկացել եմ, որ հայերին վնասագերծելու առաջին խթանը, իհարկե ոչ փաստորեն իրականացված եղանակով, ծայր է առել գերմանական կողմից»:¹³

1915թ. նոյեմբերի 10-ին կ. և ք. հյուպատոս Նադամլենցկին գեկուցում է Ադրիանապոլսից. «Յավոք մինչև օրս ինձ համար հնարավոր չէր իմ երաշխավորյալ անձին դրդել հիշատակել այն անձանց անունները, ովքեր ուղղակի հայտարարել են, որ Գերմանիան կամեցել է հայերի հալածանքները: Նա կարողացավ ինձ միայն հավաստել, որ խոսքը վերաբերվում է մի ազդեցիկ անձնավորության, որը Կոմիտեի հետ սերտ առնչություն ունի և բոլոր գաղտնիքները գիտի»:¹⁴

Սակայն Թուրքիայում կային կ. և ք. որոշ ներկայացուցիչներ, որոնք քննադատաբար էին վերաբերվում հայերի հանդեպ ավստրիական կառավարության գործելակերպին: 1916թ. մարտի 8-ին կ. և ք. հյուպատոս Նադամլենցկին գրում էր Պալավիչինին. «Վերջը բնակչությունը (...) իր սարսափի և անսահման կարիքի մեջ հարցնում է, թե ի՞նչ են անում Թուրքիայի դաշնակիցները: Ի՞նչ են անում Ավստրո-Հունգարիան և Գերմանիան: Ինչո՞ւ նրանք չեն միջամտում ինչո՞ւ նրանք չեն օգնում (...): Չերդ գերազանցություն (...) մի՞թե մենք հնարավորություն և զորություն չունենք վերջ դնելու այդ բռնություններին, որոնք սև ստվեր են գցում մեր հեղինակության վրա»:¹⁵

1917թ., ինչպես հայտնի է, տեղի ունեցավ հեղափոխություն Ռուսաստանում: Ավստրիական դիվանագետները գեկուցում էին, որ

Փետրվարյան հեղափոխությունը ծրագրվել և իրագործվել է Անգլիայի կողմից: Այդօրինակ դատողության հիմք է տալիս 1918թ. մարտի 14-ին Կոստանդնուպոլսից ուղարկված մի փաստաթուղթ, որտեղ նշված է, որ բուլշևիկները մի գաղտնի փաստաթուղթ են հրապարակել, որտեղ գեկուցվում էր, որ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սազոնովը 1916 թվականին հանդես է եկել Թուրքիայի հետ սեպարատ հաշտություն կնքելու օգտին:¹⁶ Ռուսների սեպարատ հաշտությունը Թուրքիայի հետ կունենար ծանր հետևանքներ Անտանտի դաշնակից պետությունների համար: 1917թ. մայիսի 20-ի թվակիր վավերագրում գեկուցվում է այն մասին, թե ինչպես է Պետերբուրգում Անգլիայի դեսպանը զգուշացրել ռուսական կառավարությանը, երբ Կերենսկու կառավարությունը խաղաղության հասնելու տրամադրություններ էր դրսևորում. «Դուք ոչ մի խաղաղություն չեք ունենա, քանզի եթե դուք Կենտրոնական տերությունների հետ այդպիսին կնքեք, ապա ձեր վրա կհարձակվեն անգլիացիները, ճապոնացիները և չինացիները, և ձեզ համար ավելի լավ է ներկա պատերազմի մեջ մնալ, որի դեպքում, հնարավոր է, մեզանից կարող եք որոշ բան ստանալ, քան մի այլ ռազմաճակատում նորը սկսել, որը, բնականաբար, ներկայիս սլայմաններում առանձնապես ծանր կլինի»:¹⁷

Վավերագրերն, այնուհետև, բացահայտում են Կենտրոնական տերությունների կովկասյան քաղաքականությունը, Թուրքիայի օգնությամբ այն անեքսիայի ենթարկելու, տնտեսապես Կովկասը շահագործելու նրանց հավակնությունները: Դրա համար Կովկասը պիտի տարանջատվեր Ռուսաստանից: Դրան հասան գերմանացիները, երբ նրանց վրացի բարեկամներն Անդրկովկասի կառավարության մեջ անսահմանափակ իշխանություն ձեռք բերեցին: 1918թ. ապրիլի 22-ին Թիֆլիսում նրանք հռչակեցին անդրկովկասյան դաշնակցային դեմոկրատական հանրապետություն, որի կազմում ընդգրկված էին Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը: Մի քանի շաբաթ անց՝ մայիսի վերջին, անդրկովկասյան հանրապետությունները հռչակեցին իրենց անկախությունը: Դրա հետևանքով Անդրկովկասը վերջնականապես անջատվեց Ռուսաստանից: Այժմ արդեն Կենտրոնական տերությունները կարող էին իրենց մտադրություններն իրականացնել. Թուրքիան պիտի ներխուժեր Կովկաս: Հայերը չէին կարող կասեցնել թուրքերի ներխուժումը հայկական նորաստեղծ հանրապետություն: Երբ թուրքական զորքերը ներխուժեցին Հայաստանի հանրապետության տարածք, Գերմանիային և Ավստրո-Հունգարիային բողոքում էին անգամ բուլշևիկները: Թուրքերի Կովկաս

ներխուժելու հետևանքով ոչ միայն խախտվեց Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, այլև սկսվեց հայերի մի նոր ցեղասպանություն:

Գերմանիան և Ավստրո-Հունգարիան բողոքում էին Թուրքիային: Գերմանացիների երկակի խաղն ակնհայտ է դառնում Պալավիչինիի 1918թ. մայիսի 30-ի գեկուցագրից.

«... Մեծ վեզիրը [Թալեաթ փաշան], դրանից զատ, ավելացրեց, որ կոմս Բեռնարդոֆը ժամանակին հստակորեն պարզաբանել է անդրկովկասյան կառավարությանը տված վերջնագիրը և որ գերմանական գերագույն հրամանատարությունը «սահմանների ստույգ ճշգրտման» հետ, որի հետևանքով մի տարածաշրջան՝ մինչև Ջուֆա խոստացվել է Թուրքիային, լրիվ համաձայն է: Նաև թուրքական բանակի առաջխաղացումը տեղի է ունեցել գերմանական բանակի գերագույն հրամանատարության համաձայնությամբ և, նույնիսկ, գերագույն հրամանատարության ցուցումով»:¹⁸

Թուրքերի Հայաստան ներխուժելու և հայկական կենսականորեն կարևոր տարածքները գրավելու հետևանքով էլ ավելի սահմանափակվեց Հայաստանի տարածքը: Այդ պատճառով ծագած կոնֆլիկտում Գերմանիան հետևյալ դիրքը գրավեց. «Բաթումի հաշտության պայմանագրով Թուրքիան հայերից ևս Բրեստ-Լիտովսկի պայմանագրով որոշած սահմաններից ավելի՝ կարևոր նշանակության տարածաշրջաններ է զավթել: Երկիրը, որը մնացել է հայերին, շատ փոքր է բնակչությանը կերակրելու համար: Հարյուր հազարավոր հայեր փախել են Վրաստան կամ լեռները: Մենք, որպես Բրեստի պայմանագրի համաստորագրող, պարտավոր ենք պահանջել, որ Թուրքիան հետքաշվի դեպի Բրեստի նշված սահմանները և փախստական հայերին հնարավորություն ընձեռի վերադառնալ իրենց բնակավայրերը: Թուրքիային խնայելու համար հանձնարարվում է այդօրինակ պահանջից հրաժարվել և սահմանափակվել սոսկ թուրքական գործողությունների դեմ առարկությամբ, սակայն առանց այդ առարկություններին հետևող գործողությունների»:¹⁹

Ավստրիական վավերագրերն ուշագրավ են նաև Լեռնային Ղարաբաղի ներկա հակամարտության առումով, քանզի Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը սկսվել էր դեռ 1918թ.:

1918թ. օգոստոսին բարոն Ֆրանկենշտայնը՝ կ. և ք. պատվիրակը Կովկասում, գեկուցում է Թիֆլիսից. «Ղարաբաղի լեռնային մասում 250000 հայ է բնակվում և ընդամենը 20.000 մահմեդական: Չնայած դրան Թուրքիան այդ տարածքը դիտում է որպես ադրբեջանական շրջան»:²⁰ Ու նաև՝ «վերջերս թուրքերը կամենում էին Ադրբե-

ջանից զուտ հայկական Ղարաբաղ մարզը ներխուժել...»

Մենք փորձեցինք այս հակիրճ առաջաբանում շեշտել ավստրիական վավերագրերի նշանակությունը՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության առնչությամբ: Այս վավերագրերի հիման վրա մենք առաջ ենք քաշում հետևյալ թեզը:

Այն անսահման աջակցությունը, որը Գերմանիան և Ավստրո-Հունգարիան ցույց տվեցին սուլթան Աբդուլ Համիդին և երիտթուրքերին, վերջիններիս հայերի հանդեպ տարվող քաղաքականության կապակցությամբ, նպաստեց 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանությանը, հայերի հալածանքներին և կոտորածներին և նրանց տարագրությանն իրենց հայրենիքից:

Գերմանական և ավստրիական պատմագրության մեջ առ այսօր սակայն չեն լուսարանվում Հայաստանին առնչվող հարցեր. մի բացթողում, որի ճշգրիտ իմաստավորումը կարևոր նպաստ կրերի այդ երկրների ժողովուրդների փոխըմբռնմանը:

Արտեմ Օհանջանյան
Մագիստրոս դոկտոր
(Վիեննա, Ավստրիա)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Wien, Kriegsarchiv (այսուհետ՝ KA), Armeeoberkommando Nachrichtenabteilung (այսուհետ՝ AOK NA), Karton 3509.
- ² Wien, Haus- und Hof- und Staatsarchiv (այսուհետ՝ HHSTA), Politisches Archiv (այսուհետ՝ PA), I 521.
- ³ Wien, HHSTA Presseleitung (այսուհետ՝ PL) 245.
- ⁴ Wien, HHSTA PA XL 272.
- ⁵ Wien, HHSTA PA XII 209.
- ⁶ Wien, KA AOK NA 1915 Karton 3529.
- ⁷ Wien, HHSTA PA XII 211.
- ⁸ Wien, HHSTA PA XII 209.
- ⁹ Wien, HHSTA PA XII 463.
- ¹⁰ Wien, HHSTA PA XL 272.
- ¹¹ Այդ մասին տե՛ս Artem Ohandjanian. Armenien, Der verschwiegene Völkermord. Böhlau. Verlag Wien. Köln. Graz. 1989, էջ 109:
- ¹² Wien, HHSTA PA XII 209.
- ¹³ Wien, HHSTA PA XII 463.
- ¹⁴ Wien, HHSTA PA XII 209.
- ¹⁵ Wien, HHSTA X 155.

- ¹⁶ Wien, HHSTA PL 192.
¹⁷ Artem Ohandjanian, նշվ. աշխ, էջ 126:
¹⁸ Wien, HHSTA PA X 155.
¹⁹ Wien, HHSTA PA X 157 (Beilage).
²⁰ Wien, HHSTA PA X 157.

*Թիվ 38.
 Հայաստանից*

*Կոստանդնուպոլիս,
 18 հունվարի, 1915*

Հայկական տարրեր վիլայեթներից տեղեկություններ են ստացվել Պատրիարքարանում, համաձայն որոնց բուրքական և հայկական տարրերի միջև հին հակամարտությունը վերջիններիս նկատմամբ այլևայլ հրեշավոր չարագործությունների տեսքով սանձազերծվել է: Մեծ կոտորած ոչ մի տեղում չի եղել, սակայն հավանաբար զանազան վայրերում ունևոր հայեր են սպանվել և նրանց տները կողոպտվել են: Հույժ մտահոգիչը այս իրադարձությունների առթիվ այն է, որ իշխանություններն այս հրեշավոր չարագործություններին նայում են ձեռքերը ծալած:

Հայերը հուսով էին, որ Էնվերի Կովկասում հայտնվելը այս բռնություններին վերջ կդնի, սակայն նրանք իրենց այս ակնկալություններում հուսախաբ եղան, քեև Էնվերը վերջինն է, որը հայերի վրա հարձակումներին հավանություն էր տալիս և որը վտանգ չի տեսնում, որը այս դեպքերին յուրահատուկ է: Թուրքերը այսօր ավելի, քան երբևէ հարկադրված են ընդունել հայերի լոյալ կեցվածքը, այդ նրանց դժվարին փորձության է ենթարկում, երբ նրանք հայերին չեն պաշտպանում նրանց կյանքի և ունեցվածքի դեմ կատարվող հարձակումներից, առավել ևս, երբ հայերը Թուրքիայի և Ռուսաստանի միջև ընթացող պայքարում առաջինի կողմն են պահում: Հարկ է նաև նկատի առնել, որ բուրքական կովկասյան բանակում համեմատաբար շատ հայեր կան:

“Österreich-Armenien, 1872-1936”, Faksimilesammlung Diplomatischer Aktenstücke, Herausgegeben und Eingeleitet von Mag. Dr. Artem Ohandjanian, , Band I-XII, Ohandjanianeigenverlag Wien, 1995; Այստեղևս՝ “Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4497.

Թիվ 50

*Կոստանդնուպոլիս,
 26/1 1915*

Թուրքիան և Հայաստանը

...Աղմուկը, որ գալիս էր ներքին գործերի նախարար Թալեաթ

բեյի սենյակից, վկայում էր այն մասին, որ վերջինս շուտով մեկնելու է Էրզրում: Նրա հանձնարարականը կապված պիտի լիներ հայերի նկատմամբ ունեցած թշնամական վերաբերմունքի հետ:

Շատ հաճախ հայ զինվորներին ուղարկում են ռազմաճակատի առաջին զիծ, որպեսզի նրանք այնտեղ սպանվեն: Քրդերը վերսկսել են կոտորել հայ գյուղացիներին, բայց առանձին գործողություններով, որ կասկած չհարուցեն, թե հայերի կոտորածներն ամենուրեք են իրականացվում:

Wien, Haus, – Hof – und Staatsarchiv (HHSTA), Politisches Archiv (PA), XL 272.

№ 3

Թիվ 165.

Կոստանդնուպոլիս,
29 ապրիլի, 1915

Հայերի ձերբակալումները

Արդեն երկար ժամանակ է, ինչ կատարվում էին հայերի կալանավորումներ, սակայն դրանք դիպվածային են, մինչդեռ դրանք այժմ մեծ չափեր և որոշակի բնույթ են ստանում: Բացի այն, որ ընդամենի խիստ են չափն անցնում, այստեղ ոչ մի նորություն չկա: Անգլիական դրամը ռուսական գործակալների ընկերակցությամբ աշխատել է հայկական շարժման օգտին:

Վրացի Հասան բեյը՝ Ամմեդ փաշայի որդին, Բաթումի մոտ կազմել է մահմեդա-հայկական լեզեոն և այն տարել է թուրքերի դեմ: Նաև հայտնի Ռեժակ բեյը Բեդերխան գերդաստանից, նույնպես մասնակցում է շարժմանը: Նրա ազդեցությունը տարածվում է հիմնականում պարսկա-թուրքական սահմանային գավառների վրա՝ Բայազետից մինչև Վանի բարձրունքները: Պարսկաստանում այժմ աշխույժ աշխատանք է կատարվում երիտթուրքերի կողմից, որոնք մեծ թվով բարձրաստիճան և կրտսեր սպաներ են այնտեղ ուղարկել, որոնք մտել են պարսկական ծառայության մեջ և Ռեժակ բեյի գործունեության դեմ ուժեղ պատնեշ են ստեղծել: Էրզրումի շրջանում արդեն ամիսներ առաջ մի քանի հարյուր հայեր են ձերբակալվել և կապանքների ենթարկվել: Բրուսայում 20 օր առաջ հայ զինապարտները մինչև 45 տարեկան գորակոչվել և գորակոչվածները հեռավոր նահանգներ են ուղարկվել: Թե որքան մեծ է նրանց թվաքանակը, ստույգ հայտնի չէ, այդ թվաքանակը անցնում է մի քանի հազարից:

Կոստանդնուպոլսում և այլ վայրերում ռուսներ են հայտարարվել: Կոստանդնուպոլսում հիմնավորապես վերացրել են կասկածելի հայերին:

Անտարակոյս Անգլիան հայերին մեծ խոստումներ է տվել նրանց Թուրքիայի դեմ ուղքի հանելու համար:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4552.

№ 4

Թիվ 36

Կոստանդնուպոլիս,
29 ապրիլի, 1915

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՁԵԿՈՒՑԱԳԻՐ

ՀԱՅԵՐԻ ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ:
ԿԱՍԿԱԾԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ:

Այս շարքով սկզբին ոստիկանությունը բազմաթիվ ձերբակալություններ է կատարել հայերի, հատկապես բարձր դիրք ունեցող անձանց շրջանում:

Ձերբակալվածների ստույգ թիվը հայտնի չէ և առայժմ այդ մասին պաշտոնական որևէ տեղեկություն տալը արգելված է, պաշտոնական որոշ տվյալների համաձայն պիտի որ 180 անձ կալանավորված լինի, սակայն ընդհանրապես գտնում են, որ նախազգուշական նկատառումներով ձերբակալված հայերի թիվը շատ ավելի մեծ է: Կալանավորվել են հատկապես մտավորականները, այն է՝ բժիշկներ, դեղագործներ, լրագրողներ, այդ թվում նաև թուրքական «Մաքահ» բերքի գլխավոր խմբագիրը, և թուրքական համալսարանի քաղաքական պատմության պրոֆեսոր Տիրան Կոժոկյան էֆենդին: Բոլոր դեպքերում սակայն մարդիկ, որոնք պատկանում են հայկական տարբեր քաղաքական կուսակցություններին, առաջին հերթին Հնչակյանների (սոցիալ-դեմոկրատների) կուսակցությանը և այնուհետև դաշնակցականներին (ռադիկալներին) և ռամկավարներին (դեմոկրատներին), հայերի, որոնք այսօրինակ քաղաքական ուղղությունների արդեն վաղուց են պատկանում և յուրաքանչյուր անձնավորություն ինքնուրույն քաղաքական գործունեությամբ է աչքի ընկել և որոնք կապ ունեն արտասահմանի հայկական քաղաքական միու-

քյունների կամ կոմիտեների հետ: Կալանավորվածների մի մասը շուտով կուղարկվի դեպի մահանոցներ (Անգորա, Կոնիա), մյուսները հավանաբար ազատ կարծակվեն և որոնց դեմ ապացույցներ կան, դրանցից շատերը հեռակա կարգով ռազմական դատարանի կողմից կդատապարտվեն: Այսպես, փարիզյան Հնչակ կոմիտեի նախագահը և փոխնախագահը ռազմադատական կարգով պիտի կանչվեն դատի:

Չանգվածային ձերբակալումների կալանավորելու պատճառը պաշտոնապես ցարդ չի հրապարակված, ինչպես նաև ընդհանրապես մինչև հիմա այս ամբողջ իրադարձության մասին մամուլում չի հաղորդվել:

Վերը հիշատակված երկու առաջնորդներին դատարան կանչելը ակնարկ է այն մասին, որ նրանք «այն անձանցից են, որոնք մեղադրվում են երկրի ներքին հանգիստը խախտելու փորձ կատարելու մեջ»: Պիտի խիստ հավանական համարել, որ կառավարությունն այդ մասին գաղտնի տեղեկատվության շնորհիվ արդեն վաղուց գաղտնի հաղորդումներից տեղյակ է, որ հայերը արտասահմանում բնակվող թուրքական ընդդիմության պարագլուխների հետ կապ ունեն, որոնք եռյակ-Անտանտի ծառայության մեջ են նրանց ծրագրերին աստարելու նպատակով այստեղ և մահանոցներում ներքին խռովություն առաջացնելու միջոցով: Նրանց հեղափոխական կազմակերպությունները, որոնք ցրված են արտասահմանում (Անգլիա, Ֆրանսիա, Եվրոպա, Եգիպտոս, Ամերիկա), կարող են անարխիստական ձևով գեներու ռազմական օգտագործել, համիդյան վարչակարգի օրոք հայերը երիտթուրքերի ծառայության մեջ էին: Ազգային հայկական հեղափոխության ապարդյուն փորձերից հետո, որը (հեղափոխությունը) նախատեսում էր այսպես կոչված հայկական մահանոցներում քաղաքական ինքնավարության հաստատում, հայերն էին, որ երիտթուրքական կոմիտեի հետ իրական համաձայնության հիման վրա, հնարամիտ մահափորձը ձեռնարկեցին նախկին սուլթան Աբդուլ Համիդի դեմ՝ երիտթուրքերի միջոցների հաշվին: Ուստի և բացառված չի լինի, որ հիմա էլ հայկական կոմիտեները թուրքական ընդդիմության ծառայության մեջ գտնվեն, որպեսզի հարմար պահին եռյակ-Անտանտի հաշվին ներքին մի հեղափոխություն Կոստանդնուպոլսում և մահանոցում (ռուսական սահմանները) հրահրեն: Ոչ միայն Անգլիան էր նախկինում հայկական կոմիտեների ղեկավար շրջաններին և այժմ հատկապես Ռուսաստանն է նյութապես հավանաբար շաշլորեն, ըստ հնարավորության, աջակցում, այլև փաստ է, որ հայերը, որոնց Ռուսաստանում առաջ դաժանորեն հետապնդում

էին, այժմ քաղաքականապես նվիրված են Ռուսաստանին: Այս սկիզբ առավ հայկական բարեփոխումների հարցը անցյալ տարի կարգավորելու պահից:

Հայկական մահանոցների վարչական կամ քաղաքական բարեփոխումների հարցի ժամանակ, որը նախկինում Անգլիան էր ղեկավարում, իր վերջին փուլում Գերմանիան էր ղեկավարում (այն ժամանակ Բեռլինում կազմավորվեց Գերմանա-հայկական միություն և Գերմանիան կամենում էր Կիլիկիայի հայերին սիրաշահել), իր ազդեցության տակ առնել և հատկապես Ռուսաստանն էր օգտագործում այդ հանգամանքը, Ռուսաստանը կարողացավ, իր համաձայնությունը տալով չորս տոկոսով մաքսատուրքը բարձրացնելու վերաբերյալ, պետական մենաշնորհ մտցնելով և այլն իր բոլոր պայմանները անցկացնել, հատկապես բարեփոխումները Տրապիզոնի վիլայեթի վրա նույնպես տարածել, ոստիկանության և ժանդարմերիայի ծառայողների, ինչպես և հասարակական բոլոր ծառայություններում ծառայողների քվաքանակի կեսը հայկական տարրերից ընդգրկել, հատկապես այն շրջաններում, որտեղ նրանք ամբողջ բնակչության սուկ 10-30% են կազմում: Այդօրինակ բարեփոխումների իրականացումը, շնորհիվ որի հայերը հուսով էին հայացնել անատոլիական յոթ վիլայեթներ, հայերից Ռուսաստանի երկրպագուներ ստեղծեց Թուրքիայում և դրանով է բացատրվում, թե ինչու պատերազմի սկզբից հայերը այդքան շատ են Ռուսաստանով հրապարկվում: Եվրոպական պատերազմը վերացրեց հայկական բարեփոխումները: Ուստի հայերը ցանկանում են, որ Ռուսաստանը շահի պատերազմը, որպեսզի դրանով իսկ ջերմորեն բաղձալի բարեփոխումները, որոնք այդչափ աղաղակող անարդարություն էին Թուրքիայի և մյուս ազգաբնակչության հանդեպ, այնուհետև հանգիստ կարողանան իրականացնել կամ ընդարձակել:

Այստեղից կարելի է նկատել, որ թուրքական պատերազմը սկսվելու ժամանակից ի վեր ռուսական բանակում բազմաթիվ հայ կամավորներ են մարտնչում ոչ միայն Ռուսահայաստանից, այլև Տաճկահայաստանից: Ռուսական բանակի Ալաշկերտի դաշտավայրով առաջխաղացումը ամենայն հավանականությամբ ծառայելու է որպես ազդանշան Վանի վիլայեթում հայերի ապստամբության համար: Այդ գիտեին թուրքերը, ուստի և նրանք շատ խիստ զանգվածային միջոցներ են ձեռնարկել:

Թե ինչ է վերջերս Վանում տեղի ունեցել և այդ վիլայեթում խռովությունների մասին պտտվող լուրերին ինչ չափով հավատարի, դժվար է ասել: Մոտ ժամանակներս հայտնի դարձավ Ձեյթունի լեռնաշխար-

հում՝ Կիլիկիայում, հայկական հաճախակի ապստամբության օջախում ապստամբության մի փորձի մասին: Այնտեղ հայերը հրաժարվել են զինվորական ծառայությունից և այնտեղ ուղարկված ժանդարմներին գործուն դիմադրություն են ցույց տվել, որի ընթացքում մայրի աստիճանով ժանդարմերիայի պարետը սպանվել է:

Բավականին թվով զորքեր են ուղարկվել այդ վայրը և փորձն իրեն իսկ սաղմում պիտի խեղդված լինի: Այս իրադարձությունը հայերի քաղաքական Անտանտամետ խարդավանքների մասին ոստիկանության այլ տեղեկությունների հետ կապված պիտի որ մեծապես նպաստենին հայերին զանգվածաբար կալանավորումների ենթարկելու գործին:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4553-4555:

№ 5

Թիվ 1416

ՀԵՌԱԳԻՐ
ԿՈՄՍ ՊԱԼԱՎԻՉԻՆԻՆՆ

Պերա, 1 մայիսի 1915

Թիվ 347

Ծածկագիր

Գաղտնի.

Հայերը.

Վաշինգտոնում ռուսական դեսպանը ամերիկյան կառավարությանը առաջարկել է հանձնարարել պարոն Մորգենթաուին թուրքական կառավարությանը լուրջ բողոք ներկայացնել վերջերս Հայաստանում տեղի ունեցած կոտորածների առնչությամբ: Ռուսական ներկայացուցիչը ավելացրել է, որ Ռուսաստանը շատ ավելի մահմեդական հպատակներ ունի, քան Թուրքիան՝ քրիստոնյաներ, իր մահմեդական հպատակներին լավ է վերաբերվում և Թուրքիայից ակրնկալում է, որ իր քրիստոնյա հպատակների նկատմամբ Թուրքիան նույնը կանի:

Ուստի և ամերիկյան կառավարությունը հանձնարարել է պարոն Մորգենթաուին այստեղի ազդեցիկ պաշտոնատեղերում խոսել այն իրողության մասին, որն, ինչպես ինձ ամերիկյան դեսպանն ասաց, մեծապես հուզել է ամերիկյան հասարակական կարծիքը:

Այն տեղեկությունների համաձայն, որոնք ստացել է պարոն

Մորգենթաուն, Վանի շրջանում բազմահազար հայեր են սպանվել:

Դրանից զատ հայկական գյուղերի բնակիչները վտարվել են, կանայք և երեխաներն արտաքսվել են և իրենց ամուսիններից բաժանվել:

Ինձ երեկվա թիվ 32/D գեկուցագրում ես անդրադարձել եմ այդ խնդրին և այդ առթիվ արտահայտվել եմ, որ ես ամեն մի միջամտությունից խուսափում եմ: Քաղաքական այն նշանակության կապակցությամբ, որ այժմ ստանում է այդ հարցը, կարծում եմ ես առաջին իսկ հարմար առիթով բարեկամաբար պիտի հրավիրեմ թուրքական պետական այրերի ուշադրությունն այն արձագանքի վրա, որ կարող են ամենուրեք առաջացնել Թուրքիայում քրիստոնյաների դեմ անմարդկային գործողությունները, դրանով իսկ մեր հակառակորդներին մի նոր առիթ կտրվի, ամբողջ ուժով Թուրքիայի դեմ հանդես գալու:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4556-4556^A:

№ 6

Թիվ 174.

Կոստանդնուպոլիս,
5 մայիսի, 1915

Հայկական շարժումը

Մինչև այժմ մոտավորապես 500 ձերբակալություններ են կատարվել հայ մտավորականների շրջանում: Կալանավորվածների շարքերում է գտնվում նաև «Սաբահ»-ի գլխավոր խմբագիր և թուրքական բարձրագույն դպրոցի պրոֆեսոր Քելեքյանը, որը 1895-1896 թթ. հեղափոխական պատրիարք Իզմիրլյանի քարտուղարն է եղել, այնուհետև ներման է արժանացել և վերջին տարիներին թուրքերի շրջանում հարգարժան դիրքի է հասել: Այդուհանդերձ այն դիտվում է որպես հայերի ակնավոր և վտանգավոր ղեկավար:

Թուրքական կողմը շարունակում է պնդել, որ հայերը այստեղ և նահանգում անգլիական ոսկուց շլացած սուլթանի գահակալության տոնի ժամանակ խռովություն պիտի սարքեին, որպեսզի դեպի Կոստանդնուպոլիս և նահանգ շատ զորքեր բերվեն Բոսֆորի և Դարդանելի մոտերքում գտնվող բանակներից և այդ միջոցով ցամաք ելնելու ռազմական գործողությունը հաջողեցնեն:

Անգլիական դեսպանության նախկին առաջին քարզման Ֆիտցմաուրիցը, որը ներկայումս Սոֆիայում է գտնվում, պիտի որ

այս ծրագրերի մշակմանը մասնակցած լինի: Այդ մեղադրանքների մեջ տեղ են գտել հավանաբար չափազանցություններ, որպես, այսպես կոչված, հայկական խռովություններ, որոնք տեղի ունեցան էրզերումում, Վանում և Կիլիկիայի այլ վայրերում և թուրքական կոտորածներով ուղեկցվեցին, առաջացնելու համար:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4561:

№ 7

*Ավստրո-հունգարական
զինվորական կորդրի
զեկուցագրի քաղվածքից*

*Կոստանդնուպոլիս,
19 մայիսի, 1915*

Թիվ 529

Հայկական հարցը ևս պիտի կառավարության համար մի մեծ վտանգ դառնա: Հայ ազգաբնակչության մեծ մասին արսորելու պատճառով ասիական Թուրքիայի մի ամբողջ տարածք գրկվել է իր արդյունագործող բնակչությունից և տնտեսական կյանքը այնտեղ կաթվածահար է եղել:

Հայերին արսորելու ժամանակ անմարդկային գործելակերպը դրդել է ամերիկյան, գերմանական և ավստրո-հունգարական դեսպաններին Բարձր Դռանը բողոք ներկայացնել: Թուրքական կառավարությունը այս արսորը ձեռնարկել է ոչ թե հայկական ապրտամբությունը ճնշելու, այլ Մակեդոնիան և Լիբիան կորցնելու հետևանքով հացից զրկված անթիվ թուրք պաշտոնյաներին ապահովելու համար:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4727- 4728:

№ 8

*Ավստրո-հունգարական
կ. և ք. զլխավոր
հյուպատոսություն
Թիվ 30/P.
Խուզարկությունները
հայերի տներում*

*Չմյուռնիա,
21 մայիսի, 1915*

*Նորին գերազանցություն կ. և ք. արքունի և արտաքին
գործերի պարոն մինիստր, բարոն Մտեփան Բուրիանին
Վիեննա*

Հայերի տներում խուզարկությունները, որոնց մասին երեք շաբաթ առաջ զեկուցել եմ, շարունակվում են եռանդուն կերպով: Բազմաթիվ կալանավորվածներից մինչև հիմա մոտ 50 անձ է կալանքի մեջ թողնվել, դրանց թվում «Հնչակի», ինչպես և «Դաշնակցության» այստեղի հայտնի անդամներ՝ Թոմաս Բոյաջյանը (դպրոցի տնօրեն), Բահարբեյան Վահանը (վաճառական), Արզնյանը և Սեդրակ Թոքաջյանները:

Բացի Թիլիկիկում հայտնաբերված ռումբից, փաստաբան Բարսեղ Գուրենկյանի բնակված տան նկուղում հայտնաբերել են վեց ձեռքի նոնակ: Այն բանից հետո, երբ վերջինս, ինչպես և նախաքննությունն է հաստատում, դժոխային մեքենայի գոյության մասին չի զիտեցել, կասկածը ընկնում է տարիներ շարունակ այդ տանը գետեղված հայկական ակումբի վրա:

Հայկական կողմը պնդում է, որ մեծ մասամբ անմեղ բանտերում գտնվող իրենց դավանակիցները ենթարկվում են դաժան կտտանքների, այդ իսկ պատճառով բազում դեպքերում ոչ ճիշտ խոստովանություններ են անում: Կալանավորվածներից ոմանք հարցաքննության ժամանակ հայտարարել են, որ տեղի հայկական ակումբը վերոհիշյալ ռումբերը իր ժամանակին (1909) հեղափոխության կապակցությամբ Միություն և առաջադիմություն կոմիտեից է ստացել: Այդ ցուցմունքները սակայն չեն համապատասխանում ճշմարտությանը, այն բանից հետո, երբ զենքալ-նահանգապետը, որը որոշ ժամանակ առաջ Կոստանդնուպոլսից հանձնարարություն էր ստացել տեղի հայերին աչալուրջ հետևել, մոտ մեկ ամիս առաջ իր մոտ է կանչել կոմիտեի բոլոր հայտնի անդամներին և նրանց մեկ շաբաթվա ընթացքում առանց բացառության մինչև այժմ տակավին իրենց ձեռքին գտնվող ռումբերը և այլն ոչնչացնելու վերաբերյալ զգուշացրել է: Հիշյալ հայ կոմիտեականները ժամկետն անցնելուց հետո հանդիսավոր կերպով հայտարարություն են արել, որ միության տրամադրության տակ եղած բոլոր պայթուցիկ միջոցները (նյութերը) և զինամթերքը ոչնչացվել են:

Հայկական «Հնչակ», «Դաշնակցություն», այնուհետև անջատողական «Վերակազմյալ հնչակյան» կոմիտեների նպատակները և էությունը, ինչպես և նրանց դիրքորոշումը այսօրվա Օսմանյան կայսրությունում պիտի որ բավականաչափ հայտնի լինի: Չմյուռնիայում

նրանք, համենայն դեպս վերջին տարիներին, ոչ մի մեծ դեր չեն ունեցել:

Այստեղի քաջատեղյակ մի հայ փաստաբանի տվյալների համաձայն իր ժամանակներին Ձմյուռնիայում և շրջակայքում կար մոտ 30 «հնչակյան» և հազիվ 600 «Դաշնակցության» անդամներից բաղկացած հանրություն, որ Այդին վիլայեթում 18 000 հայ բնակչության համար, ինչպես վերոհիշյալն է կարծում, շատ փոքր տոկոս կազմում: Այդ կոմիտեների անդամների մեծագույն մասը բնակվում է Ձմյուռնիայում (նահանգում հազիվ 40-50 Դաշնակցության անդամ) և հավաքագրում են մեծ մասամբ կրթություն չունեցող առևտրական գործակատարների, մանր առևտրականների և այլ խավերից:

Համանման զեկուցում են այսօր ճիշտ նույն ժամանակ ուղարկել են Կոստանդնուպոլիս:

*Կ. և թ. հյուպատոս
Գերենտ
(ստորագրություն)*

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4574-4575:

№ 9

*Ավստրո-հունգարական
կ. և թ. գլխավոր
հյուպատոսություն
Տրապիզոն
ZL 30*

*Տրապիզոն,
31 մայիսի, 1915*

P.

Նյութը. Հայկական շարժումները Մամսունում.

*Նորին գերագանցություն կ. և թ. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ բարոն Ստեփան Բուրիանին*

Վիեննա

Մամսունում ձերբակալված (մոտ 40) հայերից մեկը շուտով բանտ նետելուց հետո վախճանվել է, ասում են դաժան կտտանքների հետևանքով, բանտում: Աճյունը գիշերով հողին է հանձնվել, ընտանիքի կողմից պահանջված դիակերճումը պաշտոնապես մերժվել է: Գերեզմանը հսկվելու է ոստիկանության կողմից և ժամանակ առ ժամանակ ողողվելու է կրաջրով:

Տնային խուզարկությունների ժամանակ զենք և ձեռքի ճոճակներ, ինչպես նաև մի բնդանոթ է հայտնաբերվել:

Ձերբակալվածները նախապես դեպի Բաֆրա են տարվել:

Համանման զեկուցում ուղարկել են նա Կոստանդնուպոլիս:

*Կ. և թ. հյուպատոս
(ստորագրություն)*

*Փոստի միջոցով
(կ. և թ. դեսպանին)*

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4577:

№ 10

*23 հունիսի 1915
Ավստրո-հունգարական
կ. և թ. գլխավոր
հյուպատոսություն
Կոստանդնուպոլիս
Թիվ 47/P. E.
Բազմաթիվ հայերի
մահապատիժը*

*Կոստանդնուպոլիս,
18 հունիսի, 1915*

*Նորին գերագանցություն կ. և թ. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ բարոն Բուրիանին*

Վերջին ժամանակ բուն Կոստանդնուպոլսում և նահանգներում բազմաթիվ հայեր ռազմական դատարանի կողմից դատապարտվել են մահապատժի կախաղան հանելու միջոցով, և սպանվել են: Երկու օր առաջ այստեղի ռազմական մինիստրությունում 20 հայեր ենթարկվեցին նման մահապատժի: Կառավարությունը մի հաղորդագրություն է հրապարակել, որը վկայում է, որ մահապատժի ենթարկվածները իրենց մեղավոր էին ճանաչել հեղաշրջում իրականացնելու շարժման մասնակիցներ լինելու և կեղծ լուրեր տարածելու մեջ:

Հայերի դեմ այդ խիստ միջոցառումներն ակնհայտորեն կապված են Հայաստանում հեղափոխական իրադարձությունների և հատկապես ռուսների դեպի Վան կատարած առաջխաղացման հետ: Առաջիկայում շարունակվելու են բազմաթիվ ձերբակալությունները Փոքր Ասիայում:

Քրիստոնյա ազգաբնակչության վրա թուրքական կառավարության այս դաժան գործելակերպը, հասկանալի է ինքնին, շատ վատ տպավորություն է թողնում, բուն երիտթուրքական շրջաններում էլ այս զանգվածային ձերբակալությունները և մահապատիժները, որոնք իրականացվում են Թալեաթ բեյի նախաձեռնությամբ, այն որպես անհաջող քաղաքականություն է համարվում:

Ամերիկյան դեսպանը վերջերս Անտանտի երեք կառավարությունների խնդրանքով հանձնարարություն է ստացել Բարձր Դռանը հայտնել, որ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը թուրք իշխանություններին անձամբ պատասխանատու են համարում հայերի դեմ ձեռնարկած միջոցառումների համար: Մեծ վեզիրն, ինչպես ես տեղեկացա, պարոն Մորզենթաուի այս հաղորդման առթիվ խիստ վրդովված էր և այդ նրանից ամենևին չի թաքցնելու:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4591-4592:

№ 11

*Ավստրո-հունգարական
կ. և ք. դեսպանություն
Կոստանդնուպոլիս*

*Կոստանդնուպոլիս,
24 հունիսի, 1915*

*Թիվ 49/Ք.-Է.
Հայերի մահապատիժները.
1915թ. հունիսի 18-ի*

Թիվ 47/Ք.-Է զեկուցագրի առթիվ

*Նորին գերագանություն կ. և ք. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ բարոն Բուրիանին*

Իմ համապատասխան զեկուցագրում ես հիշատակել էի, որ այստեղ տակավին շարունակվելու են հայերին մահապատիժ ենթարկելու դատավճիռների ունկնդրումներ պետական դավաճանության պատճառով: Ինչպես ես իմ ամերիկյան գործընկերներից տեղեկացա, այժմ Էնվեր փաշան նրանց դեմ նորերս արտահայտվել է այն իմաստով, որ դա այդպես չէ: Միաժամանակ նա շեշտել է, որ կառավարությունը հայ ազգի դեմ որպես արդպիսին ոչինչ չունի, այլ տեղի ունեցած մահապատիժները միայն հայկական զաղտնի կոմի-

տեներին և այն հայերին բաժին ընկան, որոնք Ռուսաստանի հետ դաշնակցել էին, կառավարությունը դրանով մի սարսափեցնող դաս էր կամենում տալ: Մյուս կողմից ես լսում եմ, որ մահանգներում հայերի սպանությունները շարունակվում են, և որ կառավարությունը համապատասխան դատավարություններում արտակարգ խստություն է ցուցաբերում:

Իմ կարծիքով այդ տեղի է ունենում մասամբ նաև այն պատճառով, որ դեկի մոտ գտնվող թուրքական պետական այրերը հայերի կողմից իրենց անձի դեմ ուղղված մահափորձից երկյուղ են կրում: Դա վկայող տարրեր նախանշաններ կան: Այդ առումով բնորոշ է հետևյալ դեպքը: Երեկ երկու սպա փնտրում էին զինվորական լիազորին, զեներալ Պոմյանկովսկուն, որպեսզի նրան Էնվեր փաշայի հանձնարարությամբ ցույց տան, որ թարգմանչի օգնական Ա. Լազարը (ազգությամբ հայ) ծառայության վայրում հայերի համար զենքեր է թաքցրել և միաժամանակ խնդրում էին իրենց իմ կողմից թույլատվություն արտոնվի պաշտոնավայրում մասնակի պրպտումներ կատարելու համար: Ես կտրականապես հրաժարվեցի բնականաբար այդ թույլատվությունը տալ, սպաներին սակայն բացատրեցի գործի հանգամանքները, որի համար նրանք ներողություն խնդրեցին և հենացան: Բանի բուն էությունն այն է, որ Լազարը զաղութի անդամներից նրանց խնդրանքով վերցրել է զարդագեղեցիկ պաշտոնապես պահպանելու համար: Այդ միջոցառմամբ այստեղի զերատեսչության կարծիքով մասնավոր անձանց կողմից զենք ունենալու վերաբերյալ ոստիկանության հրապարակված որոշումն է շրջանցվել, դրանից զատ, նաև զաղութի անդամների համար տհաճություններն են կանխվել:

Ես հիշատակեցի այս միջադեպը միայն այն պատճառով, որ այդ այն իրողության նախանշանն է, թե ինչպես է այստեղ ներկայումս լրտեսությունը ծաղկում և այստեղի դեկավար անձինք ինչպիսի վախ են տածում մահափորձի հանդեպ:

Ոչ մի կասկածի ենթակա չէ, որ կառավարության գործելակերպը հայերի նկատմամբ սխալ էր: Վերջիններս թուրքերի նկատմամբ ընդհանրապես վաղուց ի վեր թշնամաբար էին տրամադրված, սակայն նրանք նաև ռուսների բարեկամը չէին, բանգի շնորհիվ իրենց խիստ ազատամիտ միտումներին Ռուսաստանի հանդեպ նվազ նախասիրություն կարող էին ունենալ: Թուրքական սնանկ քաղաքականության հետևանքով սակայն հայերը երկու չարիքի միջև գտվելով հարկադրված են նվազագույնն ընտրել, ուղիղ ռուսների ձեռքը ընկան: Ես համոզված եմ, որ տեղի հայ առաքելական եկեղեցու

պատրիարքը Ռուսաստանի հետ մշտապես շփումներ ունի, և որ նա այժմ, վերջին իրադարձություններից հետո, իր ամբողջ կղերականությամբ հանդերձ ավելի քան համակրում է Ռուսաստանին: Այստեղի կառավարության գործելակերպի հետևանքով, թվում է թե հայկական հարցը բոլոր դեպքերում այնպիսի փուլ է թևակոխել, որն իրոք թուրքերի համար վտանգավոր կարող է դառնալ, հատկապես եթե ռուսները շարունակեն առաջխաղացումը Հայաստանում, որի դեպքում հայերը այստեղ անվերապահորեն նրանց կմիանան: Ինձ թվում է ընդհանրապես բացառված չէ, որ եթե իրադրությունն այստեղ որևէ պատճառով բարենպաստ զարգացում ստանա, բուն մայրաքաղաքում հանկարծ հայկական ապստամբություն կարող է բռնկվել:

Կ. և թ. դեսպան

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4595-4598:

№ 12

Ավստրո-հունգարական
Կ. և թ. դեսպանություն
Կոստանդնուպոլիս
50 E.

Կոստանդնուպոլիս,
27 հունիսի, 1915

Թիվ —
P.

Հայերի արտաքսումները
Տրապիզոնից
1915թ. հունիսի 24-ի

49 F

Թիվ — զեկուցագրի
P.

առթիվ
Հավելված 2

Նորին գերագանցություն Կ. և թ. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ բարոն Մտեփան Բուրիանին

Հենց նոր Տրապիզոնից ստացվել է երկու ծածկագիր իրար հետ աղերսվող հեռագիր, որոնք այնտեղի հայերի ճակատագիրը շատ տխուր լույսի ներքո են ներկայացնում: Սակայն ես այլ տեղերից էլ եմ լսել, որ իր հայրենիքից բռնագաղթի ենթարկված հայ ազ-

զաբնակչությունը ոչ միայն մեծ թշվառություն է կրում, այլև ամբողջապես ոչնչացման է ենթարկվում նրանց դարանակալ սպասող թուրք հրոսակախնդրների կողմից:

Այս պարագաներում իմ զեկուցած դատողություններին հակառակ ես փորձելու եմ, բարեկամական ձևով Թալեաթ բեյի վրա ներագդել և ակնհայտորեն ապացուցել, որ Թուրքիան նմանօրինակ գործելակերպով ինքն իրեն է վնասում և նա իր թշնամիների կողմից առաջադրված մեղադրանքներն է արդարացնում:

Կ. և թ. դեսպան
(ստորագրություն)

Հ. Գ. Այս զեկուցագիրը պատրաստելուց հետո ես տեսա բարոն Վանգենհայմին, որն ինձ ասաց, որ ինքն այսօր առիթ է ունեցել Մեծ վեզիրի հետ վերը նշված ոգով զրուցելու և որ վերջինս իմ գերմանացի գործընկերոջ առաջադրած փաստարկները որպես ճշմարիտ է ընդունել:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4608-4609:

№ 13

50 E
1915թ. հունիսի 27-ի թիվ — զեկուցագրի I հավելված,
P. Կոստանդնուպոլիս

Տրապիզոնի Կ. և թ. գլխավոր հյուպատոսի 1915թ. հունիսի 15-ին
Կ. և թ. դեսպանին ուղարկած հեռագրի պատճենը.

Հայ կաթոլիկական տեղապահը արտասվելով խնդրում էր ինձ, նորից իր համայնքի համար միջնորդություն անելու շուրջ: Այսօրվա կարգադրության համաձայն բոլոր հայերը, բացառյալ հիվանդներից, հինգ օրվա ընթացքում պիտի լքեն վիլայեթը և երկրի խորքը՝ պաշտոնապես որոշված վայրերում վերաբնակվեն, տալավոությունը սրտակեղեքիչ է:

Երկրի խորքում՝ Սողրակեր Հիսարում հայկական կոտորածներ են տեղի ունենում:

50 E
1915թ. հունիսի 27-ի թիվ — զեկուցագրի II հավելված
P.

Տրապիզոնի կ. և ք. գլխավոր հյուպատոսի 1915թ. հունիսի 26-ը
թվակիր կ. և ք. ղեսպանին ուղարկած հեռագրի պատճենը.

Այստեղի հայերը պիտի ղեպի Մոսուլ տարվեն: Այս ճակատագրական միջոցառման առնչությամբ, որը ոչ մի կապ չունի այստեղի հայերի մեղավորության հետ, ես իմ պարտքը համարեցի, այդ գործելակերպի քաղաքական ծանր ու նաև առաջ եկող տնտեսական հետևանքները, բռնագաղթի ենթարկվածների, այդ թվում բազում կանանց և երեխաների, մեծամասնության բացահայտ մահը նպատակադրված մատնանշել: Թերևս այնուամենայնիվ հնարավոր է, վերջին պահին մեղմացում ձեռք բերել և դաժան միջոցառումները միայն տղամարդկանց վրա տարածելով սահմանափակվել, քերևս հնարավոր կլիներ հայերին վիլայեթի խորքը բռնագաղթեցնել: Դեպի Մոսուլ մեծ հեռավորության օրևանի և պարենավորման բացակայությամբ վարակված ճանապարհահատվածներով հավասար է մահվան դատապարտելուն:

Դեպի Էրզրում ուղևորվելիս հայ եպիսկոպոսի մահվան և նախանցյալ երեկոյան առագաստանավով փոխադրված հայերի կործանման մասին լուրերը զրի եմ առել հավելվածում:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4611-4612:

№ 14

7 հուլիսի, 1915
Ավստրո-հունգարական
կ. և ք. ղեսպանություն

14 հուլիսի, 1915
Կոստանդնուպոլիս,

Կոստանդնուպոլիս
51 E

1 հուլիսի, 1915

Թիվ —
P.

Հայերի ղեպի Ներքին
Անատոլիա արտորումը.
1915թ. հունիսի 27-ի

50 C.
Թիվ — զեկուցագրի
P.
առթիվ

Նորին զերազանցություն կ. և ք. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ քարոն Մտեփան Բուրիանին

Ինչպես ես առիթ եմ ունեցել իմ վերը նշված զեկուցագրերում հայտնել, ես մտադրվել էի բարեկամաբար օգտագործել պատկառելի գործոններ, որ Սև ծովի ավազանի շրջաններից հայ ընտանիքները ղեպի երկրի խորքերը արտաքսելու ժամանակ խուսափեն ավելորդ դաժանություններից: Դրանից հետո ես առիթ ունեցա Մեծ վեզիրի հետ այդ առնչությամբ զրուցել: Այս դեպքում ես շեշտեցի, որ նույնիսկ որոշ հայեր պետության հանդեպ թշնամական նկրտումներում մեղավոր կամ ծայր աստիճան կասկածելի կարող էին լինել, բոլոր այդ դեպքերում չպիտի վերաբերվեր բոլորին, որոնք բնակվում են այս շրջանում, այնպես որ վերջիններիս՝ առանց խտրության, նաև կանանց և երեխաների վերաբերյալ ղեպի Մոսուլի շրջան կատարվող բռնագաղթի կարգադրված միջոցառումները արտակարգ կարճ ժամկետի ընթացքում հազիվ թե արդարացի թվա: Ծանր կացությունը, այն եղանակը և ձևը, թե ինչպես է այդ միջոցառումը իրականացվելու, այդ ամենը գրեթե հավասար է մահվան դատավճռի նրանց դեմ, ում վերաբերվում է, այս հանգամանքին սակայն իրավասու մարմիններն անհրազեկ չէին կարող լինել, դեռ ավելին վերոհիշյալը ներկայացվում է հասարակայնությանը ուրույն, Թուրքիայի համար իրոք անհարկի լույսի ներքո, մի պարագա, որը միայն կարող է ջուր լցնել թշնամու ջրադաշին:

Մաիդ Հալիմ փաշան այնուհետև առարկեց, որ հայերին չեն կարող՝ ձեռնարկված փորձառությունից հետո, Սև ծովի առափնյա շրջաններում բողնել, ի վերջո ինձ հասկանալ տվեց, որ մարդիկ բոլոր ղեպքերում ոչ այնքան հեռու, ինչպես այդ մտադրությունն ունեին, գաղթեցված կլինեն:

Բարոն Վանզենհայնը իր բողոքը այս նյութի առթիվ, ինչպես նա ինձ ասաց, նույն ոգով է փաստարկել:

Կ. և ք. ղեսպան
(ստորագրություն)

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4615-4617:

51 E

1915թ. հուլիսի 1-ը թվակիր թիվ — գեկուցագրի I հավելված,
P. Կոստանդնուպոլիս
Տրապիզոնում կ. և թ. գլխավոր հյուպատոսության 1915թ. հունիսի 29-ը
թվակիր, թիվ 100 կ. և թ. ղեկավարություն ուղարկված հեռագրի պատճենը.

Վստահելի տեղից ես իմացա, որ երիտթուրքական կոմիտեն
թույլատրել է մի քանի օր առաջ վրացիների շրջանից հայկական
կոտորածների մասնակիցներ հավաքագրել, որը չի կայացել վրացա-
կան կոմիտեի առարկության շնորհիվ. այսօր սարսափելի տեսա-
րաններ են տիրում փողոցներում, եկեղեցիներում, հյուպատոսարան-
ներում: Տեղահանումն ուրբաթ օրն է սկսվելու:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4618:

51 E

1915թ. հուլիսի 1-ը թվակիր, թիվ — գեկուցագրի II հավելված,
P.
Տրապիզոնում կ. և թ. գլխավոր հյուպատոսության 1915թ. հունիսի 29-ը
թվակիր, թիվ 101 հեռագրի պատճենը.

Այսօրվա սահմոկեցուցիչ տեսարանները, հազարավոր ան-
մեղ կանանց, երեխաների, ծերերի մահացու վախը նկատի առնելով,
խնդրում եմ ես Չերդ գերագանցությանը բոլոր գործընկերների հա-
մաձայնությամբ այստեղի հունական մետրոպոլիտի և նրա համայն-
քի քախանձագին խնդրանքը՝ Տրապիզոնի վիլայեթի և Մամսուն
սանջակի հայերի դեմ ձեռնարկված միջոցառումները մեղմելու մա-
սին հայտարարություն ձեռք բերելու նպատակով մի անգամ ևս հաս-
տատակամղորեն վճռորոշ պաշտոնատեղերում ներգործելու ցանկու-
թյուն դրսևորել, արդեն ուրբաթ օրը սկսվող արտաքսումի հետաձգու-
մը հնարավորություն կնձեռի հետագա քանակցությունների համար:

Բավ է անթիվ զոհերը երկրի ներսում, - «գեթ մի զավակը իմ
փրկեք», - ասում էր այսօր մի հայ հարուստ կին:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4619:

14 հուլիսի, 1915
Ավստրո-հունգարական
կ. և թ. ղեկավարություն
Կոստանդնուպոլիս
54 E.

Կոստանդնուպոլիս,
8 հուլիսի, 1915

Թիվ —
P.
Հայերի արտքումը.

1915թ. հունիսի 27-ը
51 E
թվակիր, թիվ —
P.
գեկուցագրի առթիվ

Նորին գերագանցություն կ. և թ. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ քարոն Ստեփան Բորիանին

Երբ ես վերջերս հօգուտ հայերի բարեկամաբար դիմեցի Մեծ
վազիրին, նա ինձ հասկանալ տվեց, որ արտաքսման և բռնագաղթեց-
ման ժամանակ անհարկի դաժանություններից կլսուսափեն:

Այն ժամանակվանից ի վեր ես ի միջի այլոց լսում եմ, որ դա
ոչ միայն այդպես չէ, որ հատկապես հայերի նկատմամբ ուղղակի
դաժանորեն են վերաբերվում, այն ժամանակ նրանք ուղղակի պատ-
ժիչ գործողությունների են ենթարկվում, որպեսզի նրանցից խոստո-
վանություն կորզեն գաղտնի կապերի, ռումբերի քաքսատեղերի և
այլնի մասին:

Իմ ամերիկյան գործընկերն ասաց ինձ, որ այդ առթիվ իրեն
սահմոկեցուցիչ իրողություններ են հայտնի դարձել: Մարդիկ, ինչ-
պես Արդուլ Համիդի ժամանակներում, կտանքների են ենթարկ-
վում: Ուստի և նա այլևայլ կերպ փորձել է ներագդել այստեղի պե-
տական այրերի վրա և պատկառելի գործոններով ուշադրություն է
հրավիրում այն վատ տպավորության վրա, որ այդ իրողություններն
ինչպես Ամերիկայում, անպես էլ Եվրոպայում պիտի առաջացնեն,
սակայն այս ամենը զուր եղավ: Թալեաթ բեյն այսօր նյութի շուրջ
ընդհանրապես այլևս չի կամենում խոսել, այնպես որ պարոն Մոր-

գենթաուն համապատասխան բանակցություններից ամբողջապես կամենում է հրաժարվել:

Թուրքական կողմը չի կարող հայերի դեմ գործած դաժանությունները երկար ժամանակով թաքցնել և հայտնի կդառնան հատկապես ի վնաս թուրքական գործին նաև արտասահմանում: Իրոք բուլղարական և ռումինական մամուլն արդեն քեմալ բարձրացրել է և հայանպաստ ոգով է գործում: Ցավոք այստեղի իշխանավորները հայերի նկատմամբ իրենց գործելակերպի անարդարացի լինելու մեջ չեն համոզվում և վտանգը մոտ է, որ սրանց այս իրողության հետ առնչվող համառ պատկերացումները սոսկ վնասելու են գործին: Այստեղ ակնհայտորեն հանդգնում են հասնել այն իրողությանը, որ կասկածելի դարձած հայկական տարրը բոլոր դեպքերում մեկընդմիջտ վնասագերծվի:

Կ. և ք. դեսպան

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4620-4622:

№ 18

Թիվ 249.

*Կոստանդնուպոլիս,
10 հուլիսի, 1915*

ՀԱՅԵՐԻ ՀԵՏԱՊՆՈՒՄՆԵՐԸ

Որպես վրեժ այն բանի համար, որ օսմանահպատակ բազմաթիվ հայեր ծառայում են ռուսական Կովկասյան բանակում, որոնք Վանի շրջանը ռուսների կողմից զրավելու ժամանակ ապստամբական շարժում առաջացրին, նաև այսպես կոչված հայկական ժամանակավոր կառավարություն կազմեցին թուրքահայ նախկին պատգամավոր Բաստիրմաջյանի գլխավորությամբ, սկսեցին այժմ թուրքերը հայերի արտաքսումը Թուրքիայից վերջիններիս կողմից բնակեցված շատ վայրերից: Բազմահազար հայեր, նաև խաղաղ բնակչությունը, արդեն Սև ծովի առափնյա վայրերից ուղարկվել են դեպի Ներքին Անատոլիա, մեծ մասամբ դեպի Մոսուլ, ընդ որում կանայք և երեխաները իրենց ամուսիններից և ծնողներից բաժանվել են: Նաև այստեղի հայերը խստագույնս հսկվում են և ոստիկանությունը մշտապես հետամտում է թաքցրած գեներ ու ուժանակ հայտնաբերելու, որով տվյալ պահին հայերը խռովություններով Անտանտին օգ-

նած պիտի լինեն: Մինչև հիմա կատարվող հետապնդումների վրա այսուհետև ավելանում է նաև այսպես կոչված հավատափոխությունն՝ իսլամականություն ընդունելը: Ինչպես ասում են, այստեղի որոշ վաճառականներ իրենց հարազատներից հեռագրեր են ստացել, որոնցով վերոհիշյալ անձինք տեղեկություն են տալիս, որ իրենք աստծո ճշմարիտ հավատն են ընդունել, որ իրենց հարազատներին հանձնարարում էին նույնը անել:

Թուրքերի նկարագրված գործելակերպը նաև շատ բացասաբար է անդրադառնում գերմանացիների վրա, որոնք ասում են, որ այս ամենը գերմանացիների հանդուրժողությամբ պատահեց, որոնք նույնիսկ ամբողջ կառավարությունն իրենց ձեռքին պիտի ունենային:

Անհավատալի լուրերի համաձայն Անատոլիայի հույների շրջանում ևս հավատափոխության մի շարժում է ծայր առել:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4623:

№ 19

*Կ. և ք. գլխավոր շտաբի
տեղեկատու բյուրո*

*Կոստանդնուպոլիս,
10 հուլիսի, 1915*

Քաղվածքներ գաղտնի զեկուցագրերից

Հայերի հետապնդումը Թուրքիայում

Ի հատուցում Վանի շրջանում հայերի ապստամբական շարժման, կայսրության հյուսիսային և արևմտյան մարզերից հայ ազգաբնակչությունը արքարվել է: Նաև Կոստանդնուպոլսում բնակվող հայերին են խիստ հսկողության տակ վերցրել:

Այդ հետապնդումների վրա վերջին ժամանակ ավելացել են հայերի հավատափոխությունները՝ իսլամի ընդունումը: Հավատափոխություններն ընթացքի մեջ են նաև Անատոլիայի հույն բնակչության շրջանում:

Թուրքերի վարվելակերպը հայերի շրջանում նաև թշնամական տրամադրություն է ստեղծում գերմանացիների հանդեպ, որովհետև վերջիններս չեն խանգարում թուրքական բռնարարքներին:

*Վիեննա 21 հուլիսի, 1915
(ստորագրություն)*

Անիք. Ա. և Բ.
բանակի գլխավոր
հրամանատարություն
Թիվ 11402

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4636:

№ 20

Ա. և Բ. ռազմական կցորդի զեկուցագրերից քաղվածքներ.
Թիվ 428

Կոստանդնուպոլիս,
15 հուլիսի, 1915

3) Հայերի կոտորածները.

Հավաստվում է, որ հայ ազգաբնակչությունը Թուրքիայում դաժանորեն կեղեքվում է: Չենք կրելու ունակ արական սեռի բնակչությունը մնացյալներից բաժանել են, տղամարդիկ մեծ մասամբ կոտորվել են, երեխաները, կանայք և ծերերը իբր Ներքին Անատոլիա են վերաբնակեցվել, իսկ իրականում դեպի այնտեղ ճանապարհի մեծամասնությամբ սպանվել են:

Այս դաժանագույն միջոցառումների մեղքը ընկնում է իրենց՝ հայերի վրա: Պատերազմը սկսվելուց հետո նրանք թուրքական իշխանությունների և թուրքական զինվորականության դեմ բոլորը միայն հնարավոր բնամական գործողություններ են կատարել, իսկ Վանի վիլայեթում ռուսների մուտք գործելուց հետո մահմեդական բնակիչների շրջանում արյան քաղնիքներ են սարքել:

Վերջին ժամանակներս թուրքական կառավարությունը դարերցրել է կոտորածները:

Ա. և Բ. բանակի գլխավոր հրամանատարություն
Տեղեկատվության բաժին

Թիվ 11620

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4626-4627:

№ 21

Ավստրո-հունգարական
Կ. և Բ. գլխավոր

Տրապիզոն,
20 հուլիսի, 1915

32

հյուպատոսություն
Տրապիզոն

42

Թիվ —

Ք.

Նյուքը. Հայերի արքորունը Տրապիզոնից

Նորին զերազանցություն Կ. և Բ. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ բարոն Մտեփան Բուրիանին

Վիեննա

Արդեն հայերին արքորելու վերաբերող լուրերը և ապստամբյալ ժողովրդի հատվածին այլ վայրերում բռնի կերպով վերաբնակեցնելու մասին օրենքը հրապարակելը նախապես արագացրին գալիք իրադարձությունները, վիլայեթի կառավարությունը նախորդ ամսվա 26-ին մի կարգադրություն է հրապարակել, որի համաձայն բոլոր հայերը 5 օրվա ընթացքում վիլայեթը պիտի լքեն երկրի ներքին շրջաններում բնակեցվելու նպատակով: Սարսափածների կարկամեցնող վախը սաստկացել է և ցնցող դեպքեր էին տեղի ունենում հաջորդ օրերին պաշտոնական հիմնարկությունների, հյուպատոսությունների մոտ, հունական առաջնորդարանի մոտ, կաթոլիկական և ամերիկյան միսիոներական հիմնարկություններում: Վալիին, որը հագիվ քե եվրոպացու և քրիստոնյաների բարեկամ համարվի, որը սակայն օտարների նկատմամբ ազնիվ մտածելակերպի վերաբերմունք է դրսևորել, մեղմ վերաբերվելն անթույլատրելի է թվում և կաթոլիկներին, հիվանդներին, ծերերին և երեխաներին խնայելը տարբեր ազդեցությունների ճնշման տակ է դնում, քրիստոնյա ղեկավարությամբ վերջիններիս համար կրթական հաստատություններ հիմնելու իր պատրաստակամությունն է հայտնել, և երիտթուրքական կոմիտեն առերևույթ խոստացել է, եթե իբր բուն զենքերը հանձնեն, նրանք Կոստանդնուպոլսում կկիրառվեն:

Ռազմական մեծ նախագուշակական միջոցառումների պայմաններում տեղի ունեցավ հուլիսի 1-ին հայերի բռնագաղթեցումը և շուտով պարզ դարձավ, որ տված խոստումները լուրջ չեն համարվել, քանզի հուլիսի 4-ին (կիրակի), հանկարծ կաթոլիկները, որոնք ապահովության մեջ էին իրենց զգում, առանց նրանց նախապատրաստվելու ժամանակ տալու, ամենայն հապճեպությամբ արքորվեցին, անձամբ 73-ամյա եպիսկոպոսական տեղապահը, քույրերը և վեներտիկյան միսիոնարյանները, որոնք պատանակությանը դաստիարակե-

33

լու գործով էին զբաղվում դրվատանքի արժանի ձևով, պիտի բազմամյա գործունեության տեղեր լքեն: Մյուս խոստումները ևս չկատարվեցին, այնպես որ այսօր, բացի որոշ թվով երեխաներից, որոնք բաժանվել են այստեղ և ծովափի մահմեդական ընտանիքներին, որոշ հովանավորյալներից, ծանր հիվանդներից և սակավաթիվ ծառայողներից, հայերը քաղաքը և վիլայեթը հարկադրված լքել են: Մեծամասնությունը ցամաքային ճանապարհով ոտքով դեպի Մոսկով վիլայեթ, չնչին մասը ծովով դեպի Սամսոն պիտի ուղարկվեն հետագա անորոշ ճակատագրով:

Ճանապարհի դժվարության, անհրաժեշտ նախագրուշական միջոցառումների խիստ բացակայության պայմաններում, հատկապես քրդական շրջաններում սպառնացող վտանգներից, միայն քչերը կհասնեն նպատակակետին և այս ձևով ակնհայտորեն ըստ նախկին բուսական դեղատոմսով՝ «Հայաստանն առանց հայերի» հայկական հարցի լուծումը կատարվի:

Չեն անտեսում ընդհանրապես այն, որ հայերը չէին զիջում քուրքերին ատելության առումով, որ նրանց չարագործությունները և պետական դավաճանության կուսակցական կեցվածքը Վանում հոգուտ Ռուսաստանի, ինչպես նաև հայերի պահվածքը պատերազմի սկզբից ի վեր քուրքերին մեծապես վրդովել էր և հակամիջոցների ձեռնարկում էր առաջ բերելու, չնայած այդ ամենին նշված գործելակերպը առաջ է բերում, ասենք նաև քուրքերի շրջանում, բազում անգամ տարակուսանք մարդկային, քաղաքական և տնտեսական տեսակետից այն չարդարացնելու համար, քանզի բազմահազար ամենդներ անխուսափելի մահվան անժանացան և նյութական, ինչպես և մտավոր ուժերից այդքան աղքատ Թուրքիային նորից ծանր փորձություններ են բաժին ընկնելու:

Առանձին շրջաններում կարելի էր մի այլ վարվելակերպ (վերաբերմունք) առաջարկել: Հայերի ստվար զանգվածները արևելա-անատոլիական վիլայեթներում Թուրքիայի համար քաղաքական դժվարություն էին ներկայացնում, ապա այստեղ՝ Պոնտոսում հայկական տարրը մեծ նշանակություն չունեի, քանի որ 1000000 բնակիչ ունեցող Տրապիզոնի վիլայեթում ընդամենը 25000-ից մինչև 30000 հայ էր բնակվում, Սամսունում 35000 հայ բնակիչներից, միայն 5000 մինչև 6000 են հայ:

Պիտի պատմության խորքերը վերադառնալ որպեսզի այսպես մի ժողովուրդ ոչնչացնելու բռնարարքներ հայտնաբերվեն:

Համահնչուն գեկուցում են ուղարկել են նաև Կոստանդնուպոլիս:

*Կ. և ք. հյուպատոս
(ստորագրություն)*

*Կոստանդնուպոլիսում
Կոստանդնուպոլիսում*

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4632-4634:

№ 22

Արձանագրությունների պատճեն

Կ. և ք. (ռազմա) ծովային բաժնին ի գիտություն 1915 2/VIII թիվ 5583

*Կ. և ք. (ռազմա) ծովային տեղեկատու բյուրո
Համապատասխան թիվ 274/KD.*

Գաղտնի լուրեր.

*Կոստանդնուպոլիս,
16 հուլիսի, 1915*

Հայկական հարցը, որը բարձրացրել է այստեղի ամերիկյան դեսպանությունը և պիտի քննարկվան ենթարկվի, թվում է սրանց շրջանում «պաշտպանության տակ վերցնելու» առնչությամբ ավելի սուր ձևեր է ընդունում: Դեսպան պարոն Մորգենթաուն հայտարարում է, որ Միացյալ Նահանգները այնքան շատ միսիաներ, դպրոցներ և շահեր է ունեցել հայկական վիլայեթներում և հոգուտ հայ ժողովրդի պիտի հանդես գային այնպես, որ այն կարող է հանգեցնել Թուրքիայի հետ դիվանագիտական կապերի խզման:

Ինչպես ես վստահելի աղբյուրներից իմացել եմ, Մորգենթաուն խորհուրդ է տվել ամերիկյան ընտանիքներին, պատրաստ լինել անհրաժեշտության դեպքում Կոստանդնուպոլիսը թողնելու:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4663-4664:

№ 23

9 օգոստոսի, 1915

*Ավստրո-հունգարական
Կ. և ք. գլխավոր*

*Տրապիզոն,
20 հուլիսի, 1915*

հյուպատոսություն

Տրապիզոն

43

Թիվ—

Р.

Նյութը. Հայերի բռնագաղթը Մամսունից

Կ. և թ. արքունի և արտաքին գործերի պարոն մինիստր՝ բարոն Ստեփան Բուրիանին

Վիեննա

Մեր այնտեղի հյուպատոսական ծառայության հաղորդման համաձայն, հայերը Մամսունից, սակավ բացառությամբ, այս ամսվա սկզբին դեպի Միջագետք են արտրվել:

Մի քանի հարյուրը, նրանց թվում նաև կաթուղիկներ, փորձել են իսլամ ընդունել փրկվել:

Այստեղ կրոնափոխությունը մերժվել է:

Համահնչուն զեկուցում ուղարկել են Առստանդնուպոլիս:

Կ. և թ. հյուպատոս (ստորագրություն)

Առստանդնուպոլիսի

Կ. և թ. դեսպանության միջոցով

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4635:

№ 24

Ավստրո-հունգարական

Կ. և թ. գլխավոր

հյուպատոսություն

Թիվ 50/P.

Նշված թվակիր 19

հետագիր

Այստեղի 6 հայ մահվան

են դատապարտվել

Նորին գերագանցություն Կ. և թ. արքունի և արտաքին գործերի պարոն մինիստր՝ բարոն Ստեփան Բուրիանին

Վիեննա

Կից ներկայացվող այստեղի հայ անվանի տարրեր անձանց կողմից ստորագրված դիմումի մեջ նկարագրված են այն դեպքերը, որոնց մասին զեկուցվել է ZL.25/P. և 30/P. համարը կրող զեկուցագրերում և որոնք ա/թ. ապրիլի 1-ից են սկսվել:

Ես ի վիճակի չեմ հավաստելու հայկական լուսաբանությամբ ներկայացվող փաստերը, ինձ նաև անձանոք են այն պատճառները, որոնք դրդել են թուրքական կառավարությանը տեղի հայերի դեմ այսչափ խիստ գործել:

Խնդրագրի երկու կետ հատկապես աչքի են զարնում.

1) Այն ռուսների համար, որոնք սրանից 6 տարի առաջ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի համաձայնությամբ են պատրաստվել, այնուհետև մոռացության մատնվել, որոնք ամբողջապես ոչ պիտանի են դարձել, մահապատիժ է նախատեսվում.

2) Ս/թ. մայիսի 1-ին հրապարակված մի օրենք հետադարձ ուժ ունի, այսինքն կարող է կիրարկվել դրանից մեկ ամիս առաջ գործած հանցագործության նկատմամբ:

Հարց է առաջանում, արդյոք թուրքական կառավարությունը ավելի լավ չէր անի, եթե մեղմ և զքասիրտ վերաբերմունքով հայերի համակրանքը ձգտեր շահել այս անողորմ գործելակերպի փոխարեն և այլ արարքներով նրանց ատելությունը իր հանդեպ վաստակել:

Վերը հիշատակված դատավարությունում կայացած դատավճիռը մեծ իրարանցում է առաջացրել տեղի հայ ազգաբնակչության մեջ, բոլորը լարվածությամբ սպասում են երեկ պարետի Առստանդնուպոլիս Նորին մեծությանը հեռագրով հասցեագրված պատժամիջոցը փոխելու մասին խնդրագրի ճակատագրի լուծմանը:

Համահնչուն զեկուցագիր ես այսօր հենց նույն թվահամարով ուղարկել են Առստանդնուպոլիս:

Կ. և թ. հյուպատոս Գերենտ (ստորագրություն)

Փոստի միջոցով

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4639-4640:

№ 25

Ավստրո-հունգարական Կ. և թ. գլխավոր հյուպատոսություն. Տրապիզոն

Թիվ —

P.

Տրապիզոն,

31 հուլիսի, 1915

Նորին գերագանցություն պարոն Մտեփան բարոն Բուրիանին կ. և ք. արքունի և արտաքին գործերի պարոն մինիստրին

Վիննա

Շիֆր

Նյութը. Հայերի արտորումը

Հավանաբար հայերի նկատմամբ վերաբերմունքն արդարացնելու նպատակով այստեղի վալին բոլորի ներկայությամբ հայտարարեց, որ գերմանացիները Բելգիայում 50000 մարդ են մահապատժի ենթարկել, դեֆտերդատը մեր գորքերի նմանօրինակ գործելակերպն էր հավաստում Բոսնիայում: Մյուս կարծիքները մեղադրում էին Թուրքիայի համաձայնագրի դաշնակիցներին:

Համերաշխ հաղորդումների հիման վրա ոչ մի կասկած չի կարող լիներ, որ այստեղի հայերի մեծ մասը սպանվել են, մյուսները նավերով ծովի խորքերն են տարվել և այնտեղ ջրասույգ են արվել:

Համահնչուն զեկուցագիր են ուղարկել Կոստանդնուպոլիս:

Կ. և ք. հյուպատոս Կվիատկովսկի
անձամբ իմ ձեռքով

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4646:

№ 26

28 օգոստոսի, 1915

Ավստրո-հունգարական

կ. և ք. հյուպատոսություն

Հայնայ

Z 10/P.

Հայնայ,

8 օգոստոսի, 1915

Հայ ազգաբնակչության

էվակուացումը.

Նորին գերագանցություն կ. և ք. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ բարոն Մտեփան Բուրիանին

Արևելյան վիլայեթներում հայերի պահվածքի մեջ փոփոխու-

բյան հասնելու նպատակով գործադրված անպտուղ գրեթե տասնամյա ջանքերից հետո, կառավարությունը որոշել է կտրուկ միջոցների դիմել և մեծ քվով քաղաքներից և գյուղերից բնակչությանը էվակուացնել է կարգադրել: Ըստ իմ տեղեկության այդ միջոցառմանն են ենթակա Դերտիոլի, Հասան Բեկլիի, Այնթափի, Քիլիսի, Մարաշի, Չեյքունի, Օսմանիեի, Բասնայի, Կադի Եմենի, Հաճնի, Ադանայի, Սսի, Տարսունի, Դիարբեքրի և Խարբերդի հայերը: Էվակուացիայի ենթարկվածների քվաքանակը ներկայումս տվյալների համաձայն մոտավորապես 140000 է:

Արյունոտ կոտորածների մասին լուրեր են տարածվում, սակայն նվազ հավատարժան են, հակառակ դրան մեծ հավանականությամբ կարելի է ընդունել, որ վտանգավոր հայ տարրի զանգվածային ոչնչացում մեծ մասամբ երկրի ներսում է տեղի ունեցել: Հայերի նկրտումների նկատմամբ կառավարությունն անսովոր համբերություն և մեծ ներողամտություն է ցուցաբերել: Այսօր էլ էվակուացիայի ենթարկվածներին վերաբերվում են առանց դաժանության: Պետական մարմինների իշխանության չարաշահումներ կարող են տեղի ունենալ:

Ես այն տպավորությունն ունեմ, որ դիտարկվող ժամանակի ընթացքում քրիստոնեական նաև այլ համայնքներ են տուժելու, քանզի նրանց պահվածքը պատերազմի ժամանակ ամենևին կառավարության հավանությանը չի կարող արժանանալ:

Էվակուացիայի ենթարկվածները ուղարկվելու են դեպի Դեր Էլ Չոր, ինչպես նաև Հալեպի վիլայեթի արևելյան մասը:

Այս միջոցառման տնտեսական հետևանքները ներկայումս հնարավոր չէ կանխատեսել:

Այս իրադարձությունների մեղքը, իմ կարծիքով, առաջին հերթին Անտանտինն է, որը զուտ եսասիրական շարժառիթներով ձգտում էր տարիներ շարունակ մինչև օրս շարունակվող սադրանքների ենթարկել այս վայրերի քրիստոնյաներին՝ դրդելով կառավարության դեմ խռովությունների:

Համահնչուն զեկուցագիր ես ուղարկել եմ Կոստանդնուպոլիս, Z.17/P. թվահամարով:

Կ. և ք. հյուպատոս
(ստորագրություն)

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4662-4664:

18 օգոստոսի, 1915
Ավստրո-հունգարական
ղեսպանություն
Կոստանդնուպոլիս
66 B

Ենիթյոյ,
13 օգոստոսի, 1915

Թիվ (№) —
P

Հայկական հարցի շուրջ.
Մ/ք. քիվ 54/P-C
1915թ. հուլիսի 8

Քվակիր զեկուցագրի առթիվ

Նորին զերազանցություն կ. և ք. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ քարոն Բուրիանին

Իրադրությունն այսօր Հայաստանում անտարակույս արտա-
կարգ լուրջ է: Տարբեր վայրերից ինձ հասած տեղեկությունների հա-
մաձայն ոչ մի կասկածի ենթակա չէ, որ հայերը Վանի, Բիթլիսի և այլ
շրջաններում, բայց նաև Սև ծովի առափնյա վայրերում ռուսական
ծառայության մեջ գտնվող հեղափոխական կոմիտեների կողմից
հրահրվել են թուրքական կառավարության դեմ, այս պատերազմը
պիտի օգտագործվի Հայաստանը թուրքական լծից ազատագրելու
համար: Այս շատ լուրջ շարժումը ճնշելու համար թուրքական կառա-
վարությունը խստագույն միջոցներ է ձեռնարկել: Տեղի ունեցան ապ-
ստամբություններ, որոնք արյան մեջ խեղդվեցին, որի ընթացքում
թուրքական կողմը մեծ դաժանությամբ գործեց: Ոչ միայն մեղավոր-
ները պատժվեցին, այլ ամբողջապես տղամարդիկ սպանվեցին, և
նույնիսկ բուն կանանց և երեխաներին չլսնայեցին: Սև ծովի ափե-
րից, ինչպես նաև Տրապիզոնում կ. և ք. հյուպատոսի զեկուցագրից է
երևում, զանգվածաբար և ընդամին հայերի տղամարդկանց կանան-
ցից և երեխաներից բաժանեցին, երկրի խորքն, օրինակի համար, դե-
պի Մոսուլ արքորեցին: Իհարկե, այդ վիթխարի տարածությունը
կտրել-անցնել շատ քչերին հաջողվեց, դա ակնհայտ է: Ամբողջ
Թուրքիայի շրջաններում, դրանից զատ, հայերին խստագույն հսկո-
ղության տակ վերցրին, զանգվածաբար կալանքների էին ենթար-
կում, և ամբողջ կայսրության մեջ ռազմադատական դատավճիռների
հիման վրա բազմաթիվ մահապատիժներ կատարվեցին:

Ամերիկյան դեսպանը ունի ամբողջ կայսրությունում ցրված
բազում միսիոներների զեկուցագրերը և ինձ պատմում է, որ նրանց

հաղորդումները կարող են վկայել չլսված դաժանությունների մասին:
Պարոն Մորգենթաուի գնահատմամբ 100000-ից ավելի հայեր են
կյանքից զրկվել:

Ես վերջերս հայկական հարցի լրջության շուրջ խորհրդակ-
ցեցի գերմանական դեսպանի հետ: Իշխան Հոհենլոեն կարծիք
հայտնեց, որ մենք անպայման խնդիրը մեծ վեզիրի առջև ենք առա-
ջադրելու և նրա ուշադրությունն ենք հրավիրելու այդ իրողության
վրա, թե ինչպիսի վտանգներ է բուն Թուրքիայի համար պարունա-
կում հայերի նկատմամբ անմարդկային վարվելակերպը:

Այն ժամանակ բուլղարա-թուրքական բանակցությունները
գտնվում էին հենց այն փուլում, երբ Գերմանիան և մենք Կիրկիլիսի
հարցի առթիվ մտադիր էինք խիստ ճնշում գործադրել: Ես կարծում
եմ իշխան Հոհենլոեն, հետևաբար, պիտի խորհուրդ տար, որ նման-
օրինակ բողոքում ինչ-որ բան անհուսալի է ակնկալել: Սակայն այն
ժամանակվանից, երբ Գերմանիան այս հարցում Թուրքիայի զիջո-
ղականության վրա հետագա պնդելուց հրաժարվեց, և այդ վճիռը
թուրքական կառավարությունը Գերմանիայի համար նպաստավոր
պիտի համարեր, գերմանական դեսպանին ներշնչեցի, այս ակնբար-
քը օգտագործել և խոստացա նրան, իմ կողմից ևս Մեծ վեզիրի ուշա-
դրությունը դարձնել հայկական հարցի լրջության վրա:

Ես այդ նախանցյալ օրը արեցի և Մեծ վեզիրին բարեկամա-
կան զրույցի ընթացքում ասացի, ես շատ լավ գիտեմ, որ հայ ազգա-
բնակչության շրջանում հեռահար հեղափոխական և նույնիսկ պե-
տության նկատմամբ թշնամական միտումներ են իշխում, ինքնին
հասկանալի կլինեն, եթե հանցավոր տարրերը պատասխանատվու-
թյան կանչվեին և ըստ այդմ խստագույնս պատժվեին, սակայն ես
պիտի մեծ սխալ համարեի, որ կառավարության մարմինները խիստ
չարդարացված, բիրտ դաժանություններ, հատկապես կանանց և
երեխաների նկատմամբ իրենց թույլ են տալիս գործադրել: Ես Մեծ
վեզիրի ուշադրությունը հրավիրեցի նաև այն իրողության վրա, որ
կգա ժամանակը, երբ թուրքական կայսրությանն այնուամենայնիվ
օգտակար մի ժողովրդի բնաջնջման այս քաղաքականության հա-
մար Թուրքիան պատասխանատվության կենթարկվի: Թուրքիան
չպիտի ակնկալի, որ Ավստրո-Հունգարիան կամ Գերմանիան հայ-
կական հարցում նրա դիրքորոշումը այսուիետև ինչ-որ կերպ կկարո-
ղանան պաշտպանել:

Սաիդ Հալիմ փաշան չկարողացավ այս ամենը ժխտել, նա
պաշտպանվում էր միայն այն բանով, որ հեղափոխական և հակա-
թուրքական միտումները մեծ չափեր կստանային, որոնք թուրքական

կայսրության գոյության համար ուղղակի վտանգ կներկայացնեին, այդ պատճառով էլ կառավարությունը հարկադրված էր խստագույն միջոցներ ձեռնարկել:

Իշխան Հոհենլոեն երեկ նույն գործով կամենում էր այցելել Մեծ վեզիրին, սակայն քանի որ վերջինիս նա չէր հանդիպել, սպասնա Թալեաթ բեյի հետ էր գրուցել, որին պատահմամբ ներկա էին նաև Էնվեր փաշան և Հալիլ բեյը:

Այն դեպքում, երբ ես բավարարվեցի Մեծ վեզիրի հետ բարեկամական նկատողություններ արտահայտել, գերմանական դեսպանի քայլերը իսկական մի բողոք էր, որի համար, ինչպես ես ենթադրելու հիմք ունեմ, իր կառավարությունից ուղղակի հանձնարարություն էր ստացել: Գերմանական դեսպանը Բարձր Դռանն ուղղված մի գրավոր լրացուցիչ հուշագիր է թողել, որի մեջ ի շարս այլոց հիշատակվում է, որ Գերմանիային տարբեր կողմերից նախատում են, որ նա այսչափ չտեսնված դաժանությունների և մի ցեղի ընթացող բնաջնջմանը հանգիստ նայում է և նույնիսկ այդօրինակ խորհորդ է տվել:

Գերմանական կառավարությունն, իմ կարծիքով, իրավունք ունի, իր ժամանակին այդօրինակ նախատիվքից, որից նա չի կարող զերծ մնալ, պաշտպանվելով: Գերմանական դեսպանի երեկվա քայլն ակնհայտորեն պիտի հնարավորություն ընձեռի, իր ժամանակին, երբ հայկական հարցը և Թուրքիայի գործերակերպը քննարկման կենթարկվի, վկայակոչել այն, որ ինքը զգուշացրել է թուրքական կառավարությանը հայերի նկատմամբ նրա քաղաքականության հետևանքների վերաբերյալ:

*Կ. և ք. դեսպան
(ստորագրություն)*

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4666-4671:

№ 28

Թիվ 293.

*Կոստանդնուպոլիս,
15 օգոստոսի, 1915*

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Այստեղի գերմանական դեսպանությունը պիտի հայկական հարցում նոր, այս դեպքում իբր լուրջ քայլեր կատարի, որպեսզի անմեղ հայերի հետապնդումը խափանի: Ամբողջ հայ ազգի հնարավոր բնաջնջումը կվնասեր Գերմանիայի, որպես քրիստոնյա տերության,

հեղինակությանը: Մյուս կողմից գտնում են, որ հայերի օգտին գերմանական դեսպանության մեծ շահագրգռությունը վերագրում են հատկապես Բեռլինից այստեղ ժամանած պրոֆեսոր Լեփսիուսի՝ մի հայասեր անձնավորության ազդեցությանը, որը տակավին 90-ական թվականներին հայերի նկատմամբ թույլ տված խժոժությունների ժամանակ հրապարակային զեկուցումներով մեծ քարոզություն էր վարում թուրքերի դեմ: Լեփսիուսը, որն արդեն դարձյալ ուղևորվել է հայկական նահանգները, այցելել է Ադանայի նահանգը, երբ 1913 թվականին, ինչպես այդ ժամանակ լուրեր էին պտտվում, Գերմանիան հայկական հարց և Կիլիկիայում ապստամբություն էր կամենում առաջացնել, երբ թուրքերը այստեղ թուրք-ռուսական, թուրք-ֆրանսիական և թուրք-անգլիական միություններ էին հիմնադրում Անտանտին մերձեցնելու նպատակով միտումով, Լեփսիուսը մասնակցում էր հայ-գերմանական միություն հիմնադրելուն, որը ի պատասխան թուրքական կոմիտեի կազմակերպվեց Բեռլինում:

Վերջին օրերին Կոստանդնուպոլսում ցածր խավերին պատկանող որոշ հայեր ձերբակալվել են, սա կարող է հայերի այն նախապատրաստված ցուցակը լինի, որոնք պիտի արքունիքին դեպի նահանգ: Մրանք բոլորը պատկանում են Գեմեկրատների կուսակցությանը, որոնց պարագլուխը եզիպտահայ միլիտանտեր Պողոս Նուբար փաշան է: Երգումից մի թուրք պատգամավոր և երիտթուրքական կոմիտեի ազդեցիկ անդամ ինձ ասաց, որ կառավարությունը մեծագույն ջանք է գործադրում, որպեսզի Վանի շրջանում հայերի կատարած դաժանությունները թուրք հասարակայնության մեջ տարածում չստանա: Դրա հետևանքը կլինի թուրքական վրեժխնդրության սարսափելի պողոթնում. հայերը Վանում թուրքերին, նույնիսկ կանանց և երեխաներին այնպիսի ձևով էին կոտորել, որ ռուս սպաները ծանր պատիժների սպառնալիքով ստիպված են եղել դադարեցնել կոտորածը:

Աղարազարում, Իզմիրի մոտ, որտեղից բոլոր հայերը բռնագաղթի էին ենթարկվել, բազմաթիվ ուժանակային ռումբեր են հայտնաբերվել:

Կոստանդնուպոլսում նույնպես հայկական կոմիտեները դավադրություններ նախապատրաստելով էին զբաղված եղել:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4672-4673:

Ա/թ. 1915թ. օգոստոսի 24-ին Ենիքյոյից հղված թիվ —
 գեկուցագրի հավելվածը P
 Բրուսայում կ. և թ. հյուպատոսության գործակալի կ. և թ.
 ղեսպանություն ուղարկած թիվ 441/P., 1915թ. օգոստոսի 16-ը
 քվակիր գեկուցագրի պատճենը

Այստեղ հանգրվանած հայ առաքելական և հայ բողոքական բնակչությանը ս/թ. օգոստոսի 14-ին տեղի իշխանության կողմից առաջարկվել է ամենատուշը մինչև երեքշաբթի՝ սույն ամսվա 17-ը պատրաստ լինել ուղևորվելու դեպի երկրի խորքը արտաքսվելու համար:

Նրանց թույլատրվել է, միայն իրենց կահույքը վաճառել, ինչ սակայն նրանց խանութներին է վերաբերվում, ապա դրանք պաշտոնապես փակվելու և կնքվելուն են:

Հայ ազգաբնակչության մեծագույն մասը բաղկացած է ունևոր մարդկանցից, որոնք ոչ միայն առևտրով, այլև շատերը արդյունագործությամբ, ինչպես բոժոժից մետաքսաթել գործելու և մետաքսագործությամբ են զբաղվում:

Եթե նույնիսկ այս մարդկանց արտոնելը ռազմավարական պատճառներ են հետապնդում, ապա այդ միջոցառումը արտաքին առևտրի, ինչպես նաև տեղի արդյունաբերության համար մեծապես վնասաբեր է:

Այս հայերից շատերը Կոստանդնուպոլսի առևտրական միջնորդների միջոցով մեր միապետությունից և Գերմանիայից ապրանքներ էին ստանում և ես կասկածում եմ, որ մեր բազում ֆաբրիկաներ այս արտոնի հետևանքով հայտնի չափով վնաս են կրելու:

Այստեղի գլխավոր նահանգապետն երեկ ինձ անձամբ հայտնեց, որ բոլոր հայերն առանց սեռի, տարիքի և առողջական վիճակի տարբերության պիտի արքայվեն, որ նրանց արդեն կնքված խանութները մի քանի օրից մի հանձնաժողովի կողմից բացվելու են, որոշ խանութներ վերացնելու, մյուսներն էլ ապրանքները հաշվառման ենթարկելուց հետո նույն հանձնաժողովը ձեռնամուխ է լինելու դրանց բացմանը:

Հաշվապահական գրքերի հիման վրա ապրանքների վաճառքից ստացված գումարը պիտի վճարվի վարկատուներին և հնարավոր մնացորդը համապատասխան ֆիրմայի անունով պիտի ներդրվի տեղի պետական գանձարան:

Խեղճ բնակչության կահ-կարասիքը, որոնց վաճառքը արդեն երեկ էր սկսվել, ջրի գնի է վաճառվում: Պղնձյա իրերը մեծ մասամբ գրեթե նվիրվում էին: Հարուստներն իրենց կահույքի իրերից ոչինչ չվաճառեցին և մտադիր են իրենց տները կահավորված լքել:

Տները անցնելու են կառավարության տնօրինության ներքո, որպեսզի մի մասը կահավորված, մյուս մասը դատարկ տրվեն հետագայում վարձով: Այդ տներից շատերը շատ հարուստ կահույք ունեն, որի վաճառքը ներկա հանգամանքներում և դրամի մեծ սակավության պատճառով ոչ միայն շատ դժվար, այլև անիրագործելի կլիներ:

Ինձ համար անհնարին է, հայ բնակչության հուսահատ վիճակը նկարագրել: Մրտակեղեք է այդ, երբ մարդ հայացք է նետում հայերով բնակեցված քաղաքամասի վրա: Տղամարդիկ, կանայք և երեխաները ողորում են: Փողոցներում թափված են ընդհանրապես տան կահ-կարասիներ և այլ կենցաղային իրեր, որոնց թուրք տղամարդկանց և թրքուհիների կողմից շրջապատված են այս իրերը գրեթե ձրի սեփականացնելու դիտավորությամբ:

Ոչ միայն քրիստոնյա, այլև մահմեդական բնակչության մեծ մասը կառավարության գործելակերպի առիթով վրդովված է և նկատելի է նրանց մեծ դժգոհությունը:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4685-4687:

Թիվ 116

Կոստանդնուպոլիս,
 21 օգոստոսի, 1915

Տեղեկատու գեկուցագիր հայկական

Հակառակ այն տեղեկություններին, ըստ որոնց Բարձր Գուռը կարգադրել է դադարեցնել հայերի հալածանքները, դրանք շարունակվում են և այն ոստիկանական և երիտթուրքական շրջանների կողմից ընդարձակվում են, որ կառավարությունն այդ մասին նոր ելակետ ունի, որ իբր հայերը նաև Կոստանդնուպոլսում ևս խռովություններ պիտի հրահրեն:

Այնպես որ գերմանական ղեսպան իշխան Հոհենլոեի քայլը ոչ մի օգուտ չտվեց, նույնիսկ ավելի վնասեց, քանզի Բարձր Գուռը կամենում է հանցանշանները (corpus delicti) ոչնչացնել, որպեսզի հաշտության բանակցությունների կամ խաղաղության (հաշտու -

քյան) պայմանագրի կնքման ժամանակ որևէ եվրոպական տերություն, ներառյալ նաև Գերմանիան, հայկական հարցը կարողանա շոշափել:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4681:

№ 31

Թիվ 78

*Խիստ զաղտնի
Աֆորիստիկ զեկուցագրեր*

Իրադրությունը և կարծիքները

*Կոստանդնուպոլիս,
օգոստոսի 24, 1915*

Թիվ (N^o) 298 ներքին լուրեր

Հայերը. Ըստ իմ, - սակայն ես պիտի նախապես նշեմ, անբավարար տեղեկությունների, ամերիկյան և գերմանական քայլերը (ես հուսով եմ, որ նաև մենք այստեղ և Վիեննայում մույն կապակցությամբ խորհուրդներ կտանք) մի փոքր օգուտ են տվել և թեև հայերի դեմ ձեռնարկած միջոցառումները չեն դադարեցվել, բայց և նկատելիորեն մեղմացել, առնվազն առանձին հայտնի դարձած դեպքերում: Չերբակալությունները և արսորումները, որ վերջին ժամանակ այստեղ տեղի էին ունենում, թվում են շատ չպիտի լինեն և միայն գավառահայերին պիտի վերաբերվեն: Հայկական և այլ կողմերից պնդում են, որ թուրքերը կամենում են հայերին ոչնչացնել կամ թուլացնել, որ ազատվեն հայերի տնտեսական գերակայությունից և տնտեսապես սեփական ոտքերի վրա կանգնեն: Իմ հետաքննությունների և դատողությունների համաձայն այդ պնդումը ճիշտ չէ: Ինչպես արդեն նախկինում նշել եմ հայերի վրա ծանր հանցանքներ էին բարդվել և տնտեսական շահարկումները թուրքական միջոցառումների շարժառիթ չէին կարող դառնալ, այլ միայն որպես հարմար առիթի հետևանք և տեղի է ունենում, ասենք, թուրքական կողմի բավականին անճարակության և անկանոնության ձևով:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4688, 4690-4691:

*Ավստրո-հունգարական
կ. և բ. դեսպանություն
70 B*

*Թիվ —
P.*

*Հայկական հարցի շուրջ
1915թ. օգոստոսի 24
69 D*

*Քվակիր —
P.*

զեկուցագրի առթիվ

*Նորին գերագանցություն կ. և բ. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ բարոն Բուրիանին*

Բրուսայում կ. և բ. հյուպատոսության գործակալի երկու զեկուցագրերի պատճենները ես որպես հավելված ներկայացրել եմ, որոնցից երևում է, որ այստեղի վարչական շրջանում հայերի հալածանքները երկրի ներսում աննվազ կերպով շարունակվում են և որ իշխանության մարմինները մեծագույն անողորմությամբ և դաժանությամբ են գործում:

Տարբեր, ոչ պաշտոնական աղբյուրներից շարունակ ես ստանում եմ լուրեր, որ Փոքր Ասիայի խորքերում հայ ազգաբնակչությունը մեծ թվով քաղաքներից և գյուղերից էվակուացիայի է ենթարկվելու: Նաև Կոստանդնուպոլսում և շրջակայքում օրավուր բնակչության բոլոր խավերին պատկանող հայերը ոստիկանության կողմից ձերբակալվում և դեպի Անատոլիա են արսորվում:

Գերմանական դեսպանի շատ լուրջ բողոքը, որի մասին ես այս ամսվա թիվ 66/P-B զեկուցումով հայտնել եմ, թվում է ուրեմն մինչև հիմա ոչ մի հաջողություն չի ունեցել:

*Կ. և բ. դեսպան
(ստորագրություն)*

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4697-4698:

14 սեպտեմբերի, 1915
Ավստրո- հունգարական
Կ. և թ. հյուպատոսություն
Հավեպ
Z. 12/P.

Հավեպ,
27 օգոստոսի, 1915

Հայերի ապստամբությունը

Նորին զերազանցություն Կ. և թ. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ քարոն Ստեփան Բուրիանին

Արյունալի բախումներ են տեղի ունեցել հայերի և զինված ուժի միջև հաղորդում են Անտիոքի մոտ գտնվող Սվեդիայից Չեյթունի մերձակայքից հեռու գտնվող Ուրֆայից: Թուրքական իշխանության զենքեր հանձնելու պահանջին հայերը պատասխանել են կրակոցներով և հանգեցրել է ներկայիս ավելի տևական մարտերի: Դիարբեքի-րի շրջանից եկած 2000 հոգուց բաղկացած հայկական մի ջոկատ հարձակվել է Ռաս Աին Էլ չերքեզական բնակավայրի վրա: Չորքի օգնությամբ նրանց մինչև վերջին մարդը ոչնչացրեցին:

Էվակուացված հայերի փոխադրումը շարունակվում է: Ներկայումս էվակուացվել են երկրի խորքում բնակվող երաշխավորված կաթուղիկ հայերը, նույնպես՝ բողոքական հայերը: Վերջիններիս համար պիտի միջնորդած լինեք զերմանական կառավարությունը, սակայն ապարդյուն:

Աքսորվածների շրջանում իշխում է աղքատությունը և մեծ է մահացությունը: Կառավարությունը ջանքեր է գործադրում արքայալիների տառապանքները կանխելու համար: Դրան առնչվող իր նկրտումներում կառավարությունը քանիցս աջակցություն է գտնում քրիստոնեական շրջաններում, որոնք առաջին հերթին սեփական բարեկեցությամբ են մտահոգված:

Ռազմական առումով այս տեղական ապստամբություններն իշխանություններին լուրջ մտահոգության առիթ չեն տալիս: Ընդհանուր պատերազմական իրադրության առումով նկարագրված իրադարձությունների հետևանքով Թուրքիայի դիմադրական ուժի բուլացումից չպետք է երկյուղել:

Համահնչուն զեկուցագիր ես Z.20/A. համարով ուղարկել եմ Կոստանդնուպոլիս:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4704-4705:

70 B
Թիվ — զեկուցագրի հավելվածը
P.

Կոստանդնուպոլիս,
27 օգոստոսի, 1915

Բրուսայում Կ. և թ. հյուպատոսության գործակալի 1915թ.
օգոստոսի 20 թվակիր 460/P. զեկուցագրի պատճենը

Ինչպես հայտնի է դարձել, բազում քրդեր Բրուսայից հեռացել են, որ հայ վերաբնակիչների վրա ճանապարհին հարձակվեն և կողոպտեն: Արդյոք այդ լուրը կարող է խարսխված լինի ճշմարտության վրա ես որոշակիորեն չեմ կարող հավաստել, գիտեմ միայն այնքանը, որ տեղի բանկերը տեղական իշխանությունից հանձնարարություն են ստացել, որ հայերից ոչ դրամ, ոչ էլ զարդեղեն ի պահպանություն ընդունել:

Ինձ հայտնի է, որ բազում հայեր ոչ միայն դրամ, այլև զարդեր են իրենց հետ վերցնում:

Նույնը զեկուցել եմ ես Կ. և թ. հյուպատոսությանը:

Կ. և թ. գրասենյակի խորհրդական և կառավարիչ
L. Տրան

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4703:

70 B
U/թ. թիվ — զեկուցագրի հավելված,
P.

Կոստանդնուպոլիս,
27 օգոստոսի, 1915

Բրուսայում Կ. և թ. հյուպատոսության գործակալի 1915թ.
օգոստոսի 19 թվակիր u/թ. թիվ 453/P. զեկուցագրի պատճենը.

Նյութը.

Հայերի արքայությունը.

Երեկ վաղ առավոտից սկսվել է հայ-առաքելական բնակչության արքայությունը: Հայ բողոքականներն առայժմ դեռ այստեղ են մնում և հավանաբար բռնագաղթի չեն ենթարկվի:

Այստեղի իշխանությունն այդ նպատակով հավաքել է հարևան գյուղերից բոլոր սայերը եզներով հանդերձ և դրանք ծառայելու են որպես փոխադրական այդ դժբախտ մարդկանց համար: Այդ եզնասայերը, որոնք սովորաբար խոտ և բերք փոխադրելու համար են օգտագործվում, վերևի ծածկ չունեն, որ ուղևորներն արևի կիզիչ ճառագայթներից և անձրևից պաշտպանված չեն լինելու:

Երեկ վաղ առավոտից մոտ 500 այդպիսի սայլ պատրաստ կանգնած էր, որոնց մեջ նստած էին տղամարդիկ, կանայք և երեխաներ իրենց անկողնային սպիտակեղենով հանդերձ: Այդ փութկոտ արքայությունը և կահ-կարասիների քաշել-տանելն այնպիսի տեսք ունեն, կարծես թե մարդիկ մեծ հրդեհից կամ կողոպտումից էին ուզում փրկվել:

Երեկ մեկնած հայերի թիվը կազմում է մոտ 1800 անձ, որոնց մինչև Բիլեջիկ հիշյալ եզնասայերով և այնտեղից դեպի Կոնիա երկաթուղով պիտի տարվեն: Երեկվանից այստեղ լուր է տարածվել, որ արքայությունը Կոնիայում չպիտի մնա, այլ այնտեղից ոտքով դեպի երկրի խորքը պիտի տարվեն:

Երեկ արքայությունը բաղկացած էր չքավոր դասի ընտանիքներից: Այսօր կարելի էր արդեն ուղևորների շրջանում ունևոր ընտանիքներ նկատել, որոնք իրենց հաշվին այսպես կոչված յալլի¹ են վարձել, որ դեպի Բիլեջիկ ուղևորություն ձեռնարկեն: Այդ ուղևորությունը լավ կառքով տևում է 17-18 ժամ և դրա համար սովորաբար 2 օր են հատկացնում: Իսկ եզնասայերը կարող են իրենց նպատակակետին հազիվ 8 օրում հասնել, և հրաշք պիտի լինի, որ այդպիսի տխուր փոխադրական պարագաներում մանկահասակ երեխաների և ծեր հիվանդ մարդկանց մի մասը արդեն այդ ուղևորության ընթացքում չմահանան:

Եթե հիմա այդ լուրը ճիշտ է, ապա այս արքայությունը Կոնիայից ուղևորությունը ոտքով պիտի շարունակեն, ուրեմն վճռականորեն կարելի է հավաստել, որ Բրուսայից արտաքսված 9000 անձից հազիվ թե մեկ երրորդը իրենց նշանակման վայրը կհասնի:

Ասում են, որ որոշ հայ օրիորդներ արդեն անուսնացել են բուրբերի հետ, մյուսներն էլ բուրբերի կողմից հարկադրվում և սպանալիքի են ենթարկվում, որ նույն ճանապարհին հետևեն: Սա միակ միջոցն է, որով արքայից կարելի է խուսափել:

Այստեղի շուկան անցյալ ուրբաթ օրվանից մեռյալ է, հայերի բոլոր խանութները կնքված են և վստահված հանձնաժողովի կողմից հաշվապահական գրքերի ստուգումից և ապրանքների հաշվառումից հետո միայն կբացվեն:

Ամբողջ իրավիճակը թողնում է պետական սնանկության տպավորություն: Տները մի պաշտոնյայի ներկայությամբ բանավոր մի հայտարարության հիման վրա վաճառվելու են: Գնորդները պիտի, ինչպես ես տեղեկացել եմ, միայն «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամ լինեն, որոնք տները համարյա ձրի սեփականացնելու են:

Այս իրադարձությունները շատ են վնասելու առևտրին, և ոչ բուրքական վաճառականները, այլև մեր միապետության ֆարրիկաներ մեծ կորուստներ են կրելու:

Հայերի շրջանում կան գործվածքեղենի և գաղութային արանքների վաճառականներ, որոնք իհարկե մեր և գերմանացի ֆարրիկանների հետ գործնական հարաբերություններ ունեն, և որոնք նաև, անշուշտ, պիտի եթե ոչ ուղղակի արտասահմանյան ֆարրիկաներին, ապա գեթ կոստանդնուպոլսեցի առևտրական միջնորդների միջոցով մեծ գումարներ պարտք լինեն:

Նրանց խանութներում գտնվող ապրանքները, որոնք հիշյալ հանձնաժողովի կողմից հաշվառման ճանապարհով պիտի վաճառվեն, կարող է դրանից, ինչպես տեսնում եմ, դրանց արժեքի հազիվ մեկ քառորդը ձեռք բերել: Մնում է հայերի միայն անշարժ գույքը անձեռնմխելի, ուրեմն իրենց պահանջները հետագա բավարարման համար մեր ֆարրիկատերերին է դրանք մնալու:

Հետևաբար, որպեսզի կարողանանք պաշտպանել մեր ֆարրիկանների շահերը իմ համեստ կարծիքով պիտի ցուցմունք տրվեր, որ Բարձր Դռան նկատմամբ շտապ քայլեր ձեռնարկվեն, արքայությունը հայերի անշարժ կայքի վաճառքը ժամանակավորապես դադարեցնելու, կեղծ գնումները չեղյալ համարելու, և դրանց վաճառքը հայ վաճառականության իրենց վարկատուների հանդեպ ունեցած պարտքերը վերջնական կարգավորելուց հետո միայն թույլատրելու առումով:

¹ Չխասայի տեսակ:

*Կ. և Բ. գրասենյակի խորհրդական և կառավարիչ
Լ. Տրանո*

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4699-4702:

№ 36

*Ավստրո-Հունգարիայի
Կ. և Բ. հյուպատոսություն
Գամասկոս
54/P.
23 հոկտեմբերի, 1915*

*Գամասկոս,
28 օգոստոսի, 1915*

*Հայ ընտանիքների արտորում
ղեպի Միրիա*

*Նորին գերագանցություն Կ. և Բ. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ քարոն Բուրիանին*

Անցյալ շաբաթ իրենց հայրենիքից բռնությամբ հեռացված և ղեպի Միրիա ուղարկված հայ ընտանիքների երկու մեծ քարավան Հալեպի վրայով եկել են Գամասկոս:

Առաջին քարավանը՝ մոտ 5000 անձ, Հալեպից մինչև այստեղ ուղևորությունը ոտքով է կատարել: Նրանք համարյա ամբողջապես հայ առաքելական եկեղեցու հետևորդներ են տարբեր վիլայեթներից, հատկապես Ադանայից, Կարս, Հասան բեյ, Գորտոյոլ, Բիլան, Քեսար, Հաջն, Սիս բնակավայրերից, Անգորայից, Կեսարիայից, Հալեպից՝ Քիլիս, Ալեքսանդրետ, Կալա Գորան բնակավայրերից, Գիարբեքիից, Մարդինից: Նրանք Գամասկոսում կարճատև հանգրվանից հետո պիտի տևական բնակության համար ուղարկվեն ղեպի Մեսմիյե, ղեպի Սալտ և Կիրակ: Գամասկոսից հետագա փոխադրումը կատարվելու է երկաթուղով:

Երկրորդ քարավանը, որը հազիվ 1200 անձից է բաղկացած և երկաթուղով է Հալեպից եկել, ամբողջապես Գիարբեքիի վիլայեթից, հատկապես Մարդինից և Վիրանշեհիից են: Նրանց մեջ ավելի քիչ հայ առաքելական եկեղեցու հետևորդներ կան, քան քրիստոնեական այլ դավանանքների պատկանողներ, հատկապես հայ-կաթոլիկներ, ասորի-կաթոլիկներ և քաղկեդոնականներ, ինչպես և բողոքական-

ներ: Ուշագրավ է այն, որ մարդիկ իրենց ազգությամբ ոչ թե հայ, այլ արաբ են: Թվում է, հետևաբար, բռնագաղթի միջոցառումը այն շրջանի անխտիր բոլոր քրիստոնյաների վրա է տարածվել, առանց ազգության և դավանանքի տարբերության, միայն հակոբականներն են խնայվել:

Երկու քարավաններում էլ, հատկապես սակայն, երկրորդում, որը տակավին այստեղ է թողնվել, շատ քիչ տղամարդ կա, այլ միայն կանայք և երեխաներն են: Տղամարդկանց դիտմամբ իրենց ընտանիքներից բաժանել և մի այլ վայր են ուղարկել կամ գուցե արտրելուն դիմադրություն են ցույց տվել և սպանվել են: Այսպես են առնվազն պնդում արտրայլները, որոնք չնայած ոստիկանության կողմից հարուցվող արգելումին Գամասկոսում իրենց հանգրվանելու ընթացքում իրենց դավանակիցների հետ այնուամենայնիվ կապ են կարողացել հաստատել:

Մանդամբերքից լրիվ գուրկ այս ընտանիքների, որոնք հազիվ թե կառավարությունից միայն հաց են ստանում, թշվառությունն անսահման է: Նրանցից շատերն այստեղ, որտեղ բազում մադինուրներ են նստակյաց բնակվում, մերձավորներ են գտնում, որոնց սակայն արգելվել է նրանց մասին հոգալ, չխոսելով արդեն նրանց իրենց մոտ ընդունելու մասին:

Նրանց նկատմամբ ընտանիքները արտրելու, ինչպես նաև փոխադրումների ընթացքում կատարված բռնությունների մասին սարսափելի բաներ են պատմում, որոնց լրիվ ճշմարիտ լինելը ընդհանրապես անհնարին է ստուգել:

Միջոցառման պատճառի մասին, ինչ վերաբերվում է Գիարբեքիի վիլայեթին, հայտնի է, որ այնտեղ ոչ մի ապստամբական շարժում, ինչպես հյուսիսային հարևան վիլայեթում, տեղի չի ունեցել, սակայն կառավարությունն այնտեղ էլ դավադրության հետքի վրա է ընկել, որին ոչ միայն հայ առաքելական դավանանքի հետևորդ հայերն, այլև իբր քրիստոնեական մյուս դավանանքների պատկանողները (քացառյալ հակոբականների) մասնակից են եղել:

Համահնչուն զեկուցագիր նույն ամսաթվին և նույն համարով ես ուղարկել եմ Կոստանդնուպոլիս:

Կ. և Բ. գլխավոր հյուպատոս

(ստորագրություն)

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4708-4710:

Ավստրո-հունգարական
գլխավոր հյուպատոսություն
Թիվ 62/P.

Չմյուռնիա,
30 օգոստոսի, 1915

Միջոցառումներ հայերի դեմ

Նորին զերազանցություն կ. և ք. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ քարոն Ստեփան Բուրիանին

Միջոցառումները, որ սրանից որոշ ժամանակ առաջ հայկա-
կան տարրեր նահանգներում և նաև երկրի մայրաքաղաքում հայերի
դեմ ձեռնարկվեցին և որոնց պատճառով կայսրության հայ ազգա-
բնակչությունն ահաբեկված պիտի լիներ, այստեղ ևս իրենց նպա-
տակին են հասել:

Մեծ վեզիրի պատրիարքներին իբր ասած արտահայտությու-
նն է՝ «Հայերը մեր թշնամիների բարեկամներն են, ուստի մենք նրանց
հեռացրինք մեզանից, ինչպես որ նրանք մեզ...»:

Շարունակում է տարածվել, և շահագրգռված շրջաններում
աշխուժորեն մեկնաբանվում են և շատերն այսօր համոզված են, որ
թուրքերը լրջորեն մտածում են հայ տարրը բնաջնջելու մասին...

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4711-4713:

Ավստրո-հունգարական
կ. և ք. դեսպանություն
Կոստանդնուպոլիս

Ենիքյոյ,
31 օգոստոսի, 1915

71

Թիվ — B.

P.

Հայերի արտաքսումները

1915թ. օգոստոսի 27

թվակիր

ս/ք. 70/P-B.

զեկուցագրի առթիվ

1 հավելված

Հավելվածում ես ներկայացրել եմ Բրուսայում կ. և ք. հյուպա-
տոսության գործակալի ընդարձակ զեկուցագիրը, որի մեջ վերջինս
նկարագրում է այն գործելակերպը, թե ինչպես են այնտեղի արտը-
յալ ունևոր հայերը հարկադրված եղել իրենց մեկնելուց առաջ իրենց
անշարժ գույքը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամ
ներին և այլ թուրքերին վաճառել:

Ամերիկյան դեսպանից ես լսեցի, որ ամերիկյան միսիոներնե-
րը Փոքր Ասիայի խորքից հաղորդում են, որ հայերի վիթխարի զանգ-
վածներ, լինի սա սպանության, լինի դա սովահարության և հիվան-
դությունների պատճառով մահացել են: Նաև զերմանացի սպաները,
որոնք վերջին ժամական գտնվել են Փոքր Ասիայում, պատմում են
սահմոկեցուցիչ տեսարանների մասին, որ տեղի են ունեցել այնտեղի
վայրերում:

Երեկ ես գրուցեցի Թալեաթ բեյի հետ նման ձևով, ինչպես
արդեն խոսել էի Մեծ վեզիրի հետ: Ներքին գործերի մինիստրը ասաց
ինձ, որ ինքը խիստ կարգադրություններ է կատարել, որ հայերի հա-
լածանքները պիտի դադարեցվեն: Նա ընդամին նկատեց, որ քանիցս
պաշտոնյաների կողմից իշխանության չարաշահման դեպքեր են
կատարվել, որոնց խստագույնս նա պատասխանատվության է կան-
չելու: Թալեաթ բեյի դատողություններից ես կարողացա եզրակաց-
նել, որ հայերի դեմ գործադրված անասելի գործելակերպը՝ այն դեպ-
քում եթե դրան հանգի, այժմ այն պատճառով պիտի դադարեցվի,
քանզի բոլոր այն հայերը, որոնք կամ որպես հեղափոխականներ,
որպես պետության թշնամիներ կամ որպես տնտեսական անցանկա-
լի մրցակից էին դիտվում, ասպարեզից վերացվել են:

Հայկական հարցը համարում են այժմ նշանակելի չափով
ավարտված:

Կ. և ք. դեսպան
(ստորագրություն)

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p.4714-4716:

Ս/ք. օգոստոսի 31-ի զեկուցագրի հավելված, 1915 N

71 B.

P.

Բրուսայում կ. և ք. հյուպատոսության գործակալի կ. և ք.
դեսպանություն ուղարկված թիվ 464/ P, 1915թ. օգոստոսի 23
թվակիր զեկուցագրի պատճենը.

Երեկ կեսօրից հետո արտաքսված երրորդ խմբում գտնվում էին գլխավորապես միայն հարուստ հայ ընտանիքներ, որոնցից բոլոր հողատերերը իրենց մեկնելու նախօրեին ժամը 9-ին «Միություն և առաջադիմություն» ակումբի ծառայողի կողմից կանչվել են իրենց անշարժ կայքը դեֆտերհանեին հանձնելու նպատակով: Այդ հրամանին հայերը պիտի անհապաղ ենթարկվեին և հարկադրաբար իրենց անշարժ կայքը փոխանցեին թուրքերին, որոնց անունները միայն դեֆտերհանեում էին լսել: Մտիպողական վաճառքը հետևյալ կերպ է կատարվել.

Հայերը նշանակված ժամին կանչվել էին, և հենց որ հայտնվում էին դեֆտերհանեի առաջ, հայտարարում էին, որ իրենց հենց տունը կամ հողամասը կամավոր կերպով վաճառում են և որ իրենց առաջարկված գումարը համապատասխանում է վաճառվող գույքի արժեքին:

Այն սենյակում, որտեղ պաշտոնյան և մի քանի վկաներ էին գտնվում, մի սեղանի վրա դրամով լի մի պարկ էր դրված, որը հանձնվում էր վաճառողին ձևականություններն ավարտելուց հետո: Գնորդը պիտի դրամը հաշվեր, հայտարարեր, որ այն ճիշտ է և արդեն նախապես ստացված հանձնարարության համաձայն դրամը նորից դրվում էր պարկի մեջ:

Հագիվ սենյակից դուրս գալուց, վաճառողից դրամը թուրքերի կողմից, որոնք մուտքի մոտ սպասում էին, վերցվում էր և նույն դրամը պարունակող պարկը պիտի ծառայեր դրան հաջորդող ստիպողական վաճառքին:

Վաճառքները այնպիսի խորամանկ ձևով էին կատարվում, որ հայերը իրենց անշարժ կայքից, այլև նրանց վճարված նվազագույն համարժեքից տակավին դեֆտերհանեի շենքում կողոպտված էին զգում:

Հիշյալ երեկոյի թիվս այլ շենքերի Բրուսայի երկու գեղեցկագույն տուն փոխանցվեցին, և հատկապես մեկը «Միություն և առաջադիմություն» ակումբի անունով և մյուսը՝ կոմիտեի նախագահ Իրախիմ քեյի անունով:

Թեև այստեղի նահանգապետը բարի և արդարամիտ մարդու տպավորություն է թողնում և, ինչպես ես տեղեկացել եմ, հնարավորն է արել այդօրինակ բռնարարքներից խուսափելու համար, սակայն նա չունի այն իշխանությունը, որ կարողանար հակադրել «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամներին: Ես որոշակիորեն գիտեմ, որ նաև երեկ ամբողջ գիշերվա ընթացքում մմանօրինակ վաճառքներ կատարվել են:

Ջրույցի ընթացքում նահանգապետն ինձ զաղտնաբար հայտնեց, որ ինքը մի միջոց է փնտրում, որպեսի կասեցնի օրենքին հակասող այս վաճառքները, հնարավոր դեպքում նաև չեղյալ համարի դրանք:

Միաժամանակ նա ինձ ասաց, որ ինքն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել մեկնող հայերի անվտանգության համար:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p 4717-4719:

№ 40

Թիվ 318.

Թուրքիայից

Կոստանդնուպոլիս,
2 սեպտեմբերի, 1915

Այստեղ ամեն օր տեղի են ունենում հայերի նորանոր արտաքսումներ, մեծ մասամբ առանց վերջիններիս ընտանիքների վրա այդ միջոցառումը տարածելու, այն դեպքում, երբ արքայազներն այլ վայրերում, ինչպես Իզմիրում, Էրզրումում, Խարբերդում, Դիարբեքիքում, Մուսիկում, Կեսարիայում, Կոնիայում, մեծ մասամբ ընտանիքներով հանդերձ են տեղի ունենում: Աքսորվածների թիվը օրական 2-400-ի է հասնում: Ասում են, որ բոլոր հայերը Կոստանդնուպոլսից պիտի արքայազներին իրենց արքայազները չեն հայտնում: Արտաքին գործերի նախկին մինիստր Նորատունկյանը, ինչպես նաև փոստի նախկին մինիստր Ռսկան Էֆենդին, լավագույն մասնագետ մինիստրներից մեկը, փախուստի մեջ են: Հայտնի պատգամավոր Վարդգեսը արքայազն էր, սակայն կրկին վերադարձել է և նորից հիմա արքայազն էր: Նախկին պատգամավոր Չոհրաբը պիտի որ սպանված լինի:

Ներքին գործերի մինիստրությունում այժմ ոչ մի հայ չկա: Այլ մինիստրություններում ճիշտ է տակավին աշխատում են, սակայն նաև սրանք շուտով կհեռացվեն:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p 4720:

№ 41

Ավստրո-Հունգարիայի
կ. և թ. դեսպանություն

Ենիքոյ,
3 սեպտեմբերի, 1915

Առատանդնուպոլիս

72

Թիվ — H.

P.

Հայերի հետապնդումները.

1915թ. օգոստոսի 31

71 B

քվակիր —

P.

գեկուցագրի առթիվ

Նորին գերագանցություն կ. և ք. արքունի և արտաքին գործերի պարոն մինիստր՝ քարոն Ստեփան Բուրիանին

Այստեղի կաթոլիկ հայերը շարունակ լուրեր են ստանում Անգորայից և այլ վայրերից, որ հայ ազգաբնակչության դեմ ձեռնարկված բարբարոսական միջոցառումները տարածվում են մեծ մասամբ նաև կաթոլիկ հայերի վրա: Մի հռոմեադավան կաթոլիկ հոգևորական հավաստում էր ինձ, որ նույնը նաև Իզմիթում է տեղի ունենում:

Թալեաթ բեյի հետ իմ կրկնվող զրույցներում մշտապես ես նրա ուշադրությունն եմ հրավիրել հատկապես կաթոլիկ հայերի վրա, նա միշտ ինձ հավաստիացում էր տալիս, որ կաթոլիկ և բողոքական հայերը երկյուղելու ոչինչ չէին ունենալու: Ուստի և ներքին գործերի մինիստրի հավաստիացումները ցարդ ճշմարիտ դուրս չեկան:

Երեկ Թալեաթ բեյը մի հրամանի գերմաներեն քարգմանությունը մատուցեց իշխան Հոհենլոեին, որ նա ուղարկել է բոլոր մութասերիֆներին: Այդ ակնհայտորեն այն ցուցումն է, որի մասին մինիստրն ինձ վերջին երկուշաբթի օրն ասել է, և որն ես իմ վերոհիշյալ գեկուցագրում հիշատակել եմ: Գերմանացի դեսպանը ինձ համար կարդաց այդ հրամանը: Դրա մեջ կարգադրված էր, որ հայերի արտորումները դեպի ներքին (նահանգները) պիտի դադարեցվեն, հայերը, որոնք արդեն ուղևորվել են, պիտի հացով և ձիթապտղով բաժին ստանան: Հարձակումները նրանց, առանձնապես կանանց վրա պիտի խստագույնս պատժվեն և այլն:

Բացառված չպիտի համարել, որ այդ հրամանը հավանաբար այն նկատառումով է տրվել, որ գերմանական դեսպանի և իմ աչքերին փոշի փչեն և դրանից զատ մնում է սպասել, թե արդյոք այդ հրամանը, եթե իրոք այն արձակվել է, նաև կկիրառվի, քանզի բազմաթիվ

լուրեր են վկայում, որ ոչ միայն կոմիտեի բազում անդամներ և հրեաներ հայերի լքած կայքը և գույքը ջրի գնով գնելու շնորհիվ նշանակելի չափով հարստացել են, այլև իշխանություններն իրենց նյութական շահն ունեն հայերի զանգվածային արտաքսումներից:

Կ. և ք. դեսպան
(ստորագրություն)

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4721-4723:

№ 42

Ավստրո-հունգարական

կ. և ք. գլխավոր

հյուպատոսություն

Տրապիզոն

ZL. 54

Տրապիզոն,
4 սեպտեմբերի, 1915

P.

Նյութը. Հայերի արտորումը, բռնարարքները.

Նորին գերագանցություն կայսերական և քաղաքական արքունի և արտաքին գործերի պարոն մինիստր՝ քարոն Ստեփան Բուրիանին
Վիեննա

Ինչպես և պետք էր սպասել արտոնելու միջոցառումը իրագործելիս բազում հայեր սպանվեցին: Նախորդ ասույթները, որպիսիք են «Դուք կարիք չունեք շատ բան հետներդ վերցնելու», «Նրանք հետ չեն գալու այլևս», երեխաների վերաբերյալ «Նաև օձի ձագերն են վտանգավոր», թույլ է տալիս վատթարագույնն ակնկալելու: Հուսալի տվյալների հիման վրա պիտի ստորև բերվող մի քանի դեպքերը վերլուծել:

Մի թուրք սպայի հաղորդման համաձայն հուլիսի առաջին օրերին Համզի-Քիոյի մոտակայքում՝ Տրապիզոնից 52 կմ հեռավորությամբ, ռազմական աշխատանքներում օգտագործվող հարյուր երեսուներկու հայ է զնդակահարվել:

Այստեղի գերմանացի և ամերկացի հյուպատոսները, որոնք վալիի թույլատվությամբ ա/թ. հուլիսի 17-ին Էրզրումի փողոցներով զննողական մի ուղևորություն ձեռնարկեցին, մի դիակի հուղարկավորություն տեսան, մի մարդ առանց պահանջելու զեկուցեց, որ սրանից քիչ առաջ այլ դիակ է թաղվել:

Թուրքական միմյանց հավաստող հաղորդումների համաձայն *ս/ք. հուլիսին* և *օգոստոսին* այստեղ մի քանի հարյուր կին, երեխա և ծեր լաստանավերով ծով են տարվել և այնտեղ ջրասույզ արվել:

Ինչպես սրանից առաջ *Ռեժիի*¹ և *Դետտե Պուրլիկի*² հայ ծառայողները, *ս/ք. օգոստոսի 17-ին* գիշերով Օսմանյան բանկի երեք ծառայող ձեռքակալվել և ընդհանուրի ենթադրությամբ, ինչպես նաև հայ մուխտարը (ժանդարներիայի պետը և նրա կինը, որոնց համար գերմանական հյուպատոսն էր բարեխոսել) քաղաքից դուրս սպանվել են:

Նամաօրինակ ողբալի միջադեպեր է հաղորդում հյուպատոսության *ս/ք. օգոստոսի 1-ի* թվակիր թիվ 52 գեկուցագիրը *Կերասունտից*. այսպես՝ *հուլիսի 28-ին* *Կերասունտի* և *Օրդուլի* միջև ծովում տարուրերվող մոտ 60 մերկ դիակներ են հաշվել: *Կերասունտի* հայերի մեծ մասը *Կոուլակ-Կայայի* մոտ ժանդարմների կողմից կողոպտվել և հետո սպանվել են:

Մամսունում մեր փոխհյուպատոսի *ս/ք. օգոստոսի 11-ի* թվակիր 138 մի գեկուցագիր հիշատակում է մոտ 1200 հայերի *Մերսիֆունում* և մոտ 1600-ի *Ամասիայում* սպանությունը:

Վերջերս *Կոստանդնուպոլսից* Մվազի վրայով այստեղ ժամանած վրացական կոմիտեի երկու անդամ լրացուցիչ ինձ հաղորդեցին դեպի երկրի խորքերը հազարավոր արսուրյալ հայերի անսահման թշվառության, դիակների կույտերի գոյության և թուրք սպաների և պաշտոնյաների բացահայտ խոստովանության մասին, որ հայերը *րնաջնջվելու* են:

Բազմահազար հայեր այսպես պիտի գրկված լինեն իրենց կյանքից և այս անգամ գոհերի թվաքանակը շատ ավելի նշանակելի է, քան համիդյան կոտորածների ժամանակ: Ընդհիվ ներկայիս իրենց համար նպաստավոր հանգամանքների թուրքերի համար հայկական հարցը լուծված է թվում:

Հայերի ինչպես կյանքն, այնպես էլ ունեցվածքը ճակատագրի քմահաճույքին է թողնված: «Որոշ սպաներ, պաշտոնյաներ, ոստիկանությունը կաղոպտել են հայերին» ասաց ինձ մի սպա, այն ժամանակ, երբ արդարադատության բարձրաստիճան մի պաշտոնյան պնդում էր, որ հայերի դրամագումարի և զարդեղենի կեսից ավելին չքացել է: Իրականում, ըստ թուրքական հաղորդումների, գտածո-

ներն աննշան են, որ հազիվ 1200 թուրքական լիրա, 7500 ռուբլի կազմի, շատ քիչ զարդեղեն և զորզեղեն է բերվել: Քաղաքում և մերձակայքում կասկածելի արտաքինով անձինք և զինվորները առաջարկում են մատանիներ, ինչպես նաև այլ զարդեր գնել, երբեմն հրաժարում են ստանում:

Կերասունտում, որտեղ հայերի ունեցվածքը զուտ դրամով 10000 թուրքական լիրա է գնահատվել, կարողացան միայն 102 թուրքական լիրան պաշտոնապես ապահովել:

Այդօրինակ գործելապերայի դեպքում հիմնավոր են հայերի արտասահմանյան վարկատուներին բավարարում տալու առթիվ երկյուղները (Հմմ. *ս/ք. 1915թ. 16 օգոստոսի* թվակիր, *ZL. 270* գեկուցագրի հետ):

Մի անգամ ևս պետք է հիշեցնել, որ այստեղի թուրքական շրջաններում տարածում է ստացել այն ենթադրությունը, թե *Գերմանիան* հայերի դեմ ձեռնարկած գործելապերայի հետ համաձայն է:

Համահնչուն գեկուցագիր են ես ուղարկել *Կոստանդնուպոլիս*:

Կ. և ք. հյուպատոս (ատորագրություն)

Կոստանդնուպոլսի կ. և ք. դեսպանության միջոցով

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4724-4726:

№ 43

*14 սեպտեմբերի, 1915
Ավստրո-հունգարական
կ. և ք. դեսպանություն
Կոստանդնուպոլիս
73 A-B.*

*Թիվ —————
P.*

*Ենիքոյ,
8 սեպտեմբերի, 1915*

*Հայերի հետապնդումները
1915թ. սեպտեմբերի 3*

¹ Ծխախոտի ֆրանսիական ընկերություն:

² Հանրային պարտքի վարչություն:

քվակիր —
P.

Նորին գերազանցություն կ. և ք. արքունի և արտաքին գործերի պարոն մինիստր՝ քարոն Ստեփան Բուրխանին

Չնայած Թալեաթ բեյի հավաստիացումներին, համաձայն որի նա խիստ ցուցումներ է տվել հայերի հետապնդումները դադարեցնել և թեև նա իշխան Հոհենլոբեին նման մի հրամանի գերմաներեն տեքստն է մատուցել, երևում է հայերի վիճակի մեջ ցարդ տակավին ոչ մի բարելավում տեղի չի ունեցել: Ինչպես հայ կաթոլիկ պատրիարքարանի, այնպես էլ կաթոլիկ հոգևորական շրջանների կողմից ինձ են հասնում շարունակ համապատասխան գանգատներ և այդ մասին հայտնում է կ. և ք. գլխավոր հյուպատոսության խորհրդակալնը, այնտեղի ասորի կաթոլիկների պատրիարքի լուրերի համաձայն երկրի ներքին նահանգներում կոտորածներ են տեղի ունենում, որոնցից գերծ չեն մնում կաթոլիկ հայերը և մարդիկ. քաղաքի նրանց եպիսկոպոսը բազում հոգևորականների հետ պիտի զոհված լինի, պատրիարքն էլ դեպի Հաուրան է տարագրվել:

Իհարկե հնարավորության սահմաններում կլինեք, որ այդ լուրերի հիմքում փաստեր են ընկած, որոնք տակավին տեղի են ունեցել Թալեաթ բեյի հիշյալ հրամանից առաջ և հիմա հավանաբար հայերի՝ առնվազն կաթոլիկ մասի վիճակում բարելավում տեղի կունենա, այնուամենայնիվ ինձ թվում է դրա համար իմ համապատասխան զեկուցագրերում հիշատակված հիմքերը և քանզի թուրքերը ակնհայտորեն նաև այժմ կրկին կրկնակի խաղ են կամենում խաղալ, աննշան չափով են ճշմարիտ:

Ինչպես ես ներքին գործերի մինիստրության հենց ոստիկանության բաժնից տեղեկացա, հավանաբար գրավոր հրամաններն ուղարկվել են նահանգներ, որ կաթոլիկներին թույլատրեն իրենց բնակավայրերը վերադառնալ, սակայն վերջերս Ռազմական մինիստրը մի հրաման է արձակել, որի համաձայն հայերը, անկախ դավանանքից, այնպես պիտի տեղաբաշխվեն, որ նրանք ոչ մի տեղ ազգաբնակչության 5%-ից ավելին չկազմեն:

Սակայն Թալեաթ բեյի հրամանի արդյունքն իրականում ռազմական մինիստրի այդ հրամանի հետևանքով գործությունը կորցնելու է: Նույն հիմնարկի տեղեկությունների համաձայն, մոհաջիրնե-

րի¹ գործերի պետը ընդհանրապես Փոքր Ասիա է ուղարկվելու, որ այնտեղ ազգաբնակչության կարգադրված ներհոսը ինչ-որ չափով կարգավորի: Քանի որ այս գործչի խնդիրը սովորաբար այն է, որ Թուրքիա ներգաղթած մահմեդական ներգաղթյալներին աջակցություն ցույց տա, վերջիններս սակայն այստեղ մեծ չքավորության մեջ են, այնպես որ ինձ թվում է, որ մոհաջիրների գործերի հիշյալ պետի արտաքսումից, մահմեդական ներգաղթյալները պիտի շահեն և ոչ թե ինչպես իրենց օջախներից տարագրված հայերը կկարողանան շահ կորզել:

Բոլոր դեպքերում այդ միջոցառումը ներքին գործերի մինիստրի և ռազմական մինիստրի վերոհիշյալ հրամանների հետ մեկտեղ վկայում է, թե թուրքական ազդեցիկ գործոնների վրա ազդեցությունն ինչպիսի դժվարությունների է հանդիպելու, երբ այն դրսևորվում է մի ձևով, որը ձևականորեն շեղվում է «սուվերեն Թուրքիայի ներքին գործեր» սիրված արտահայտության մատնանշմամբ այն անհնարին է դարձնում:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4732-4735:

№ 44

*Կ. և ք. գլխավոր շտաբի տեղեկատու բյուրո
Քաղվածքներ կ. և ք. ներկայացուցչությունների զեկուցագրերից
Հերթական համարը, Կոստանդնուպոլսի
1 Կ. և ք. ներկայացուցչություն
ամսաթիվ 12/9*

Բովանդակության համառոտագրություն.
Հայերի վիճակը Թուրքիայում հուսահատական է, թվում է, որ թուրքական կառավարությունը նախատեսել է ամբողջ հայկական ցեղի ոչնչացումը:

Հաշտության կնքման ժամանակ և դրանից հետո Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան հայերի դեմ թուրքական կառավարության գործած նողկալի սարսափների համար մեղադրելու են նրան:

Կշտամբանքը սակայն մեծ մասամբ նաև Գերմանիային է հասել, որին թուրքական կառավարության բոլոր գործողությունների հետ համերաշխություն են հակառակորդները վերագրում:

¹ Վերաբնակվողների:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4736:

№ 45

Թիվ 303.

ՆԵՐՔԻՆ

Հայկական. Ես նախ կրկնում եմ իմ կարծիքը, հայկական տարրի երիտթուրքական կրճատումը և հետ վանումը դեպի երկրի խորքը ներկա պատերազմական ժամանակ և հանգամանքում հանճարեղ մի պետական գործ է: Հայկական տվյալներով բնաջնջված հայերի թվաքանակը հասնում է մեկ միլիոնի, ինչն անկասկած չափազանց ուռճացված է (հայ ընդհանուր ազգաբնակչությունը հաշվովում էր երկու միլիոն): Հայերի կողմից Վանի, Էրզրումի և այլ վիլայեթներում կոտորած թուրքերի առավելագույն թիվն ըստ թուրքական տվյալների հասնում է 80000 ? Իզմիթի սանջակը նույնպես գրեթե ամբողջապես հայաթափ է արվել, քանզի հրդեհները և թշնամու հետ այլ համաձայնություններ բարդվում էին նրանց հանցանքների հաշվեկշռի վրա: Թուրքերի կատարած կոտորածների մասին լուրերը գալիս են Անգորայից. 8000 հայեր այնտեղ անհետացել են, նրանց կանանց և երեխաներին պիտի մի անգարում փակեն և առաջինները օգտագործվելու են թուրքերի կողմից: Այստեղից առայժմ միայն չանունացած հայերն են նահանգից արտաքսվելու: Ընդհանուր բռնարարներին հետևում են հաջորդ հատուկ արարքներ, թռչակավորում և նույն ժամական հայ պաշտոնյաների արքորում: Հայկական տվյալների համաձայն այժմ պիտի հայ պաշտոնյաների նախկին քանակի հազիվ 2% ծառայության մեջ մնացած լինի: Այսպես, օրինակ, շինարարության մինիստրությունում նախկին 150-ից միայն 5-ն է մնացել: Հայերը և ընդհանրապես քրիստոնյաներն, ինչպես արդեն ասվեց, հայերի նկատմամբ կիրառած թուրքական այս հալածանքները բարդում են գերմանացիների վրա, գերմանական հակաքայլերի մասին նրանք ոչինչ չգիտեն և երբ դրանք նաև ապարդյուն են, գերմանական հեղինակությանը ոչ մի օգուտ չի բերում:

Կաթոլիկները. Հայ առաքելականների նկատմամբ գործադրված բռնարարները տարածվում են նաև հայ կաթոլիկների վրա: Գրեթե բոլոր կաթոլիկ հայերը քրիստոնյաներին հալածելու հետևանքով էլ ավելի թուրքատյաց են դարձել, քան նրանք էին առանց այդ

էլ, վարկաբեկվում կամ թուրքական կողմի համար կասկածելի են դառնում, այստեղից էլ հետևում է կաթոլիկների դեմ վերջին ժամանակ դրսևորվող թուրքական միջոցառումները և միջամտություններն այս դեպքում չեն օգնում կամ շատ քիչ են օգնում, և նյարդայնացնում են թուրքերին, դառնացնում, և վնասում տարագրյալների շահերին:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4729:

№ 46

Թիվ 336.

Հայկական հարցի առթիվ.

Կոստանդնուպոլիս,
12 սեպտեմբերի, 1915

Հայերի վիճակը Թուրքիայում գնահատվում է որպես հուսահատական: Բանն այն է, որ խոսքը այլևս հազիվ թե վերաբերվում է այն տարրերի արքորելուն, որոնց կամենում էին Վանում տեղափոխման ընթացության հետ կապել, այլ ընդհանուր առմամբ ցեղի դեմ ձեռնարկված բնաջնջման քայլերին: Նահանգներում, քաղաքներում, որպիսիք են Իզմիթը, Էրզրումը, Խարբերդը, Գիարբեքիթը, Բիթլիսը, Մուշը, Կեսարիան, Կոնիան և այլն, ընտանիքներն արքորելու հրաման է եկել. ընտանիքներ, որոնք մի քանի ժամում բնակավայրը պետք է թողնեն և մի ուրիշ տեղ արքորվեն, որտեղ նրանք չէին կարող հասնել, քանզի անհրաժեշտ կանխիկ դրամական միջոցը չէին կարողանում այդպես արագ հայթայթել, բավականաչափ սննդամթերք չէին կարողանում հետները վերցնել և ճանապարհին ոչ մի օթևան չէին կարող գտնել:

Հաշտություն կնքելուց հետո և այդ ընթացքում իհարկե կքննարկվեն այն բռնարարքները և սարսափները, որոնց զոհ դարձան հայերը: Ռուսները, անգլիացիները և ֆրանսիացիները չեն գլանա հարուստ նյութերի հիման վրա հայկական հարցը քննարկել և գոհունակությամբ անարգանքի սյունին կզամեն անտարբերությունը, որին այս այնուամենայնիվ բարձր զարգացած ցեղը զոհ դարձավ: Հարկ է երկյուղել, որ այդ մեղադրանքը զգալիորեն բաժին է ընկնելու Գերմանիային, քանզի այն գովեստը, որ գերմանական կողմ շռայլում է առատորեն Թուրքիայի հանդեպ դիտվելու է ընդհանրապես որպես Թուրքիայի գործողությունների հավանություն: Թուրքական ծանր սխալների մեղքի մեծ մասը բարդվելու է Գերմանիայի վրա, քանզի հակառակորդները կհավատացնեն, որ Թուրքիան, որն ամեն

ինչում հետևում է գերմանական նախաձեռնությանը, նաև հայերին հալածելը նույնպես Գերմանիայի գիտությանը և լռելայն համաձայնությանը է կատարվել:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4737:

№ 47

*Ավստրո-հունգարական կ. և ք.
հյուպատոսություն
Թիվ 62/P.
Հայ արքայալները*

*Դամասկոս,
24 սեպտեմբերի, 1915*

*Նորին գերագանցություն կ. և ք. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ բարոն Ստեփան Բուրիանին*

Սեպտեմբերի 1-ց մինչև 15-ն ընկած ժամանակահատվածում Դամասկոս են եկել իրենց հայրենիքից հարկադրաբար արքորված 22000 հայեր և իրենց զալստյան օրից համապատասխանաբար 2-3 օր հանգրվանելուց հետո ամբողջապես դեպի հարավ են տարագրվելու: Նշված ժամկետից հետո միայն մի քանի հարյուրով է ավելացել եկածների քվաքանակը:

Դամասկոսի վրայով եկածները հիմնականում Դամասկոսի վիլայեթում են հարկադրաբար տեղաբաշխվում, սակայն վիլայեթի հյուսիսային մասերում էլ, Համա սանջակում և Բիկա-Էբենում ևս բազմահազար (տարագրյալներ) են թողնվել, որպեսզի այնտեղ բնակություն հաստատեն: Դամասկոսից, որտեղ տեղ չկա արքարաբնակների համար, կարավանները ամբողջապես այնուհետև դեպի Արևելյան Հորդանան են գնալու, որտեղ հյուսիսում՝ Աջկունից մինչև հարավում՝ Տաֆիլե ընկած տարածքը պիտի բնակեցվի տարագրյալներով: Մալտ, Կերակ և Մասան շրջաններն ընդգրկելու են կոնտինգենտի մեծագույն մասը:

Սեպտեմբերի 1-ից հետո եկած կարավանները ի տարբերություն նախորդների (տես ս/ք. 28.08 թիվ 54/P զեկուցագիրը) բաղկացած են գրեթե միայն հայ առաքելական դավանանքին պատկանող հայերից՝ Հալեպ և Ադանա նահանգներից, հատկապես Մարաշի, Այնթափի, Տարսուսի և Ալեքսանդրեոսի շրջաններից: Այլ դավանանքներին պատկանողները այնքան աննշան թիվ էին կազմում, որ թվում է, արդյոք նրանք սխալմամբ չեն ներառնվել արքորի մեջ և ըստ լու-

րերի հայ առաքելական դավանանքին պատկանող հայերի արքորը սահմանափակելու մասին Կոստանդնուպոլսից արձակած հրամանից հետո է փաստորեն տեղի ունեցել: Այնուամենայնիվ ներկա և նախկին կարավանների հետ այստեղ բերված քրիստոնեական այլ դավանանքների պատկանողները մյուսներին հավասար արքորվեցին, առանց այդ դավանանքների տեղի հոգևորականության միջնորդությունը հարգելու:

Վերջին համադրվող ցուցակներից հետևում է, որ հաճախ ընտանիքներն արքորի ժամանակ բաժանվում էին հասուն տարիքի տղամարդկանցից: Այսպես, օրինակ 120 հայ կաթոլիկներից 80-ը Մարդինից արքորված կանայք, երեխաներ և ծերեր են, Կեսարիայից և Քեսաբից արքորվածները կազմված են միայն 20-50 տարիքի հասակ ունեցող տղամարդկանցից: Մնացյալների մեծամասնությունը պատկանում են տարագրյալների առաջին կատեգորիային:

Օտար երկրում թե ինչ ճակատագիր է սպասում իրենց կերակրողներից գրկված ընտանիքներին, որտեղ նրանք գուրկ են բոլոր կենսապայմաններից գրեթե կասկածից դուրս է: Թեև պաշտոնական կողմը հավաստում է, որ նրանց բնակարան (կացարան) և մշակելի հող է տրվելու: Իրականում դա մի վայրում Մեսմիյեում էր պատահել, որտեղ կառավարությունը մահմեդական փախստականների¹ համար նախկինում նախապատրաստել էր, որոնք, այսուհետև հայերի կողմից կարող են զբաղեցված լինել: Սակայն այդ բացառությամբ հանդերձ օգնությունը խիստ անհուսալի է:

Դամասկոսում իրենց գտնվելու ժամանակ նրանց որպես կալանավոր են պահել և յուրաքանչյուր մարդու արգելված էր նրանց հետ առնչվելը, նույնիսկ քահանաներին թույլատվում էր միայն հիվանդներին այցելեն: Այդուհանդերձ որոշ անձանց հաջողվեց ճանապարհից փախչել և քաղաքում իրենց դավանակիցների շրջանում թաքստոց գտնել, որտեղ նրանք թաքնված մնում են:

Այստեղի ուշադրության արժանի կաթոլիկական բոլոր դավանանքների վարչությունները, որոնցից ասորական-կաթոլիկականը մի արքեպիսկոպոս, քաղկեդոնականը և հայ կաթոլիկականը մի այլ արքեպիսկոպոս են ներկայացնում, հյուպատոսության միջոցով կ. և ք. կառավարության միջամտությունն են հայցում, որպեսզի այն կաթոլիկների վիճակը մեղմելու օգտին հանդես գալ կարողանա, հատկապես քանի որ կաթոլիկական դավանանքին պատկանողների ծխական համայնքը, ինչպես ասպացուցված է, պետության դեմ թշնա-

¹ Մոնաշիքների:

մական ուսնձգություններին ոչ մի մասնակցություն չի ունեցել, նրանք արքայազնուց զերծ մնան և արդեն արքայազններին եթե ոչ վերադարձ իրենց հայրենիք, ապա զեթ Դամասկոսում մնալ թույլատրվի:

Նույնիմաստ զեկուցագիր նույն ամսաթվով և նույն համարով էս ուղարկել են Կոստանդնուպոլիս:

*Կ. և թ. գլխավոր հյուպատոս
(ստորագրություն)*

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4741-4744:

№ 48

Թիվ 79/P.-A.

*Կոստանդնուպոլիս,
30 սեպտեմբերի, 1915*

*Հայերի արտոմունքի դեպի
Փոքր Ասիայի խորքերը.*

Կոմս Տրաուտմանդորֆը բարոն Բուրիանին.

Այն բոլոր լուրերը, որոնք հայկական կողմից են ծագում և Փոքր Ասիայի խորքերից այստեղ են ներթափանցում, հաղորդում են չլաված զազանությունների մասին, որ տեղի են ունենում հայերին արքայազնու առնչությամբ: Կարելի էր համաձայնվել, որ այդ լուրերը իրենց աղբյուրները նկատի առնելով չափազանցված կարող էին լինել, սակայն ցավոք դրանք իրենց հաստատումն են գտնում այստեղի բանկերի և մասնաճյուղերի զեկուցագրերով, վերադարձած զերմանացի սպաների և այլոց ցուցումներով:

Ականատեսները պատմում են սահմուկեցուցիչ տեսարանների մասին, որոնք տեղի են ունենում հայերով բնակեցված գյուղերի էվակուացման ժամանակ: Նույն իմաստով զեկուցում են Դամասկոսում և Տրապիզոնում գտնվող հյուպատոսության մեր ծառայողները: Տղամարդիկ մեծ մասամբ կտորվել են, կանանց և երեխաներին ջրի զնով վաճառել են թուրքերին: Նրանք, որոնք դեպի երկրի խորքերն էին ճանապարհվել, հասան իրենց նպատակակետին մեկ տասներորդից ավելի նվազ թվաքանակով, քանզի ճանապարհին զրկանքների, հիվանդությունների և հյուժվածության պատճառով մահացել են: Այսօր արդեն չի կարելի ժխտել, որ թուրքերը անկասկած պետա-

կան դավաճանության և կոչերի բազում անգամ արծարծված դեպքերը որպես առիթ են օգտագործել, որպեսզի հայ ցեղը բնաջնջելը իրագործեն, ինչը, թվում է, նրանց մեծ մասամբ հաջողվել է: Թալեաթ բեյը ասում էր ինձ վերջերս անձամբ հայտնի գոհունակությամբ, որ օրինակ, Էրզրումում հազիվ թե այլևս հայ մնացած լինի: Բոլոր լուրերը համընկնում են այն իրողությամբ, որ հայերի դեմ կառավարության նորերես գործադրած միջոցառումները անհամեմատ ավելի շատ մարդկային կյանքեր խլեցին, քան Արդուլ Համիդի կոտորածները:

Թուրքերի ներկայումս իշխող անչափ ուռճացած ազգայնամոլությունը դա իր բարձրակետին հասած ատելությունն է օտարների և քրիստոնյաների նկատմամբ: Չպետք է զարմանալ, որ Թուրքիայում բազմաթիվ հույներ համակված են բավականին անհանգստությամբ:

Հունաստանի հետ հարաբերություններում առկա անհուսալիությունը կարող է այդ անհանգստությունը միայն մեծացնել:

Նախորդ շաբաթ Հունաստանում կատարված մորիլիզացիան այնուամենայնիվ այստեղ համեմատաբար հանգիստ ընկալվեց և ես պիտի հավատամ և հուսամ, որ թուրքական կողմը ամեն ինչ կանի, որպեսզի խուսափի չմտածված միջոցառումներից, ինչպես հաճախ պատահել է, որ հունական կառավարությանը առիթ չտա բարդությունների դիմելու և դրանով իսկ վատացնելու երկու երկրների փոխհարաբերությունները:

Եթե իրադարձությունների հետագա զարգացումը հանգեցնի պատերազմական իրավիճակի, ապա ես պիտի երկյուղեմ, որ Թուրքիան, որը պատրանքների մեջ է գտնվում, թե հայ ցեղի բնաջնջումը կարող է անպատիժ իրագործել, որ հանգամանքից օգտվել կկարողանա հույների դեմ ևս բռնարարքներ և զանգվածային արքայազնու ձեռնարկել: Եթե այդօրինակ միջոցառումները գործնականում անիրականանալի լինեն էլ, հույներին սպասում է նույն ճակատագիրը, ինչ բաժին ընկավ հայերին վերջին ամիսներին:

Եթե՝ ըստ թուրքական պատկերացմամբ՝ հայերի վրա մեղք էին բարդում, որ թուրքը Թուրքիայում ոչ մի տնտեսական վերելք չէր կարողանում ձեռք բերել, ապա այս տեսությունը նույն կերպ հույներին կիրառելի դառնալ: Քանզի հայերի կողքին գտնվում են հույները, որոնց ձեռքերում է գտնվում առևտուրն ու տնտեսական կյանքը Թուրքիայում:

Սակայն նույնկերպ ինչպես հայերին հալածելու մեղքը կենտրոնական տերությունների ազդեցությանն են վերագրում և առաջին հերթին Գերմանիային են մեղադրում, Անտանտի տերություննե-

մական ոտնձգություններին ոչ մի մասնակցություն չի ունեցել, նրանք արտրվելուց զերծ մնան և արդեն արտրվածներին եթե ոչ վերադարձ իրենց հայրենիք, ապա զեք Դամասկոսում մնալ թույլատրվի:

Նույնիմաստ զեկուցագիր նույն ամսաթվով և նույն համարով ես ուղարկել եմ Կոստանդնուպոլիս:

*Կ. և թ. գլխավոր հյուպատոս
(ստորագրություն)*

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4741-4744:

№ 48

Թիվ 79/P.-A.

*Կոստանդնուպոլիս,
30 սեպտեմբերի, 1915*

*Հայերի արտրումը դեպի
Փոքր Ասիայի խորքերը.*

Կոնս Տրատումանդորֆը բարոն Բուրիանին.

Այն բոլոր լուրերը, որոնք հայկական կողմից են ծագում և Փոքր Ասիայի խորքերից այստեղ են ներթափանցում, հաղորդում են չլաված զազանությունների մասին, որ տեղի են ունենում հայերին արտրելու առնչությամբ: Կարելի էր համաձայնվել, որ այդ լուրերը իրենց աղբյուրները նկատի առնելով չափազանցված կարող էին լինել, սակայն ցավոք դրանք իրենց հաստոտումն են գտնում այստեղի բանկերի և մասնաճյուղերի զեկուցագրերով, վերադարձած զերմանացի սպաների և այլոց ցուցումներով:

Ականատեսները պատմում են սահմեկեցուցիչ տեսարանների մասին, որոնք տեղի են ունենում հայերով բնակեցված գյուղերի էվակուացման ժամանակ: Նույն իմաստով զեկուցում են Դամասկոսում և Տրապիզոնում գտնվող հյուպատոսության մեր ծառայողները: Տղամարդիկ մեծ մասամբ կոտորվել են, կանանց և երեխաներին ջրի գնով վաճառել են թուրքերին: Նրանք, որոնք դեպի երկրի խորքերն էին ճանապարհվել, հասան իրենց նպատակակետին մեկ տասներորդից ավելի նվազ թվաքանակով, քանզի ճանապարհին զրկանքների, հիվանդությունների և հյուծվածության պատճառով մահացել են: Այսօր արդեն չի կարելի ժխտել, որ թուրքերը անկասկած պետա-

կան դավաճանության և կոչերի բազում անգամ արծարծված դեպքերը որպես առիթ են օգտագործել, որպեսզի հայ ցեղը բնաջնջելը իրագործեն, ինչը, թվում է, նրանց մեծ մասամբ հաջողվել է: Թալեսաթ բեյը ասում էր ինձ վերջերս անձամբ հայտնի գոհունակությամբ, որ օրինակ, Էրզրումում հազիվ թե այլևս հայ մնացած լինի: Բոլոր լուրերը համընկնում են այն իրողությամբ, որ հայերի դեմ կառավարության նորերես գործադրած միջոցառումները անհամեմատ ավելի շատ մարդկային կյանքեր խլեցին, քան Արդուլ Համիդի կոտորածները:

Թուրքերի ներկայումս իշխող անչափ ուռճացած ազգայնամոլությունը դա իր բարձրակետին հասած ատելությունն է օտարների և քրիստոնյաների նկատմամբ: Չպետք է զարմանալ, որ Թուրքիայում բազմաթիվ հույներ համակված են բավականին անհանգստությամբ:

Հունաստանի հետ հարաբերություններում առկա անհուսալիությունը կարող է այդ անհանգստությունը միայն մեծացնել:

Նախորդ շաբաթ Հունաստանում կատարված մորիլիզացիան այնուամենայնիվ այստեղ համեմատաբար հանգիստ ընկալվեց և ես պիտի հավատամ և հուսամ, որ թուրքական կողմը ամեն ինչ կանի, որպեսզի խուսափի չմտածված միջոցառումներից, ինչպես հաճախ պատահել է, որ հունական կառավարությանը առիթ չտա բարդությունների դիմելու և դրանով իսկ վատացնելու երկու երկրների փոխհարաբերությունները:

Եթե իրադարձությունների հետագա զարգացումը հանգեցնի պատերազմական իրավիճակի, ապա ես պիտի երկյուղեմ, որ Թուրքիան, որը պատրանքների մեջ է գտնվում, թե հայ ցեղի բնաջնջումը կարող է անպատիժ իրագործել, որ հանգամանքից օգտվել կկարողանա հույների դեմ ևս բռնարարքներ և զանգվածային արտրումներ ձեռնարկել: Եթե այդօրինակ միջոցառումները գործնականում անիրականանալի լինեն էլ, հույներին սպասում է նույն ճակատագիրը, ինչ բաժին ընկավ հայերին վերջին ամիսներին:

Եթե՝ ըստ թուրքական պատկերացմամբ՝ հայերի վրա մեղք էին բարդում, որ թուրքը Թուրքիայում ոչ մի տնտեսական վերելք չէր կարողանում ձեռք բերել, ապա այս տեսությունը նույն կերպ հույներին կիրառելի դառնալ: Քանզի հայերի կողքին գտնվում են հույները, որոնց ձեռքերում է գտնվում առևտուրն ու տնտեսական կյանքը Թուրքիայում:

Սակայն նույնկերպ ինչպես հայերին հալածելու մեղքը կենտրոնական տերությունների ազդեցությանն են վերագրում և առաջին հերթին Գերմանիային են մեղադրում, Անտանտի տերություննե-

րը, եթե հույների հետապնդումները մեծ քափ առնեն, այդ մասին ևս հոգ կտանեն, որ ամեն մի քաղաքականության նկատմամբ ազադակող հակասության մեջ գտնվող թուրքերի բռնարարքները տվյալ դեպքում և անշուշտ մեծ մասով կվերագրվի տևտոնական բարբարոսներին:

Կ. և ք. գլխավոր հյուպատոսություն

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4754-4755:

№ 49

Թիվ 619.

8 հոկտեմբերի, 1915

Քաղվածքներ

Կոստանդնուպոլսում Կ. և ք. զինվորական կցորդի զեկուցագրերից

Հայերի հալածանքները Թուրքիայում

Մի հատուկ օրենքով բանակների, կորպուսների և ինքնուրույն դիվիզիաների հրամանատարները իրենց ռազմական գործողությունների տարածքից անբարեհույս բնակչությանը հարկադրաբար վերաբնակեցնելու լիազորություն են ստացել: Այս միջոցառումը արտակարգ խստությամբ գործադրվել է հատկապես հայերի նկատմամբ, այո, թվում է, թե ընդհանրապես այս օրենքը միայն նրա համար է ստեղծվել, որպեսզի հայերի ամբողջապես բնաջնջումը օրենքի հովանու ներքո կարողանան իրագործել:

Ամբողջ շրջաններ այդպիսով ամայացվեցին, շատ վայրերում ընկած են սպանված, չքաղված հայեր:

Միջոցառումը ունեցավ նաև տնտեսական վտանգավոր հետևանքներ, որոնք շատ դեպքերում նաև օտարերկրյա հպատակներին բաժին ընկան:

Թուրքական շրջաններում նկատելի է դառնում այն կարծիքը, որ Թուրքական կառավարության հայերի դեմ ձեռնարկած վարվելակերպը կատարվել է Գերմանիայի համաձայնությամբ:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4765-4766:

ԽԻՍՏ ԳԱՂՏԻ

ԱՅՈՐԻՍՏԱԿԱՆ ՉԵԿՈՒՑԱԳՐԵՐ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՄԱՍԻՆ

I թիվ (№) 313, ներքին

ՀԱՅԵՐԻ ԲՆԱԶՆՁՈՒՄԸ. Դրանք մեծ չափեր են ընդունում: Երկրի խորքերից այստեղ եկած կաթոլիկ քահանաները, բողոքական միսիոներները, սակայն նաև տեղաբնիկներ և օտար դավանանքի պատկանող անձինք սարսափելի իրողություններ են պատմում, որոնք իհարկե հնարավոր չէ ստուգել: Սակայն եթե նույնիսկ մեկ տասներորդ մասը ճշմարիտ լինի, ապա այդ բավականին սարսափելի և վշտալի կլինի: Բնաջնջումը տեղ առ տեղ տարածվել է նաև Հռոմին միացած արևելյան դավանանքին պատկանողների վրա. կաթոլիկ հայեր, ասորիներ, քաղղեացիներ (առանձին դեպքերի մասին ընտանիքի անդամներից ես հավաստի հաղորդումներ եմ լսել), նաև այսպես կոչված մարոնետներ նախկինում արտոնյալ Լիբանան նահանգում: Ես արդեն կրկին մատնանշում եմ, որ պետական բարձր շահերի տեսակետով և մասշտաբներով գնահատելիս, հայկական տարրի նվազեցումը մի պետական կարևորություն ունեցող համարձակ ձեռնարկում էր և նպաստավոր հանգամանքի հմուտ օգտագործում էր և ապստամբություն նախապատրաստած հայերի դեմ անհրաժեշտ միջոցառում էր: Սակայն հոգևորականները, որոնք պետական կախարդ գործիչ Թալեաթի և ընկերների դեմ կոչ կանեն, նրանք ի վիճակի չեն և չեն կարող ոչ սանձել և ոչ էլ կաշկանդել: Միջոցառման և հրամանների չարաշահումները և մեծ սանձարձակությունները ազգայնականությամբ, թուրքականությամբ, թուրանականությամբ, ազգայնամոլությամբ հանդերձ և նաև պատերազմով հրահրված թուրքերի, քրդերի ու այլ մահմեդական ցեղերի պատերազմական ու կողոպտիչ ատավիստական վայրի կրքերը և բնագղն է մեղավոր:

Տնտեսական առումով հայերի բնաջնջումից շահում են ոչ թե թուրքերը, այլ հույները և ուրիշները:

Ես նաև գրուցել եմ այստեղով Երուսաղեմ ուղևորվող Փոքր Ասիայում կաթոլիկական եկեղեցական գործերի տնօրեն հայր Դուկելի հետ, որի նստավայրը գտնվում է Երուսաղեմում: Նա վաղը մեկնում է Գերմանիա՝ հաշվետվության: Նա ինձ ասաց, որ նա իր կարգինալից և մյուս պետերից ստացած հանձնարարություններից նկատել է, որ Եվրոպայում ոչ մի պատկերացում չունեն հայերին կոտորելու մասին և որ նաև կաթոլիկների վրա է տարածվել այդ ոչնչացման միջոցառումները: Բնաջնջված հայերի ընդհանուր թիվը նա նույնպես մեկ միլիոնից ավել է համարում:

Հալեպից մինչև այստեղ նա հանդիպել է հայերի քարավանների, որոնց թիվը նրա գնահատմամբ 50000 հոգուց անցնում էր: Սկզբնապես քարավանները բավականին լավ տեսք ունեին, սակայն մինչև Հալեպ հասնելը սայլերը, լուծը, անասունները և այլն կերի պակասության պատճառով թողնվում էին տեղում և զալիս էին բոլոր մարդիկ կիսով չափ սովահար և հիվանդ ու մահանում էին, ինչպես նա անձամբ տեսել և հաշվել է օրական հարյուրից ավելի: Եթե նրանք այս կամ այն հանգրվանում չէին մահանում, ապա վախճանվում էին իրենց նշանակման վայրերում, որտեղ նրանք ոչ մի կենսամիջոցներ չունեին և որտեղ պետականորեն նախապատրաստված ոչ մի պաշար չկար:

Բնաջնջումը տարածվում էր նաև կաթոլիկ հայերի, ասորիների և քաղղեացիների վրա, հավաստում է նաև իմ երաշխավորյալը: Եպիսկոպոսների, քահանաների, քույրերի, կանանց, երեխաների նկատմամբ առանձին գործելակերպի և սպանությունների մասին իմ երաշխավորյալը անհավատալի, սարսափելի պատմություններ էր պատմում: Հալեպից մինչև այստեղ ոչ մի հռոմեական եկեղեցի այլևս չպիտի գործի:

Լիբանանում, որտեղ նա եղել է երեք ամիս առաջ, այն ժամանակ ամեն ինչ հանգիստ էր, բայց բոլոր մեծ երկյուղով էին համակված: Նա պնդում է, այն, ինչ էս արդեն կրկին ասել եմ, որ Թուրքիայում այս կամ այն քրիստոնյաները ամբողջ հալածանքները վերագրում են Գերմանիային և մեր թագավորին և մեզ նզովում են, որ իրենք փրկություն են ակնկալում Ֆրանսիայից և Անգլիայից, և որ Գերմանիայի և մեր համարումը Թուրքիայի ոչ մահմեդականների մոտ ապագայի համար թաղված է: Նոր ինձ համար այն էր, ինչ իմ երաշխավորյալը այդ մասին պատմում էր, որ նահանգներում միայն

գերմանացի բողոքականներն են թուրքական կողմից ճանաչվել իսկական քրիստոնյաներ և պատշաճ վերաբերմունքի կարժանանան, իսկ կաթոլիկներն ընդհակառակը որոշ առումով որպես երկրորդ կարգի գերմանացի կամ նույնիսկ «գերմանացի-հայ» և որ նրանց որպես այդպիսին են ճանաչում և վերաբերվում: «Դա քսաներորդ հարյուրամյակի անարգանքի դրոշմն է և Թուրքիայի դաշնակիցների անուղղակի ինքնասպանությունն է»: Այս բառերով է ավարտվում իմ երաշխավորյալն իր հաղորդումը, որը կարող է սուբյեկտիվ և իր վերապրած տեսարանների ազդեցության արգասիքը լինել, սակայն չափազանցված չեն թվում:

Պետեր Դունկելը պիտի իջևանի Վիեննա, և պիտի զեկուցագիր ներկայացնի կարդինալ Պյուֆելին և այլ բարձրաստիճան հոգևորականներին: Այդ նույն նպատակով արդեն երեք շաբաթ է հայր Նորբերտը, Էրզրումի կապուչինների վանահայրը, որը սակայն արդեն այստեղ էր գտնվում ամիսներ առաջ, Ավստրիա է մեկնել:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4789-4790:

№ 51

Թիվ 4946.

Վիեննա,
24 հոկտեմբերի, 1915

Առաքելական նվիրակը երեկ ինձ այցելեց և սուրբ հոր հանձնարարությամբ գրույց ունեցավ ինձ հետ թուրքական կայսրությունում հայերի վիճակի մասին:

Մոնսենյոր Սկապինելլին նշեց, որ հոգևոր անձանց վկայություններով, որոնք հայկական շրջաններից են վերադարձել, հայերը իրենց բնաջնջման են ընդառաջում, որ թուրքերի ներկայիս գործելակերպը շատ ավելի դաժան է եղել քան այն համիդյան ժամանակ էր և որ դրա հետևանքով արդեն մեկ միլիոն հայ է զոհվել:

Պապը անձնական նամակով դիմել է սուլթանին, որպեսզի օգնություն ցույց տա: Սուրբ աթոռը խնդրում է, որ մենք ևս մեր ձայնը Կոստանդնուպոլսում բարձրացնենք:

Ես պարոն նվիրակին պատասխանեցի, որ մենք ամիսներ առաջ Բարձր Դռան ուշադրությունը հրավիրել ենք հայերի դեմ անմարդկային և քաղաքականապես սխալ գործելակերպի մասին մեզ հասած զանգատների վրա, որ մենք մշտապես խնդիրն աչքի առաջ

ունենք և որ ես նորերս կոմս Պալավիչինին Կոստանդնուպոլիս վերադարձից առաջ բանավոր հրահանգներ եմ տվել, որոնք նախատեսում են գործի շուրջ նորանոր հաստատական առաջարկություններ:

Գաղտնաբար ես նվիրակին լրացուցիչ ասել եմ, որ ես, ցավոք, մեր միջնորդության առթիվ մեծ հաջողություն չեմ կարող խոստանալ, քանզի թուրքական կողմը շարունակ այն է մատնանշում, որ հայերը քաղաքականապես անբարեհույս են և իրենց խղճի վրա ունեն թուրքական խաղաղ բնակավայրերի վրա բազմաթիվ հարձակումները, այն դեպքում երբ մյուս կողմից թուրքական կառավարության ամեն մի ժողովրդի դեմ հերքում է:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4795:

№ 52

*Պատեր Հռֆերի հուշագիրը 26 հոկտեմբերի, 1915 Էրզրումից
Հայերի հալածանքը*

Կաթոլիկական հաստատությունների դեմ ուղղված մասոնական հետապնդման հետ մեկտեղ հիշատակելի են թուրքական կառավարության ամբողջ հայ ազգի դեմ ձեռնարկած շատ ավելի ծանր հալածանքները:

Հանձնարարված դավաճանության հետևանքով, որի համար մեղավոր էին կառավարության թշնամի երկու կուսակցությունների անդամները՝ հնչակյանները և դաշնակցականները, որոնք մեծ մասամբ բնակվում են Վանում, կառավարությունը մի հրամանագիր արձակեց բոլոր հայերին առանց բացառության խստագույնս պատժելու վերաբերյալ: Այդ հրամանագրի պաշտոնական ձևում մի բացառություն էր արված կաթոլիկ հայերի վերաբերյալ, որոնք իրոք քաղաքական գործերին երբեք միջամուխ չէին լինում: Մակայն գաղտնաբար բոլոր վալիներին հանձնարարվել էր ինչպես հայ առաքելական դավանանքի, այնպես էլ կաթոլիկ հայերի դեմ գործել: Դեկրետը մահապատիժ էր նախատեսում հանցավորների և կասկածելիների, նաև արքայություն մնացյալների համար:

«Աքսորում» բառը նշանակում է. 1) Ամուսինների լրիվ տարանջատում իրենց կանանցից և մայրերի տարանջատում իրենց երեխաներից: 2) Թուրք պատվիրակների սպառնալիքները և քծնանքը մեկին և մյուսներին ուրացողություն դրդելու համար:

Ուրացողները և դրանք շատ են, անմիջապես տարվում են

մահմեդական մաքուր բնակավայրեր: 3) Կանանց առևանգում, հատկապես եթե նրանք իրենց մարմնական բարեկամությամբ պիտանի են հարեմների համար վաճառելու կամ երևելիների ու պաակների ստոր ցանկատենչությունը բավարարելու համար: 4) Տարբեր վայրերից բերված մանկահասակ աղջիկները թուրքական տներում որպես փոքրիկ աղախներ ծառայելու են տրվում, այդ ընտանիքներին պարտավորեցնելով աղջիկներին համապատասխան մահմեդական դաստիարակություն տալ: Նրանցից նույնիսկ Կոստանդնուպոլիս եկածներ կան: Այլ վայրերում բոլոր քրիստոնյա տղաները թլպատման են ենթարկվել և տարվել թուրքական տները: Այսպես սեպտեմբերի 1-ին՝ սուլթանի ծննդյան օրը, 100 քրիստոնյա պատանի Անգորայից բերված, այդ թվում բազում կաթոլիկներ, հանդիսավոր կերպով թլպատման ենթարկեցին: 5) Շրջաններ կան, որտեղ ներկայումս իրենց թուրքական հայրենիքի համար պայքարող զինվորների կանանց և աղջիկներին են ժողովել և նախատեսվել են բացառապես թուրքական գյուղերին բաժանելու համար: Այդ պատահել է Իզմիրում:

Եթե ընտրությունն այս կերպ ընթանա, ապա մնացյալները հարկադրված կլինեն իրենց ամբողջ ունեցվածքը, տները, կալվածքները, փողը թողնել և դեպի երկրի խորքերը գնալ: Հաճախ դաժան ժանդարմների կողմից ուղեկցվելով նրանք թափառում են գյուղից գյուղ, դաշտավայրից դաշտավայր առանց հանգրվանի և հանգստի, շարունակ անորոշ նպատակի: Տառապանքներից և բաժանումից հոգեպես ցնցված, նրանց օրգանիզմն է վիճակի չէ ցրտին ու անձրևին, զրկանքներին դիմանալ, այնպես որ շատերը ճանապարհին մահանում են: Մյուսներին առանց այլևայրության սպանում են: Այսպես հավաստվում է Վանում և Բիթլիսում հայերի գլխովին կոտորածի մասին լուրը, նաև Մարդինից նույնի մասին լուրը, որտեղ կաթոլիկ եպիսկոպոսը իր 700 հավատացյալների հետ սպանվեց: Անգորայից զեկուցում է վերոհիշյալ բողոքական վկան, որ հայ բնակչության բոլոր տղամարդիկ տասը տարեկանից բարձր կոտորածով բնաջնջվեցին: Այսպիսի օրինակներ շատ կարելի է բերել:

Չեկուցողի կողմից բերվող երկու թուրքերից տարագրյալ վկաների հայտնած փաստը կարող է լույս սփռել այն անողորմության վրա, որին ենթարկվել են արքայալիքները: Դեպի Անգորա տանող ճանապարհին մի լքյալ եկեղեցում 150-200 արքայալիք հայեր, նրանց հետ նաև կաթոլիկ մի քահանա և երկու քույր էին փակել և սվիններով հսկում էին: Ստիպված այդ նույն տեղում հոգում էին իրենց բնական պետքերը, պառկած էին նրանք լեփ-լեցուն սրահում,

մեկը մյուսի վրա մերկ գետնին, քանզի բավականաչափ տեղ չկար: Երկու վկաներ մարդկանց այդ բազմության մեջ հայտնաբերել էին խոլերայից մահացած երկու կնոջ դիակ, որոնց պահակները չեն թույլատրել քաղել:

Ինչ վերաբերում է հայ կաթոլիկ հոգևորականության առանձնահատկությանը, ապա մենք գիտենք, որ նրանք մեծ մասամբ դատապարտվել են հսկելու բազմությանը, բայց նրանք այնտեղ իրենց սրբազան պարտականությունները չէին կարող կատարել: Այսպես Կոստանդնուպոլսում հայ կաթոլիկական պատրիարքարանը ոչ մի լուր չունի վեց եպիսկոպոսների մասին: Նույնը վերաբերվում է մոտ 40 քահանաների և նույնքան էլ քույրերին: Այս բոլոր դժբախտները տվյալ պահին սպանված կամ գրկանքներից վախճանված պիտի լինեն:

Հարկ է նշել, որ իրենք՝ թուրքերը կոտորածի և գրկանքների հետևանքով զոհված հայերի թիվը 500 000-ից ավելի և արքայալների թիվը 900 000-ից ավել են համարում:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4804-4808:

№ 53

93 B

1915թ. 7/XI-ի թիվ — գեկուցագրի հավելված,

P

Կոստանդնուպոլիս

Ավստրո-հունգարական

29 հոկտեմբերի, 1915

կ. և թ. հյուպատոսություն

Ադրիանապոլիս

95/ քաղաք.

(Ձեռագրով՝ գրված է պատճենը)

Նյուբր. Հայերի արքայունը,

ա/թ., գաղտնագիր-հեռագիր թիվ 22 և 23

Նորին գերագանցություն կ. և թ. դեսպան կոմս Պալավիչինիին.

Կոստանդնուպոլիս

Հայերի արքայունը մի միջոցառում է, որը կարող է սկսվել րուպե առ րուպե. նախորդ ամսվա 29-ի իմ թիվ 78/քաղաք. գեկուցագրում ներկայացված երիտթուրքական կոմիտեի մշակած հետագա իրազործումն է:

Նախանցյալ երեկո ժամը 8-ին ոստիկանական մարմինները հայտնվել են հարուստ և ունևոր հայ ընտանիքների տներում և նրանց հարկադրել մեկ ժամվա ընթացքում կանանց և երեխաների հետ մեկտեղ լքել իրենց տները: Անհասկանալի և անհիմաստ քաղաքականության զոհերին թույլատրվել է միայն 40 ֆունտ ստերլինգ և ամենաանհրաժեշտ սպիտակեղեն իրենց հետ վերցնել: Նրանց ամբողջ ունեցվածքը, նրանց խանութները, մի խոսքով ամեն ինչ նրանք պիտի լքեն: Նրանց տեղավորեցին 164 սայլերի մեջ և գիշերով այս անսահմանորեն տխուր շարասյունը շարժվեց դեպի Ուզուն-Քյոփրու, որտեղից այս մարդիկ շարունակելու են ուղարկվել, ասում են, Արաբիա, հավանաբար սակայն դեպի Մոսուլ, որտեղ նրանց մեկուկես միլիոն ազգակիցները տառապում են թշվառության մեջ:

Այն տեսարանները, որոնք տեղի ունեցան 27 լույս 28-ի գիշերը անհնարին է նկարագրել: Հիվանդները, ծերերը և երեխաները անկողիններից դուրս քաշվեցին և բռնությամբ տարվեցին: Անօգնական ամենա մարդկանց նկատմամբ ոչ մի ուշադրություն և ոչ մի կարեկցանք չէր ցուցաբերվում, իշխում էին միայն բիրտ ուժը և բարբարոսական անարդարությունը:

Բազում երեխաներ, որոնք, օրինակ, որպես սաներ տեղավորվել էին Գ-թության քույրերի հողաչափության ինստիտուտում, և իրենց հարազատների արքայուն մասին ոչ մի պատկերացում չունեին, այսպիսով ընդմիջտ տարանջատվել են իրենց ծնողներից և ազգականներից:

Արքայունների տները և խանութները կնքվել և հսկողության տակ են վերցվել: Երեկ սկսեցին դրանք բացել և այնտեղից վերցնել այն ամենն, ինչ արժեքավոր է: Ձերդ գերագանցությունը կարող է պատկերացնել, որ ավարը տակավին, մեղմ արտահայտված, հարուստ է: Դրա մի մասը տեսել էին թուրքական հիվանդանոցում աշխատող մեր գթության քույրերը: Հիվանդանոցը, որը սովորաբար ամենաանհրաժեշտ բաների կարիքն է զգում, երեկ հանկարծ շաալուրեն մատակարարվեց նոր սպասեղենով, դրամով, կենսամիջոցներով և այլնով:

Դեռևս այստեղ մնացած հայ ազգաբնակչությունը խուճապային վախ է ապրում: Նրանք իրավամար երկյուղում են, որ մյուսների ճակատագրին կարժանանան:

Այստեղի տեղական իշխանությունները բացատրում են, որ այս իրադարձությունների համար ոչ մի պատասխանատվություն չեն կրում, քանզի նրանք գործում են Կոստանդնուպոլսից ստացած հրամանի համաձայն:

Քանի որ ինձ հայտնի է, որ մեր թշնամիները, Փոքր Ասիայում հայերին կոտորելու և արտրելու առթիվ լուր են տարածում, որ այս ամենը Կենտրոնական դաշնակից տերությունների զիտությամբ կամ առնվազն հանդուրժմամբ է պատահել, ես իմ պարտքն եմ համարել մշտապես ներքին քաղաքական գործերին միջամտելն անցանկալի համարելու պատրվակով, տեղի իշխանությունների գրույցների ընթացքում բացատրել, որ մենք այսօրինակ գործելակերպին չենք կարող հավանություն տալ: Պատասխանն եղել է. «դա ինքնին հասկանալի է, մենք պիտի սակայն Կոստանդնուպոլսին անսանք»:

Յուրաքանչյուր որ, ով երկար տարիներ այստեղ է ապրել և հայերին լավ է ճանաչում, համոզված է, որ նրանց մեծագույն մասը կառավարության դեմ որևէ նկրտումներից հեռու է կանգնած եղել: Նրանք մեծ մասամբ վաճառականներ են և այդ ասպարեզում հատկապես հույժ բանիմաց են, որոնք միապետության արդյունաբերության հետ ևս սերտ շփումներ ունեն: Արդյոք այդ միջոցառման հետևանքով մեր քաջ հայտնի շահերը չեն տուժի և չեն վնասվի, ցույց կտա ապագան:

Կարագաչում բնակվող հայերին նույնպես բռնարարքների ենթարկելու փորձը՝ բուլղարների ժամանումից մեկ օր առաջ մոտ 30 տղամարդ էր բերվել քաղաք, բուլղարական կառավարության եռանդուն գործելակերպի շնորհիվ ձախողվեց, բուլղարական կառավարությունը հարկադրեց թուրքերին այդ հայերին վերստին բուլղարական տարածք տանել:

Քաղաքը մռայլ մի պատկեր է ներկայացնում: Մեծ շուկան, որտեղ գտնվում են քաղաքի ամենամեծ և լավագույն առևտրական տները, դատարկ է, առևտրական խանութները, հավանաբար, ընդմիջտ փակված են: Կյանքը քաղաքում դադարել է, հետկեսօրյա ժամը 3-ին խանութները փակված հայերն ու հույները վախենում են տներից դուրս գալ, քրիստոնյա ամորթ բնակչությունը տառապալից ժամեր է անցկացնում և ապրում է մշտական վախով: Դա մի ընկճվածության զգացում է համակում քաղաքակիրթ պետության ներկայացուցչին, երբ նա ստիպված է դիտել միջնադարյան այս բռնարարքները, առանց օգնել կարողանալու և ի գորու լինելու:

Ես Վիեննա չեմ զեկուցում:

Կ. և թ. հյուպատոս

Ստորագրված է. «Նադամյենցկի անձամբ իմ ձեռագրով»

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4825-4830:

93 B.

1915թ. 7/XI-ի ա/թ. թիվ— Կոստանդնուպոլիս զեկուցագրի հավելվածը P.

Ավստրո-հունգարական
կ. և թ. հյուպատոսություն

Ադրիանապոլիս,
2 նոյեմբերի, 1915

97/քաղաքական

Նյութը. Հայերի արտորումները.
Նախորդ ամսվա 29-ի այստեղի
պաշտոնական զեկուցագիրը.

Նորին զերագանցություն կ. և թ. պարոն դեսպան,
կոմս Պալավիչինիին

Կոստանդնուպոլիս

Յուրաքանչյուր օր նորանոր մանրամասնություններ է իր հետ բերում այն բարբարոսական և բիրտ վարվելակերպի ու գործելակերպի մասին, որ ենթարկվել են հայ ընտանիքները արտրելու ժամանակ և այն նողկալի լպիրշության մասին, որ թուրքական մարմինները ցուցաբերում էին այդ ընթացքում:

Մի քանի բնորոշ դեպքեր արժանի են հիշատակության: Այստեղի ամենահարուստ Տասատյան ընտանիքի հետ արտաքսվում էր տան ծեր տիկինը՝ կիսակաթվածահար մի կին իր որդու ուղեկցությամբ, այդ կինը նախ պիտի վճարեր իր ամբողջ կանխիկ գումարը, որ գոմեշներով լծված սայլով ուղևորվեր, 60 պիաստր նրան տրվեց հետևյալ դիտորդությամբ. այս բավական կլինի սայլի համար վճարելու համար:

Ծանր հիվանդ երեխաներին դուրս էին քաշում անկողիններից, ինչպես և ծննդկաններին: Ով չէր ենթարկվում հրացանի խզակոթի հարվածներով ստիպում էին աճապարել:

Դատարկված տներում այնուհետև իսկական խրախճանքներ էին տեղի ունենում: Թուրքական գույքագրող մարմինները չէին քաշվում օրը ցերեկով արտոյալների պաշարները վայելելուց, դաշնամուր նվագելուց և այլն, և այլն: Ես կարող եմ Ձերդ զերագանցությանը հավաստել, որ միայն դաժանագույն և ամենալպիրշ երևակայութ-

յունն է ի վիճակի իրադարձությունների սարսափը պատկերացնել:

Տները այժմ դատարկվել են և նույնիսկ չնչին արժեք ունեցող իրերը աճուրդով վաճառվել են: Աճուրդով այս վաճառքների ժամանակ որպես գնորդ նախապատվությունը թուրքերին էր տրվում:

Մոտ 15 հանձնաժողով է կազմվել, որոնք շարժական բոլոր գույքերը գույքագրում են և պահպանում: Մնացյալ արժեքավոր օբյեկտները անցնում են որպես ավանդ հզորների ձեռքը:

Տպավորությունը, որ առաջացել է վերջին օրերին տեղի ունեցած իրադարձություններից, ամբողջ բնակչության մոտ, մահմեդականներին չբացառելով, ուղղակի ապշեցուցիչ է: Վերջիններս չեն կարողանում ընկալել այն դաժանությունը, որ իշխում է ղեկավար շրջաններում: Ղեկավար ատյանների պաշտոնյաներ ընդհակառակը ինձ ասում էին շատ խիստ արտահայտություններով, նզովելով գործելակերպի դաժանությունը:

Չայրացուցիչ լվտիությունը հավաստվում է նաև այն իրողությամբ, որ լացող, ողբացող և կիսախելագար մարդկանց արտաքսմանը ներկա էին կոմիտեի այստեղի դպրոցի սաները դաստիարակչական նկատառումներից ելնելով: Որ այդ երեխաներին կոմիտեական դաստիարակություն տրվի, միանգամայն բացեփրաց բացատրում էր դպրոցի տնօրենը:

Երկու հայ, որոնք տակավին չէին արքտրվել, այդ ընթացքում խելագարվել են:

Եվ հիմա, քանզի ամբողջ քաղաքը այս գայրացուցիչ իրադարձության վկան է, հիմա, կոմիտեն, որի խղճի վրա է այս ամենը, երկյուղ կրելով ժողովրդի տրամադրությունից, հիմա համարձակվում է այդ նույն կոմիտեն կենտրոնական իշխանություններին և հատկապես ամբողջովին Գերմանիային վերագրել այս բազմապատիկ ցատունը, «Գերմանիան է, որ մեզ հարկադրեց այդ անել» բարբառում է հիշյալ ասույթը:

Ես այս ամենը հայտնում եմ Ձերդ գերագանցությանը խոնարհաբար և համարձակվում եմ Ձերդ գերագանցությանը խնդրել, որ հարկ եղած դեպքում գերմանական ղեսպանության հետ մեկտեղ եռանդուն հանդես գալ այդօրինակ նողկալի գրպարտության դրսևորման դեմ:

Վիեննա չեն ուղարկել գեկուցագիր:

*Կ. և ք. հյուպատոս Նադամլենցկի
անձամբ իմ ձեռքով*

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4831-4833:

Կոստանդնուպոլիս, 1915թ. նոյեմբերի 2-ի գեկուցագրին կից ա/թ.

1 հավելված

E.

Թիվ —

P.

*Բեյրութում կ. և ք. գլխավոր հյուպատոսության կ. և ք.
ղեսպանության ուղարկված 1915թ. հոկտեմբերի 13-ի թիվ 9/P
գեկուցագրի պատճենը.*

Արտակարգ խիստ գրաքննության հետևանքով Բեյրութ են հասնում միայն կցկտուր և անբավարար լուրեր հարավային Հայաստանում և հյուսիսային Միջագետքում տեղի ունեցող իրադարձությունների մասին, այնպես որ քրիստոնյաների հալածումն ընդարձակելու մասին ոչ մի ճիշտ պատկերացում կազմելը հնարավոր չէ: Միայն այնքանն է հավաստի, որ թուրքական իշխանություններն անողորմ դաժանությամբ են գործել և անարդարացի միջոցառումների իրագործումը հանձնարարել են իրենց ստորադաս մարմիններին, որոնք ավելորդ են համարում իրենց զոհերի մեղավորությունն ու անմեղությունը նույնիսկ այդչափ մակերեսային հետաքննության նախապես անցկացումը:

Չկամենալով մանրամասնությունների մեջ մտնել, ես կարծում եմ, որ արդեն հեռագրով հաղորդված դեպքերի մանրամասնությունների մասին պիտի գեկուցել, երևում է, որ մոնսինյոթ Միխել Մալկեն՝ Գեզիրեի եպիսկոպոսը Միջագետքում նույնպես կտորածի գոհ է դարձել և որ նրա երեք քահանաները անհետ կորած են:

Ինչ վերաբերվում է Կոստանդնուպոլսից ուղարկված շրջաբերական կարգադրությանը, որը պիտի կարգ ու կանոնը վերականգններ, ապա դրա իրականացումն այստեղից չեն կարողացել վերահսկել, քանզի երկրի խորքերից ստացվող լուրերը միայն մութ, անհստակ բառերով են ներկայացնում, ուստի և պարզ չէ, արդյոք հաղորդված դեպքերը դադարեցման հրամանն արձակելուց առաջ թե հետո են տեղի ունեցել: Այստեղի վարչական շրջանում քրիստոնյաներին չեն անհանգստացրել:

Այնքանն է սակայն հավաստի, որ արքայալիցերի քարավանները շարունակվում են, ընդ որում իհարկե խոսքն այն մարդկանց մասին է, որոնք արդեն նախօրոք իրենց բնակավայրերից տարագրվել են: Այս մարդկանց կերակրելու խնդիրը շատ վատ է հոգաց-

վել, նրանք օրական ամենաշատը երեք (կտոր) հաց են ստանում և այն էլ միայն ոչ կանոնավոր կերպով, հարկադրված են ուժասպառ լինելով ոտքով քայլել, բացօթյա գիշերել, հաճախ ոչ սպիտակեղեն և ոչ էլ կոշիկ ունեն, հիվանդանալու դեպքում ոչ մի բժշկական օգնություն չեն ստանում և այլն: Տարածում է ստանում նաև չարաշահումը, հսկող մարմինները շատ չնչին փողի դիմաց երեխաներին «կորցնում են», ինչը՝ մի կողմից գթացող անձինք երեխաներին փրկելու համար են օգտագործում, իսկ շատ դեպքերում վերածվում է մարդավաճառության: Աքսորյալները Բեկայում և Հաուրանում զուտ մահմեդականներով բնակեցված գյուղերի վրա են բաժանվելու, երեխաներին բաժանելով ծնողներից տեղավորում են մահմեդական տներում, այնպես որ անհնարին է կարիքավորներին օգնություն ցույց տալ: Այս գործելակերպը, թվում է, թե սխտեմատիկորեն իսլամացնելու նպատակ է հետապնդում:

Եպիսկոպի միջնորդությունների նկատմամբ իշխանությունները խուլ են ձևանում, այստեղի պատրիարքարանի նամակագրական կապը երկրի ներսի թեմերի հետ ընդհանրապես կտրված է, այնպես որ քրիստոնյաները վնասված շրջաններում, թե լրջորեն վտանգված են:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4813-4815:

№ 56

14 նոյեմբերի, 1915
Ավստրո-հունգարական
դեսպանություն
Կոստանդնուպոլիս

Կոստանդնուպոլիս,
7 նոյեմբերի, 1915

93

Թիվ — B.

P.

Հայերի և քրիստոնյաների հալածումը.
1915թ. նոյեմբերի 2-ի
թիվ 92/P-C գեկուցագրի առթիվ

Նորին գերագանցություն կ. և թ. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ բարոն Բուրիանին

Արձակուրդից իմ վերադառնալուց հետո ես անհապաղ լրջորեն խո-

սեցի Մեծ վեզիրի հետ Չերդ գերագանցության կողմից ինձ տված բանավոր հրահանգների հիման վրա հայերին արտոթյու հարցի շուրջ և նրան բացատրեցի այդ գործելակերպի վտանգավոր հետևանքները: Մեծ վեզիրի իմ դատողությունների նկատմամբ մեծ ըմբռնում ցուցաբերեց և խոստացավ իր ամբողջ ազդեցությունը գործադրել այդ ողբալի իրավիճակը վերացնելու համար: Մակայն Մեծ վեզիրի ազդեցությունը կառավարության մյուս անդամների վրա չբացած է երևում և նրա խոստումներին միայն նվազ արժեք կարելի է ընծայել: Դրա լավագույն ապացույցը այն իրադրությունն է, որ այդ կապակցությամբ արված նրա հավաստիացումներին հակառակ ոչինչ չի որոշվել, քանզի այն ժամանակվանից թուրքական կայսրության համարյա բոլոր մասերից օրավոր ստացվող լուրերը վկայում են հայերին հալածելու մասին, որ այդ հալածանքները զնալով ավելի մեծ ծավալներ են ստանում և, ինչպես իմ վերջին համապատասխան գեկուցագրի մեջ արդեն հիշատակել եմ, վերածվում են քրիստոնյաների ու օտարների համընդհանուր հալածանքի:

Հյուպատոսության ստորադաս պաշտոնյաների պատճենված կից ներկայացվող հեռագրերը և գեկուցագրերը վկայում են, Միրիայում վանքերը և կաթոլիկական այլ հաստատություններ փակվել և բռնագրավվել են, Բաղդադում քրիստոնյաներին և հրեաներին ձերբակալել կամ արտոթել են, այն դեպքում, երբ Ադրիանապոլսում հայերի դեմ անողորմաբար են գործել:

Հունական դեսպանության գործերի հավատարմատարը ևս, որն այսօր ինձ այցելեց, ինձ պատմեց, որ նման լուրեր է նա ստացել Թրակիայից, որտեղ հույն բնակչությունը կամայական ձևով իրենց բնակավայրերից դուրս է բերվել, որպեսզի բուլղարական կողմից գրաված շրջաններից ներխուժած մահմեդականների համար տեղ բացեն: Այդ մարդիկ նախ բերվեցին Էրեզի և հիմա պիտի արտոթվեն Փոքր Ասիայի խորքերը: Նրանց վիճակը միանգամայն սարսափելի է, քանզի նրանց կերակրելու համար գրեթե ամենևին հոգ չեն տարել, այնպես որ նրանցից շատերը սովամահ են լինում:

Այդ հանգամանքը նկատի ունենալով, երեկ ես այցելեցի Հալիլ բեյին և Չերդ գերագանցության ինձ բանավոր տրված հանձնարարությունը վկայակոչելով, հույժ խիստ ձևով նրա ուշադրությունը հրավիրեցի Թուրքիայում արդեն համարյա համընդհանուր դարձած քրիստոնյաների հալածանքի, հատկապես ծանրանալով վանքերի և հոգևոր այլ հաստատությունների փակելու վրա: Ես արտաքին գործերի մինիստրին ասացի, թե ինչպիսի ծանր հետևանքներ կարող է

դա ունենալ, քանզի այդքան անմեղ մարդկանց բռնազաղթեցման և բնաջնջման մեղքը նաև մեզ և Գերմանիային են որպես դաշնակիցների վերագրվելու և մենք ի վիճակի չենք լինի Թուրքիային այս առումով պաշտպանել և ստիպված կլինենք ամբողջ պատասխանատվությունը նրա վրա բողոքել: Սակայն զուտ թուրքական տեսակետից էլ դիտելով, այդ գործելակերպը վատ քաղաքականություն և տնտեսական խոշոր սխալ է, որովհետև հենց այն տարրերը, որոնց դեմ ուղղված է հալածանքը, Օսմանյան կայսրության մեջ ամենաաշխատունակն են և վերջինիս վերելքին մեծապես նպաստել են:

Իմ փաստարկները Հալիլ բեյի վրա ակնհայտ տպավորություն բողոքին և *նա ինձանից չքաքցրեց, որ ինքն անձամբ ամբողջապես իմ կարծիքին է*: Նա ինձ ասաց, որ ինքն այդ իմաստով փորձել է ներագդել Թալեաթ բեյի վրա և արդեն հասել է այն բանին, որ հետագա արքորումներին վերջ կդրվի: Մինիստրը հիշատակեց նաև, որ Ջամբուլաթ բեյը՝ ներքին գործերի մինիստրության ոստիկանական վարչության ներկայիս պետը, Միրիա է գործուղվելու, որպեսզի միջոցառումներ կազմակերպի, որոնց նպատակն է լինելու այնտեղ տարագրված հայերին Մոսուլի շրջանում բնակեցնել և նրանց սննդի մասին հոգ տանել: Հալիլ բեյն ինձ խոստացավ նաև այս հարցի շուրջ մի անգամ ևս Թալեաթ բեյի հետ խոսել և նրա ուշադրությունը հրավիրել այն վտանգների վրա, որ բովանդակում են Թալեաթի գործողությունները արտաքին քաղաքականության առումով և հատկապես շեշտելով Հունաստանը:

Թեև Արևելքում իմ բազմամյա փորձի հիման վրա հենվելով, թուրքական խոստումներից շատ բան չեմ սպասում, կարծում եմ սակայն այս անգամ Հալիլ բեյը բավականին անկեղծ էր:

Թալեաթ բեյի մտադրությունների մասին իր դատողություններում նա լիովին շիտակ էր խոսում և ավելացրեց, որ իր գործընկեր մինիստրը ձգտում է այն բանին, որ հայկական հարցը տակավին պատերազմի ընթացքում իր ձևով լուծի և տերություններին կատարված փաստի առաջ կանգնեցնի: Ես նաև համոզված եմ, որ Հալիլը մի անգամ ևս կգրուցի Թալեաթի հետ, միայն տարակուսելի է, թե ինչպիսի հաջողությամբ: Քիստոնյաներին և օտարներին գրեթե սիստեմատիկ դարձած հալածանքին մեկ հարվածով վերջ դնելը ոչ միայն ներքին գործերի մինիստրի ուսերին է ընկած, ինչպես և այն հանգամանքները նվազ չափով են նրանից կախված, որ Կոստանդնուպոլսից եկած ցուցումները այդօրինակ անասելի դաժանությամբ են իրականացվել:

Թուրքական մեծ կայսրության կառավարման մեջ հատկապես նկատելի են դառնում որոշակի անիշխանության որոշ նշաններ: Տեղական շատ իշխանություններ պարզապես ինքնագլուխ են գործում և իրենց օտարատյացության մեջ շատ ավելի հեռուն են գնում, քան այդ կցանկանար կառավարությունը:

Կոմիտեի մարդկանց շարքերից ելած վալիները և մութասերիֆները միայն այն կարգադրություններին են անտույժ, որոնք նրանք ստանում են կոմիտեից, այլ ոչ թե այն կարգադրություններին, որ նրանք ստանում են կառավարությունից: Սրա հատկանշական օրինակն է Բաղդադի վալիի տխրահոշակ պաշտոնակատար Շեֆիկ բեյը: Որ նամն հանգամանքները շատ վտանգավոր արդյունքներ կարող են տալ, հարկ չկա հատկապես ընդգծելու, և Հալիլ բեյը ևս այս առնչությամբ դրսևորած իմ մտավայտության հետ համաձայնեց:

Բանակցությունների ընթացքում արտաքին գործերի պարոն մինիստրն ինձ ասաց նաև, որ Հաքքի փաշան Բեռլինից իրեն գրել էր, որ հայկական հարցում թուրքերի գործելակերպն այնտեղ շատ վատ տպավորություն է բողոքել: Երկուդում են իրավամբ, որ խնդիրը Ամերիկայում աջակցություն կստանա հասարակական կարծիքը Գերմանիայի դեմ տրամադրելու քարոզչության համար, ինչը բնականաբար հույժ ցանկալի կլիներ Ամտանտի տերությունների համար և մեծապես կօգտագործվեր:

*Կ. և Բ. դեսպան
(ստորագրություն) Պալավիչինի*

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4818-4824:

№ 57

*Ավստրո-հունգարական
կ. և ք. հյուպատոսություն
Գամասկոս
Թիվ 75/Ք
Հայ բռնազաղթվածները.*

*Գամասկոս,
7 նոյեմբերի, 1915*

*Նորին գերագանցություն կ. և ք. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ բարոն Ստեփան Բուրիանին*

Իրենց հայրենիքից բռնի կերպով տարագրված հայ ընտա-

նիքների որոշ ժամանակ ընդհատված քարավանների գալը վերջին շաբաթների ընթացքում կրկին վերսկսվել է: Դամասկոսի վրայով դեպի Հարավ արտրված անձանց թիվը անցնում է 30000, այնպես որ այս բռնագաղթվածների ընդհանուր թիվը ավելի քան 50000 կարելի է համարել:

Նրանց առավել մեծամասնությունը սերում է նախկինում տարագրվածների պես Հալեայի (Մարաշ, Ուրֆա), Ադանայի և Անգուրայի (Կեսարիա) վիլայեթներից, միայն քչերն են Դիարբեքիի վիլայեթից, որից երևում է, վերջիններս արտրվել են մոտ գտնվող Միջագետք: Կրոնի առումով նրանք իրենց գերակշիռ մեծամասնությամբ հայ առաքելական դավանանքին են պատկանում, սակայն պատահում են նաև քրիստոնեական այլ դավանանքի պատկանողներ: Դավանանքի ստույգ ճշտումը, ասենք, հազիվ թե հնարավոր լինի, քանի որ Դամասկոսում հանգրվանելը սովորաբար միայն քիչ օրեր է տևում և տարբեր դավանանքների այստեղի հոգևորականությունը չի համարձակվում արտոյալների հետ կապի մեջ մտնել:

Այս բռնագաղթվածների բնակավայրերը, ինչպես և նախկիններինը, գտնվելու են Հորդանանից և Սեռյալ ծովից արևելք ընկած երկրում:

«Բնակավայր» հասկացությունը, իհարկե, ճիշտ չէ: Տարագրյալները այստեղ համարյա ոչինչ չունեն: Երբ ինքը՝ կառավարությունը հարկադրեց լքել իրենց հողերը, նրանք մնացին առանց աշխատանքային գործիքների, առանց սերմնացուների, առանց լծկանի, ուստի և ոչինչ չեն կարողանում ձեռնարկել: Ներկա ժամանակում հաստատվել են նրանք իրենց պարտադրված շրջաններում բնակեցված վայրերից դուրս, բաց դաշտում անօթևան և այժմ սկսվող անձրևների շրջանի տարերքներին մատնված: Նրանց հնարավոր դրամական միջոցները, այնքանով, որքանով էթե նրանք իրենց նախկին ունեցվածքի շահույթից այդպիսիք ունեն, չեն կարող երկար ժամանակ բավարարել, այն դեպքում, երբ Դամասկոսում օրական յուրաքանչյուր անձի որպես օրապահիկ մեկ պիաստր է տրվում, այն պայմանով, որ այն նրանց դեռ երկար ժամանակ կվճարվի, նրանք հազիվ թե կարողանան սովամահությունից պաշտպանվել:

Հավանաբար ընդունված է, որ այս «գաղութարկների» մեծամասնությունը մահվան է դատապարտված: Սովը և համաճարակը հիմա արդև մոլեգնում են նրանց շրջանում, Դամասկոսում նրանց հանգրվանելու ընթացքում 1000 անձից օրական առնվազն տասը մահացության դեպք էր լինում: Անխուսափելիորեն տարածվող հա-

մաճարակներն ամենևին էլ նվազ վտանգ չեն ամբողջ Սիրիայի սահմարակալան պայմանների համար և պիտի զարմանալ, որ կողմը ոչ մի մտահոգություն չի ցուցաբերում նման համաճարակի օջախի հարևանության հանդեպ:

Բավականին քվով երեխաների համար երջանկություն պիտի համարել, որ նրանց մասամբ գոռով, մասամբ կամավոր իրենց հարազատները այստեղի մեծամասամբ մահմեդական ընտանիքներին են հանձնել: Նրանք շնորհիվ դրա առնվազն կխուսափեն սովամահությունից, թեպետ նրանք կընդունեն իրենց տերերի ազգությունը և կրոնը:

Համանման գեկուցագիր նույն ամսաթվով և նույն համարով ուղարկել են Կոստանդնուպոլիս:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4834-4837:

№ 58

*Կ. և ք. ավստրո-հունգարական
հյուպատոսություն
Ադրիանապոլիս*

*Ադրիանապոլիս
10 նոյեմբերի, 1915*

Թիվ 100/քաղաքական

Խիստ զարտնի

Նյութը. Գերմանատյաց կարծիքը.

Սույն թվականի ծածկագիր-հեռագիր թիվ 26 և 28.

Նորին գերագանցություն կ. և ք. պարոն դեսպան, կոմս

Պալավիչինին

Կոստանդնուպոլսում

Տարբեր հանգամանքներ կան, որոնք շատ վայրերում առաջացրել են գերմանատյաց կարծիք: Այն իրողությունը, որ կառավարման գերատեսչությունների մեծ մասում գերմանացիներն են խորհրդատվական և ղեկավար դիրք գրավում և որ սրանք ո՛չ հույների և ո՛չ էլ հայերի հալածանքները չեն կարողացել կասեցնել, ամենից առաջ այն կարծիքն է առաջացրել, որ այդ հալածանքները Գերմանիայի հանդուրժողականության հետևանքով են տեղի ունեցել: Թուրքիայում գերմանական առևտրի ակնկալվող էքսպանսիայի առումով անհրաժեշտ է համարվել, որ մրցունակ բոլոր տարրերը վերացնելու

միջոցով այդ էքսպանսիայի համար ճանապարհներ պիտի հարթել: Այն պարագան, որ գերմանացի սպաները ներկա են գտնվել քրիստոնյաներին Ուզուն-Քեուպրյուից արտոբերելու ժամանակ և մատր մատին չեն զարկել դա կանխելու համար՝ նոր առիթ տվեց արդեն գոյություն ունեցող այդ կարծիքին:

Ես արդեն ս.թ. 21/ IX-ի թիվ 73/քաղաքական իմ զեկուցագրում նշել եմ Գերմանիայի հանդեպ թշնամական պրոպագանդա սկսվելու մասին, որն առնչվում է Բուլղարիային տարածք հատկացնելու հետ: Իմ զեկուցած վերջին փաստերը վկայում են, որ այդ պրոպագանդան չի նվազել, այլ ընդհակառակը, սաստկացել է: Ցավոք մինչև օրս հնարավոր չէր իմ երաշխավորյալ անձին դրդել հիշատակել այն անձանց անունները, ովքեր ուղղակի հայտարարել են, որ Գերմանիան կամեցել է հայերի հալածանքները: Նա կարողացավ ինձ միայն հավաստել, որ խոսքը վերաբերվում է մի ազդեցիկ անձնավորության, որը Կոմիտեի հետ սերտ առնչություն ունի և բոլոր զաղտնիքները գիտի:

Մեփական կարծիքի բացակայության և ինքնուրույն դատողությունների և արարքների սակավության պայմաններում, որը մեծապես բնորոշ է, ընդհանրապես, Թուրքիային, բնական է, որ յուրաքանչյուր իրողության դեմ կամ կողմ կարծիք նախ պիտի կազմավորել: Ես համոզված եմ, որ այս ամբողջ հակազերմանական շարժումը ծայր է առնում Կոմիտեից: Կոմիտեի որևէ անդամ երբեք իրեն թույլ չէր տա կարծիք արտահայտել, որը չէր համապատասխանի «Mot d'Ordre»-ին:

Բոլոր հարցերում գլխավոր սաղրիչները Գանի բեյը և, հատկապես, Սերվետ բեյն են: Վերջինս երրորդ անձնավորության ներկայությամբ արտահայտվել է, որ դաշնակից կայսրությունն իր հաջողություններով շնորհապարտ է լինելու Թուրքիային և հասկանալ է տվել, որ հիմա տակավին գերմանացիների կարիքն ունեն, սակայն հետագայում վերջիններս պիտի Թուրքիան լրեն:

Վիեննա ես չեմ զեկուցում.

*Ա. և Բ. հյուպատոս
ստորագրություն
(Նաղամյենցկի)*

Wien, Haus, – Hof – und Staatsarchiv (HHSTA), Politisches Archiv (PA), XII 209.

Թիվ 444.

*Կոստանդնուպոլիս,
2 դեկտեմբերի, 1915*

Թուրքիայից.

Երկար ժամանակ Փոքր Ասիայում բնակված գերմանացիներից մեկից, որը վերջերս այստեղ է ժամանայ, ես իմացա, որ հայերի հալածումը շարունակվում է և իրականացվում է նույնպես դաժանությամբ, ինչպես որ վեց ամիս առաջ: Վերջին ժամանակներում Հալեպը դարձել է մահվան դատապարտված հայերի հավաքատեղի: Երբ մարդիկ այնտեղ են գալիս, նրանք գրեթե բոլորը արդեն ծայրաստիճան հյուծված վիճակում են: Բնականաբար այնտեղ չկան այդչափ հիվանդներ տեղաբաշխելու և պարենավորելու նախապես ձեռնարկված միջոցառումներ, և գերմանական հիվանդանոցի բժիշկը, որը մարդկանց նկատմամբ շահագրգռվածություն է ցուցաբերում, չի կարողանում կանխել, որ թշվառներն, ինչպես ինքն է արտահայտվում, իրենց անկումը չապրեն: Նրանք, որոնք հաղթահարել են գրկանքները ու կարիքները, այնուհետև անապատի միջով դեպի Չոր՝ Եփրատի մոտ պիտի տարվեն, որտեղ մի տեսակ համակենտրոնացման ճամբար է ստեղծված: Սակայն միայն շատ քչերը այնտեղ կհասնեն: Քանզի նրանց իրենց հետ վերցնելու ոչ հաց, ոչ ջուր են տալիս, և նախկին տառապանքներից լրիվ հյուծված մարդիկ անապատով դեզերելու ժամանակ մահանում են: Այն, որ այդ կանխատեսված էր, երևում է, ի թիվս այլոց, հետևյալ իրողությունից, որ Հալեպում բնակվող մի շվեյցարացի ձեռքակալվեց և ռազմական դատարանի առջև կանգնեցվեց, որովհետև նա հայերին անապատային երթ սկսելուց առաջ 50 հաց էր բաժանել: Նա շատ ծանր պատիժ կկրեր, եթե նա ազգեցիկ անձանց միջոցորդության շնորհիվ չազատվեր:

Իմ երաշխավորյալը, որը վերապրել է 1909թ. Ադանայում հայերի սարսափելի կոտորածները, հավաստում է, որ այն սահմուկեցուցիչ տեսարանները, որոնք ինքն այն ժամանակ տեսել է, խամրում են այն իրադարձությունների առջև, որ տեղի ունեցան վերջին ամիսներին Անատոլիայում: Նա որոշակի ճանապարհահատվածում հանդիպել է կանանց և երեխաների անթիվ մերկացված դիակների: Մեկ անգամ 2000 հայ մի տեղ հավաքեցին և որպես որս գնդակահարվեցին: Երբ նա սրտակեղեք պատկերներից սարսափած գլուխը հակել է, թուրքերը նրան սասցին. «Ի՞նչ ես ցանկանում, քո կայսրն այդ ուզում էր դա»: Այն տեսակետը, որ հայերի լրիվ բնաջնջումը՝ դա եղել է

գերմանական կայսրի հատուկ ցանկությունը Անատոլիայում պլանավորված կերպով տարածվում է բուրքական իշխանությունների կողմից: Վալիներից քչերն են հրաժարվել կառավարության հրամանները իրագործելուց: Նրանք անմիջապես պաշտոնանկ են արվել և փոխարինվել կառավարության վստահությունը վայելող անձանցով, կարծելով, որ նրանք պիտի առանձնահատուկ եռանդով գործեն: Այսպես Անգորա ուղարկվեց, ունի Ատիֆ բեյ, որը մինչ այդ աշխատել էր մինիստրությունում: Քանի որ նրա վերջնական նշանակումը կախված էր նրա մատուցած ծառայություններից, նա Անգորայում սահմուկեցուցիչ հրեշագործություններ կատարեց: Անատոլիական երկաթուղու 19 միջին պաշտոնյա, որոնք, ինչպես ամբողջ երկաթուղու ծառայությունը, ռազմականացված էին, դուրս են բերվել գրասենյակներից և կայարանի մոտակայքում ոչնչացվել: Այս ամենը վերջին շարաքներին է արդեն կատարվել, քեպետ կառավարությունը, հատկապես Թալեաթ բեյը, արդեն սեպտեմբերին Գերմանիայի դեսպանին հավաստիացնում էր, որ հայերի հալածանքին վերջ է տրված: Նաև այլ հաշվարկների համաձայն, հավատարմում էր իմ երաշխավորյալը, որ մոտ մեկ միլիոն հայ է բնաջնջվել:

Չուտ մարդասիրական նշանակությունից զատ, հայերի հալածանքները ունեն նաև տնտեսական շատ լուրջ կարևորություն: Հայերի վերացմամբ Թուրքիայում ոչ միայն մանր առևտրականներն, այլև գյուղատնտեսական կարևոր տարրը վերացվեցին: Այն եկող տարի ի հայտ կգա Թուրքիայի շատ շրջաններում: Գյուղատնտեսությունն արդեն այդ պատճառով զգալիորեն տուժել է, քանզի գործառնական պատճառով աշխատուժի և լծական անասունների շատ մեծ կորուստ է տեղի ունեցել: Մյուս տարիների համեմատ միայն ցանքսերի հազիվ կեսն է արված: Հիմնականում հայ ազգաբնակչություն ունեցող գյուղական վայրերում դաշտերը համարյա անմշակ են մնացել: Անկուսակցական դիտորդների բոլոր մասնավոր զեկուցագրերի համաձայն Թուրքիան ընթանում է տնտեսական մեծ աղետին ընդառաջ, որն այնքանով ավելի զգալի կդառնա, որքանով որ ճանապարհների բացակայությունը և բեռնատար վագոնների անբավարար քանակը անհնարին կդարձնեն ավելի բարեկեցիկ նահանգներից կարիքավոր գյուղական վայրերի մատակարարումը: Եթե բուրքական ժողովրդական տնտեսությունը համապատասխանաբար կազմակերպված լիներ, ապա կարելի կլիներ հիմա շատ վայրերում տառացիորեն փոռող ավելցուկը հավաքել: Բայց ոչ մի վալի այդ մասին չի մտածում: Եթե վրա է հասնում աղետը, ապա նա այդ թողնում է կենտրոնական կառավարությանը՝ այն մեղմացնելու միջոց գտնե-

լու համար: Եթե վերջինս մերժում է, ապա ժողովուրդը պիտի հաշտվի իր ճակատագրի հետ: Իրենց հովանավորյալների կարիքները հոգալու հարցում հին վարչակարգի վալիներն ավելի առատաձեռն էին, քեև նրանք ևս ավելի ազնիվ չէին, քան սրանք: Սակայն նրանք կառավարումից զուլս էին հանում, գիտեին իրենց վիլայեթները և դրանց կարիքները, այն դեպքում, երբ այսօրվա վալիները իրենց պաշտոնին են կոչվել միայն կառավարությանը հավատարիմ լինելու շնորհիվ:

Գյուղատնտեսական աղետը, ասենք, իրեն զգալ կտա նախ պետական եկամուտներում: Նորմալ տարիներին տասնորդը կազմում էր յոթ միլիոն գրվանքա: Նոր տարվա համար այն կազմեց 4,5 միլիոն, բայց գիտակները կարծում են, որ հազիվ միայն այդ գումարի կեսը մուտք կգործի:

“Österreich-Armenien”, Bd VI, 1914-1915, p. 4968-4970:

№ 60

*Նյութը. Հայերի բռնությանը իսլամ ընդունելը.
Հավելված I*

*Նորին գերագանցություն կ. և ք. պարոն դեսպան,
կոմս Պալավիչինիին*

Կոստանդնուպոլիս

Թուրքական կառավարման այս տխուր պատմության մեջ հայերին վերջին ժամանակին հալածելը բնորոշվում է հալածված գոհերին բռնությանը իսլամ պարտադրելու նոր դրվագով: Նոյեմբերին տեղի ունեցած քստորումներից հետո մնացյալ ընտանիքներից այժմ կատարվող քստորից հետո մոտ 30 ընտանիք է հայտնաբերվել, որոնք կարող էին փրկվել քստորից միայն իսլամ ընդունելու շնորհիվ, ընդ որում «մեղմ» ձևով նշվեց, որ Փոքր Ասիայի խորքերը ուղևորվելու ընթացքում ամեն ինչ կարող էր տեղի ունենալ և որ երկու մայրցամաքների միջև ծով է տարածվում: Շատ քչերն անհողորդ մնացին և չկարողացան իրենց ստիպել իրենց նախնիների հավատքն ուրանալու, քեև նրանք հաստատուն մահն աչքի առաջ ունեին: Նրանք արտորվեցին և դեպի Ռոդոսքո ճանապարհին պիտի սպանվեին:

Սակայն 160 մարդ մահմեդականություն ընդունեց: Տեղական իշխանությունները բնականաբար միշտ կամավոր հավատափոխության մասին են խոսում, քանզի յուրաքանչյուրն այն հարցին, քե արդյոք հարկադրված է հավատափոխ եղել, «ոչ» բառով պիտի պա-

տասխանի: Ոչ ջանադիրներին կատարածուն և ոստիկանները ընթացիկ ամսվա 2-ին և 3-ին երեկոյան ժամերին հիշեցնում էին այս մասին, որ նրանց արքայազնը անմիջականորեն կատարվելու է, եթե նրանք անհապաղ չստորագրեն հավատափոխության մասին հայտարարությունը: Կաթոլիկ 4 ընտանիքի հետ վարվեցին ճիշտ այնպես, ինչպես մյուսների հետ: Նրանք ևս հավատափոխ են դարձել և նրանց արգելվել է որևէ առնչություն կաթոլիկ քահանայի, մեր դպրոցի և ինձ հետ, թեև նրանք երբևէ ինձ մոտ չեն եղել և իրենց հնարավոր ցանկությունները միշտ քահանայի միջոցով են արտահայտել:

Իսլամ ընդունած այրի կանանց և օրիորդներին ուղակիորեն ասվել է, որ նրանց թուրքերի հետ են ամուսնացնելու, այն ժամանակ, երբ երիտասարդ տղամարդկանց թրքուհիներ են պարտադրում: Այսպես բնաջնջվեց այստեղ հայկական համայնքը, եկեղեցին առնվեց հսկողության տակ, արքայազների ամբողջ ունեցվածքը բռնագրավվեց, զարդեղենը և դրամը կողոպտվեցին և թուրքական տները հայերի կահ-կարասիով ճոխ ու ճրի կերպով կահավորվեցին:

Արդեն արքայազների մի քանի երեխաներ տակավին գտնվում են հողաչափների դպրոցում, նրանք միակ չարքայազներն են, որոնց սակայն սպառնում է իրենց ցեղի ճակատագիրը: Հյուպատոսների և օտար տերությունների պաշտպանության առթիվ Գանի և Մերվետ բեյերը ծաղրանքով ուսերն էին թոթվում: Այս տարրերի ընչաքաղցությունը և կատաղությունը այստեղ ամեն ինչի տնօրինողն է:

Այստեղ տիրող սարսափի իշխանությունը, որի իրականացնող մարմինները Գանին և Մերվետն են՝ վալին պարզապես խղճուկ, արժեզուրկ դեր է խաղում, այստեղ գրկել է բոլոր քրիստոնյաներին ամեն մի վստահությունից և խաղաղությունից: Անպատասխանատու տարրերն արդեն հիմա հունական շրջաններում լուր են տարածում. «Հայերից հետո նրանց հերթն է գալու»:

Իդնահարության արժանի բնակչությունը, որը տնտեսական հույժ խնայողությամբ մի փոքր հարստություն էր կուտակել, աղքատության է հասցվել, միայն մեկ ցանկություն ունի՝ կարողանալ զբաղվել իրենց աշխատանքով իրենց հացը վաստակելու համար, իրենց հասկանալի վախի և անսահման կարիքի մեջ հարցնում են, ի՞նչ են անում Թուրքիայի դաշնակիցները: Ի՞նչ են անում Ավստրո-Հունգարիան և Գերմանիան: Ինչո՞ւ չեն միջամտում, ինչո՞ւ չեն օգնում նրանք:

Այս հարցերից, որոնք բոլոր շրջաններում գնալով ավելի բարձր են հնչում, մինչև այն եզրահանգումը, որ մենք համաձայն ենք խավար միջնադարը հիշեցնող չարագործությունների հետ, ընդամեն-

նը մեկ քայլ է: Ինչպե՞ս միապետությունը հասավ այն բանին, որ քույրատրի իր արժանապատվությանը, որն այն ամբողջ պատերազմի ընթացքում կարողացավ անբասիր պահել, որ կույր ատելությամբ և մոլեռանդ խելահեղությամբ ղեկավարվող դաշնակցի կողմից արատավորվի: Ինչո՞ւ պիտի Գերմանիայի պատիվն արատավորվի:

Ձերդ գերագանցություն, այստեղի պայմանները ծանակում են ամեն մի մշակույթ, ամեն մի պետական իմաստություն: Հազարավորները հանձնված են անպատասխանատու մարդկանց հրոսակախմբի կամայականությանը: Մի՞թե նրանք անպատիժ պիտի շարունակեն իրենց գործը: Մի՞թե մենք հնարավորություն և ուժ չունենք այդ արարքներին, որոնք սև ստվեր են գցում մեր հեղինակության վրա, վերջ դնելու համար: Մի՞թե մենք սարսափով պիտի շարունակենք նայել, թե թուրքերը ինչպես են ավելի ու ավելի շատ սեփական գերեզմանը փորում:

Այս բոլոր հարցերը ծառանում են իմ առջև, հարցեր, որոնք այժմ, քան երբևէ արդիական են, քանզի մեր միապետության պետական կառավարման արվեստը տարբեր ժողովուրդների համար օրինակ է ծառայում և բոլոր շրջանների կողմից հիացմունքով կրնդունվի:

*Կ. և ք. հյուպատոս
(ստորագրություն)
Նադամլենցկի*

“Österreich-Armenien”, Bd VII, 1915-1916, p. 5089-5092:

№ 61

*Ավստրո-հունգարական
ղեսպանություն
Կոստանդնուպոլիս
22 D*

*Կոստանդնուպոլիս,
17 մարտի, 1916*

*P.
Հայերի հալածումը.
1916թ. մարտի 10-ի*

*21/P-B
գեկուցագրի առթիվ*

Հավելված 2.

Նորին զերազանցություն կ. և ք. արքունի և արտաքին գործերի պարոն մինիստր՝ քարոն Բուրիանին.

Երբ ես մի քանի օր առաջ, կեսօրից հետո կամեցա այցելել Թալեաթ բեյին, հենց նոր էին ինձ մատուցել Ադրիանապոլսում կ. և ք. հյուպատոսի (այս ամսվա 10-ի) 21 զեկուցագիրը, որի պատճենը որպես հավելված ես ներկայացնում եմ:

Պարոն Նաղամլենցկին սև գույներով է նկարագրում հայերի արքայազնությունը և նրանց բռնությանը իսլամ ընդունելու կապակցությամբ Ադրիանապոլսում տիրող իրավիճակը: Ես առիթն օգտագործեցի, որպեսզի վերստին քարեկամարար Թալեաթ բեյի ուշադրությունը հրավիրեմ այն վատ տպավորության վրա, որ պիտի առաջացնեն այդ անասելի իրադարձություններն ամբողջ աշխարհում: Ներքին գործերի մինիստրը խոստացավ ինձ անհապաղ կարգադրել, որ Ռոդոսքո արքայազնը հայ ընտանիքներին Ադրիանապոլիս վերադառնալու թույլատրություն տրվի, և որ իսլամ ընդունելու համար գործադրվող բռնությունը պիտի դադարեցվի: Նա նաև ինձ կրկին հավաստիացում տվեց, որ Հողաչափ Բուրեբի դպրոցը, որի գործունեության մասին նա մեծ զովեստով խոսելով, անձեռնմխելի կմնա:

Ես Ադրիանապոլսում կ. և ք. հյուպատոսին վերոհիշյալ հեռագրով իրազեկ դարձրի և դրանից 2 օր հետո նրանից հետևյալ հեռագիրը ստացա. «Երեկ կայմակամը իր մտտ կանչեց մահմեդական դարձած հայերին և նրանց հայտնեց, որ իրենք Կոստանդնուպոլսից ստացած հրամանի համաձայն նորից պիտի հայ լինեն, կարող են կրել իրենց նախկին անունները և դավանել նախկին կրոնը, «քանի որ նրանք իրենց սրտում լավ մեհմադական լինել չեն կարող»: Աքոբից վախենալով 40 ընտանիք ներքին գործերի մինիստրին կուլեկտիվ հեռագիր են հղել, որով նրանք խնդրում են թույլ տալ մնալ մահմեդական: Երեկ ես ստացա Ռոդոսքոյում կ. և ք. հյուպատոսության գրասենյակի կառավարչի կից բերվող զեկուցագրի ընդարձակ հավելվածը: Որից հետևում է, որ Ռոդոսքոյում ևս նման տխուր իրավիճակ է տիրում, ինչպես և Ադրիանապոլսում է: Դրանից գատ, այն ևս մի ապացույց է, որ Թալեաթ բեյը ճշմարիտը չի ասել, որ Ադրիանապոլսից արքայազն ընտանիքները Ռոդոսքո են տեղափոխվել, բայց նրանք կարող են կրկին այնտեղ վերադառնալ: Իրականում նրանք տարագրվել են Փոքր Ասիա:

Թալեաթ բեյի կարգադրությունն այստեղ տիրող իրավիճակի

հատակ ցուցանիշն է, սակայն մյուս կողմից էլ առկա պայմաններում դժվար է մարդկանց օգնել:

*Կ. և ք. դեսպան
Պալավիչինի*

“Österreich-Armenien”, Bd VII, 1916-1917, p. 5086-5088:

№ 62

*1916թ. մարտի 20-ի
զեկուցագրի առթիվ*

Նորին զերազանցություն կ. և ք. արքունի և արտաքին գործերի պարոն մինիստր՝ քարոն Բուրիանին.

Կից ներկայացնում եմ ես Ձերդ զերազանցությանը Ադրիանապոլսում կ. և ք. հյուպատոսության անցյալ ամսվա 28-ի 48/ համապատասխան զեկուցագրի պատճենը:

*Կ. և ք. դեսպան
(ստորագրություն) Պալավիչինի*

Սուրիանդակի մոջոցով

“Österreich-Armenien”, Bd VII, 1916-1917, p. 5149:

*Պատճեն
Կայսերական զերմանական
դեսպանության
№ 368*

Թերապիա,

10 հուլիսի, 1916

Լիազորմամբ.

Որքան էլ հույժ ցավալի է, տարբեր պատճառներով մեզ չհաջողվեց հայերի նկատմամբ Բարձր Դռան քաղաքականությունը մեղմ հունի մեջ ուղղել, այնպես որ, մյուս կողմից, ոչ մեր թշնամիները, ոչ էլ այսպես կոչված չեզոք երկրները նվազագույն իրավունք չունեն մեզ այդ առթիվ կշտամբանք ներկայացնել, կամ էլ մեզանից պահանջել, որ մենք մեր դատապարտումը հրապարակավ արտահայտենք: Մենք փորձել ենք ըստ հնարավորին մեղմել հայ ցեղի վիճակը Թուրքիայում ինչպես կառավարության վրա ազդելու, այնպես էլ զբասրություն ցուցաբերելու միջոցով:

Ընդհակառակը, բոլոր տեսակի անասելի այն զազրագործությունները, որ համաշխարհային պատերազմի ընթացքում կատարվել են անգլիացիների, ֆրանսիացիների և ռուսների կողմից, երեք ազգերի կողմից, որոնք իրենց որպես բողոքական, կաթոլիկ և ուղղափառ դավանանքի առաջամարտիկներ են ներկայացնում, գերմանացի քաղաքացիական և ռազմագերիների նկատմամբ երբեք Անտանտայի դաշնակից պետություններից որևէ մեկի կողմից քննարկման առարկա չեն դարձել ուրիշների մոտ, այդպես էլ սակավ է խոսվել թշնամական մամուլում մարդու իրավունքների ոտնահարման մասին: Սակայն արժանահավատ կերպով զեկուցվել է, որ Քենտերի արքեպիսկոպոսը չերկնչեց, Բարալոնդի և Քինգ Ստեփենի օկուպացման հայտնի արարքները իր քարոզներում որպես աստվածահաճո գործեր ներկայացրեց:

Այդ իրողությունը հայտնի է նաև Բարձր Դոանը, և նրանք հայերի հարցում մեր միջամտությանը դիմակայում են այդ մատնանշելով:

Ոչ թե մենք, ինչպես հաճախ պնդում են, այլ մեր թշնամիները ցույց տվեցին թուրքերին այն ճանապարհը, թե ինչպես կարելի է բնակչության կասկածելի տարրը վնասագերծել:

Իսկականը ստորագրված է՝ Մետերնիխ

Նորին գերազանցություն Ռայխսկանցլեր պարոն ֆոն Բեթման-Նովեգիմ

“Österreich-Armenien”, Bd VII, 1916-1917, p. 5163-5164:

№ 63

*Բանակի գլխավոր հրամանատարություն,
Տեղեկատվության բաժին,
Կիրակի, 30 հուլիսի 1916թ.*

*Ֆրանսիական մամուլի ծառայություն,
«Տեմպս» (“Temps”) թերթը.*

Հայաստանի նահատակությունը.

Ֆրանսիայի հայկական կոմիտեն բարեմադրության հեռագիր է ուղարկել մեծ իշխան Նիկոլային:

Նորերս լույս տեսած մի ուսումնասիրության մեջ Ռենե Պինոն՝ հայկական հարցի նշանավոր մասնագետը, լուսարանում է հայերի նկատմամբ կիրառված կոտորածների մեթոդները: Թուրքերն իրենց գերմանացի ուսուցիչներին ամենայն պատվի են արժանացրել: Չազրագործություններ կատարվեցին գարմանքի արժանի կարգով և հիզենիկ ծառայության հսկողության ներքո: Վարակի վտանգից խուսափելու համար, որոշյալ օրերին որոշված ժամերին քաղաքներում կարավաններն ի մի էին գումարվում, որոնց տանում էին քաղաքներից դուրս և ժանդարմները որսի պես սպանում էին նրանց: Հայերի բնաջնջումը սուկ մի մասն է այն մեծ ծրագրի, որի շնորհիվ պանգերմանականությանը խանգարող բոլոր ազգերը պիտի վնասագերծվեն, ինչպես քաղղեացիները, ասորիները և լիբանանցիները: Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանության մի աշխատակից ասել է. «Մենք մշտապես չենք հանդուրժել հայերին»: Թալեսթ քեյր թուրքական գործելակերպը բնորոշել է սուկ որպես «եռանդուն»: Սպանված հայերի ընդհանուր թվաքանակն անցնում է կես միլիոնից: Գերմանական կարծիքը բնութագրվել է քահանա Նաումանի հետևյալ ասույթով. «Մենք պիտի ողջամիտ քաղաքականություն վարենք: Այդ հիման վրա մենք պիտի քաղաքականապես անտարբեր լինենք Թուրքիայում քրիստոնյա ժողովուրդների բեկորների նկատմամբ»:

“Österreich-Armenien”, Bd VII, 1916-1917, p. 5173-5174:

№ 64

*Ավստրո-հունգարական
կ. և թ. հյուպատոսություն
Դամասկոս
21/Ք.*

*Դամասկոս,
4 օգոստոսի, 1916*

Հայ վերաբնակիչների իսլամ ընդունելը.

*Նորին գերազանցություն կ. և թ. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ բարոն Ստեփան Բուրիանին.*

Հայ բռնագաղթվածների բնակեցման հարցում, որոնք տեղաբաշխվել են վիլայեթի բոլոր մասերում, մի ուշադրավ երևույթ է հանդես եկել: Վստահելի լուրերի համաձայն, որոնք ոչ մի տարակուսանքի տեղի չեն տալիս, ամբողջ վիլայեթում իշխանությունների կողմից ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում արքայալիսի վրա

խիստ ճնշում է գործադրվում՝ իսլամ ընդունելու առումով: Այժմ այնտեղ, որտեղ տարագրելու շարժումը համեմատաբար դադար է առել և վերաբնակիչներն իրենց նոր բնակարաններում մտադիր են հաստատվել, փորձում են նրանց ստիպել հրաժարվել իրենց ազգությունից, ազգաբնակչության հետ ուժացման հասնել:

Համայում, այսինքն մութեսերիֆի նստավայրում, սրանից որոշ ժամանակ առաջ այսօրինակ բազմաթիվ հավատափոխություններ են տեղի ունեցել: Այստեղ հաստատված որոշ հայերի, որոնք քաղաքում հանգրվանելու շնորհիվ համեմատաբար լավ վիճակում են և այնտեղ կարող են տարբեր արդյունագործական արհեստներով զբաղվել, սպառնալիքով, որ գյուղեր կաքտրվեն, հարկադրել են նրանց կրոնափոխության, մյուսների, որոնք մինչև հիմա կառավարությունից օրապահիկ դրամ են ստանում, որոշվել է այն չվճարել: Հայերն այն սարսափելի ճակատագրի պատճառով, որը նրանց բաժին ընկավ, զիջող են դարձել և մեծ մասամբ կորցրել են դիմադրության բարոյական ուժը:

Սա վերաբերվում է ինչպես քաղաքներին, այնպես էլ հավատափոխությանը գյուղերում, գյուղերում ավելի մեծ թիվ է կազմում հավատափոխությունը, քեև չի կարելի ասել, որ տվյալ շրջանի մահմեդական բնակչությունը համակրանքով է դրան վերաբերում: Գյուղերում հայ տարագրյալների վիճակն այնքան վատ է, որ նրանք առավելապես կառավարության տված օրապահիկ դրամից են կախված: Այստեղից էլ հասկանալի է, որ մի կողմից՝ դրա վերացումը, մյուս կողմից այն կարծիքը, որ ուրացման դեպքում խրճիթ և մի կտոր հող որպես սեփականություն ստանան, ավելի կամ նվազ չափով նրանց զիջող է դարձնում:

Հավատափոխությունն առավել ևս դյուրին է լինում, երբ այն կատարվում է հայ քահանայի բացակայությամբ տվյալ շրջանի կառավարման խորհրդին միայն դիմում տալով:

Բուն Դամասկոսում և շրջակայքում մինչև այժմ նման բռնամիջոցներից ձեռնպահ են մնացել, հավանաբար հաշվի առնելով օտարերկրյա հյուպատոսությունների առկայությունը: Այստեղ էլ հավատափոխության շատ ընտանիքներ են ենթարկվել, սակայն այն ավելի շատ կամավոր է եղել նյութական շահի ակնկալության պատճառով: Այժմ այստեղ էլ բռնամիջոցների են սկսել դիմել, մոտ մեկ շաբաթ առաջ բոլոր հայ վերաբնակիչներին քաղաքում ձերբակալեցին, բռնեցին և հայ առաքելական եկեղեցում փակեցին: Նրանք, որոնք իսլամ ընդունելու ցանկություն հայտնեցին, ազատ արձակվեցին, նրանք, որոնք կտրուկ հրաժարվեցին հավատափոխ լինելուց,

աքտրվեցին գյուղերը: Բավականին թվով մարդիկ համաձայնվեցին կրոնափոխության, այն ժամանակ, երբ իհարկե հենց շատերը անդրդվելի մնացին:

Դամասկոսում այս բռնամիջոցները ցարդ միայն հայ առաքելական դավանանք ունեցողների նկատմամբ էին կիրառվում, իսկ կաթոլիկները և բողոքականները, որոնք, իհարկե, սահմանափակ թվով են առկա, խնայվեցին, եթե նրանք իրենց դավանանքը կարող էին հավաստել հայրենի իշխանությունների տված վկայականով:

Նույն ամսաթվով և համապատասխան 25/P. համարով նույնիմաստ զեկուցագիր են ուղարկել եմ Կոստանդնուպոլիս:

Կ. և ք. գլխավոր հյուպատոս

“Österreich-Armenien”, Bd VII, 1916-1917, p. 5177-5180:

№ 65

*Ավստրո-հունգարական
կ. և ք. ղեկավարություն
Կոստանդնուպոլիս*

*Կոստանդնուպոլիս,
20 հունվարի, 1917*

6

N — B.

P.

Հայկական հարցը Անտանտի պատասխան նոտայում.

*Նորին զերազանցություն կ. և ք. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր՝ կոմս Օտտոկար Չերնին.*

Թուրքական կառավարությունը Անտանտի պատասխան նոտայում հայկական հարցին վերաբերող հատվածը հրապարակելիս բաց է թողել և մինիստրները նույնպես իմ ներկայությամբ ոչ մի բառով այդ կետը չեն շոշափել:

Ինչպես ես այժմ տեղեկացա, թուրքական իշխանավորներն այնպես են զայրանում Անտանտի պատասխան նոտայում հայկական հարցը քննարկելու առթիվ, ինչպես որ Թուրքիան Եվրոպայից վերանալու պահանջի առթիվ: Սակայն նրանք չեն կարող առաջինը իրենց քաղաքական նպատակներին ծառայեցնել, ինչպես վերջինը և նույնիսկ հարկադրված են եղել նոտայի այդ նկատողությունները բաց թողնել, քանզի տակավին զգացում ունեն, որ բուն մահմեդական

չրջաններում հայ ազգաբնակչությունը ոչնչացնելուն նպատակա-
մղված իրենց միջոցառումները չեն արժանացել հավանության: Չէ
որ հայերի դեմ գործադրած անողորմ և անմարդկային գործելակեր-
պը արժանացել է միայն Կոմիտեի մոլեռանդ կողմնակիցների և այն
մարդկանց հավանությանը, որոնք տարագրված և սպանված հայերի
ունեցվածքը վերացնելու միջոցով հարստացել են, այն ժամանակ,
երբ բնակչության ողջախոհ տարրերը և հատկապես մահմեդական-
ների շրջանում, թուրքական կայսրությունում այս աշխատունակ ազ-
գի բնաջնջման մեջ տեսնում են տնտեսական մեծ վտանգ ապագայի
համար:

Անտանտի պատասխան նոտայում հայկական հարցի
քննարկումը, թվում է, այժմ կոմիտեում թեժացնելու է հայերի նկատ-
մամբ տաժաժատելությունը: Այս հայերն են ասում, որ Անտանտը ի-
րենց շատ վատ ծառայություն է մատուցել, երբ այն կշտամբում է
թուրքական կառավարությանը հայկական կոտորածների համար:
Նրանք երկյուղում են, որ Անտանտի այս վարվելակերպի հետևանքը
կլինի նորանոր հալածանքների առաջբերումը, և պնդում են, որ ի-
րենք դրա հավաստի կանխանշաններն ունեն:

Ամենից առաջ նրանք հավաստել են, որ դրա համար իրավա-
տու իշխանությունները հանձնարարություն են ստացել արգելել հա-
յերին պատկանող գույքի ամեն մի փոխանցում: Այդօրինակ գաղտ-
նի հրամանները վերջին ժամանակներում միշտ նախորդել են հայ-
կական կոտորածներին կամ տարագրություններին, որովհետև դրա-
նով կամենում էին խանգարել, որ արքայազների ինչքը հարկադրա-
բար վերացնելը թուրքերի հարստացման լավագույն միջոցից կարող
են զրկվել:

Գրանից գատ, կարող էին հայերը հավաստել, որ պատաս-
խան նոտան թուրքական իշխանություններին հանձնելուց ի վեր
կրկին նկատելի է բուռն մի առելություն հայերի հանդեպ, որոնք
նրանց համարում են այդ հարցը բարձրացնելու նախաձեռնողներ:

Թուրքական մտայնությանը ամբողջապես կհամապատաս-
խաներ, եթե կառավարությունը հայերին նորից հալածանքների
ենթարկելով բնաջնջեր այդ ազգի մնացյալ մասը թուրքիայում և
դրանով իսկ ամբողջ հայկական հարցն արմատական եղանակով
վերացնելու ասպարեզից:

Այստեղի հայերը, հատկապես վերջին կոտորածների և տա-
րագրությունների ժամանակից ի վեր, շատ ջղազրգիռ և երկչուտ են
դարձել, բայց ես բացառված չեմ համարում, որ իմպուլսիվ և մոլե-
ռանդ թուրքական պետական այրերը դարձյալ հիմարություն կանեն

հայերի նկատմամբ նոր ծավալուն հալածանք գործադրելով իրենց ոչ
միայն բշնամիների, այլև ամբողջ քաղաքակիրթ աշխարհի ամեն մի
համակրանքը կկորցնեն:

Վերոհիշյալ լուրերը ինձ են հասել հենց վերջին ժամին, բայց
ես տակավին առիթ կունենամ իմ գերմանացի գործընկերոջը տեսնե-
լու և գործը նրա հետ քննարկելու:

Կ. և ք. դեսպան
(ստորագրություն) Պարավիչինին

“Österreich-Armenien”, Bd VII, 1916-1917, p. 5259-5262:

№ 66

ZL 21

Սամսուն,
26 մայիսի, 1917

Pol.

Վիլհոնտ Բրայս. «Հայերի կոտորածները Օսմանյան
կայսրությունում 1915-1916թթ.»

Նորին գերազանցություն Կ. և ք. արքունի և արտաքին գործերի
պարոն մինիստր, կոմս Օտտոկար Չերնի ֆոն Խոտենտիցին.

Վիեննա

Որքանով ես կարողացա տպավորություն ստանալ այս
գրքից, իմ ունեցած տեղեկությունների և լուրերի համաձայն, գրքի
բովանդակությունը մեծ մասամբ համապատասխանում է ճշմարտու-
թյանը:

Արդեն Տրապիզոնից ես առիթ ունեցա գերմանական կայսե-
րական հյուպատոս կոմս ֆոն Շուլենբուրգի և դոկտոր Բերգֆելդի մի-
ջոցով լուսաբանել հայերի նկատմամբ թուրքական կողմից կիրառած
դաժանությունների օրինական ակնհայտ մեղմացումը:

Այնուհետև ես իմացա, որ գերմանացի պաշտոնյա պարոն
Շոյրների ելույթը Էրզրումում հոգուտ հայերի, չի արժանացել գեր-
մանական դեսպանության և ռազմական միսիայի հավանությանը, և
կոմս Շուլենբուրգը այստեղից և գեներալ Բրոնսարտը հանձնարա-
րություն է ստացել այլ դիրք գրավել:

Արդեն Կարա - Հիսարի միջնաբերդից ստացած տպավորու-

քյունները և այլն, որտեղ կոնս Շուլենբորգը դեռևս անցյալ տարվա մայիսին հայտնաբերեց կանանց և երեխաների կիսանեխած դիակներ, հարկադրեցին նրան փոխել իր հայացքը և գեկուցագրերը:

Գերմանա-վրացական միսիային կցված շտաբային բժիշկ դոկտոր Հ.Շտոֆֆելսը հայտնեց ինձ վերջերս, որ ինքը 1915թ. աշնանը Մուշի և Սդերքի միջև հայկական նախկին մեծ թվով բնակավայրերում՝ եկեղեցիներում և տներում կանանց և երեխաների ածխացած և նեխած դիակներ է տեսել:

Համահնչուն գեկուցում ես ուղարկեցի Կոստանդնուպոլիս:

Ա. և Ք. հյուպատոս
(ստորագրություն)

“Österreich-Armenien”, Bd VII, 1916-1917, p. 5318-5319:

№ 67

*Թուրքիայում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինիի
Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի մինիստր Օտտոկար
Չերնիցին 1917թ. դեկտեմբերի 22-ին հղած գրությանը կից հավելված*

Հավելված 2.

Որոշ նոթեր Թուրքիայում քրիստոնյաների սպանության մասին.

Դիարբեքիի վիլայեթ. Ուրֆայի մերձակայքում՝ Վերեն-Շահիրում, որը մի փոքր քաղաք է 1400 հայ ընտանիքից և 140 ատրի ընտանիքից բաղկացած բնակչություն ունի, 400 ընտանիք ամբողջապես արքայազմ է ամառվա սկզբին, բոլոր տղամարդիկ սպանվել են: Հարուստ ընտանիքները կանանց և երեխաների հետ միասին բնաջնջվել են:

Սևերեկում բոլոր տղամարդիկ սպանվել են, կանանց և երեխաներին ընդհանուր առմամբ 300 ընտանիք արքայազմ են: Հակոբականների մեծ թվով գյուղերի բնակչությունը սպանված է:

Դիարբեքիի մերձակայքում գտնվող քաղղեացիների չորս գյուղի (բնակիչներ) նույնպես իրենց քահանայով հանդերձ սպանվել են:

Մարդինում. Այս քաղաքի բոլոր հայերն իրենց արքեպիսկոպոսով և 10 քահանայով հանդերձ արքայազմ են, իսկ այնուհետև ճանապարհին սպանվել:

Չեզիրաքում. Քաղղեական և ասորական բոլոր քրիստոնյաներն իրենց եպիսկոպոսներով և քահանաներով հանդերձ սպանվել կամ բնաջնջվել են: Այս քաղաքի արքեպիսկոպոսի թեմին պատկանող 17 քաղղեական գյուղեր կողոպտվել և արքայազմ են, տղամարդիկ սպանվել են:

Սդերքի թեմը. Քաղաքում կար 450 հայ ընտանիք, 120 քաղղեացիների ընտանիք, Հակոբականների 30 ընտանիք, բոլորը կողոպտվել, կոտորվել կամ արքայազմ են իրենց քաղղեական արքեպիսկոպոս մոնսինյոր Ադաի Չահերի հետ մեկտեղ: Այս քաղաքի շրջակայքում կա 40 քաղղեական գյուղ իրենց քահանայով հանդերձ կողոպտված և սպանված են:

Ուրֆայում. Ուրֆան, երբեմնի Եղեսիան՝ Աբգար արքայի մայրաքաղաքը, ավելի դաժան ճակատագիր է ունեցել: Երեք անգամ քրիստոնյաները, որոնց թիվը 25 000-ից ավելի էր, կողոպտվեցին, կոտորվեցին և դաժանությամբ կոտանքների ենթարկվեցին, այնուհետև քաղաքի թաղամասերը հրետակոծվեցին և ավերվեցին: Նրանց եպիսկոպոսն ու իր քահանաները երևելի քաղաքացիներով հանդերձ, մոտ 500 անձ բանտ նետվեցին սպանվելուց առաջ, հետո արքայազմեցին, ինչպես ասում են դեպի Դիարբեքի, սակայն ճանապարհին նրանց սպանել են: Այժմ հազարավոր որբ-ստրուկներ գտնվում են մահմեդական ընտանիքներում: Այս թշվառներից շատ-շատերը Ուրֆայի փողոցներում սովամահ են լինում: Ուրֆայի մահմեդականները կառավարության հետ անձամբ մասնակցել են կոտորածներին, նրանք կողոպտել են քրիստոնյաների ամբողջ ունեցվածքը:

Հայաստանը, Քրդստանը և Միջագետքի մեծ մասը դարձել են բարբարոսական և սահմուկեցուցիչ տեսարանների թատերաբեմ: Ջրամբարները, հովիտները, անձավները լցվել են դիակներով: Եփրատի և Տիգրիսի հոսանքները շաբաթներով շարունակ տանում էին նեխած դիակներ: Այս վայրերում ճամփորդները հանդիպում են քաղաքից քաղաք և գյուղից գյուղ թափառող հայերի և քաղղեացիների, որոնք իրենց քաղաքներից և գյուղերից վտարված են, զիչերում են բացօթյա, ենթարկված են ամառվա տաալին և ձմեռվա ցրտին: Նրանք բոլորը դատապարտված են սարսափելի մահվան:

Քրիստոնյաների ճակատագիրը Թուրքիայի այլ մասերում շատ անորոշ է: Նրանք մշտապես ենթակա են սպանվելու սպառնալիքին:

“Österreich-Armenien”, Bd VII, 1916-1917, p. 5052-5053:

*Հավելված 3.
Անգորա*

Կարոլիկների թվաքանակը. 13-15 գերմանացի կաթոլիկ, 1500-2000 հայ կաթոլիկ: Նախկինում, այս տարագրությունից առաջ կաթոլիկ հայերի թվաքանակը կազմում էր 7-10000:

Տարագրությունից զերծ մնացին միայն այն ընտանիքները, որոնց անդամներից մեկը գտնվում էր ռազմաճակատում, ինչպես նաև մի քանի այլ ընտանիքներ, որոնցից միայն տղամարդկանց արտոբեյն: Դրանից զատ, մոտ 50-100 տղամարդ թաքնվել էին և խուսափել արքայազնից: Դրան պիտի ավելացնել նաև Կոստանդնուպոլսից արտաքսված 150-200 անձանց, որոնք մեծ մասամբ ռուսահայատակներ են և կաթոլիկ դավանանքի են պատկանում:

Եկեղեցիներ. Լատինական ոչ մի հատ, հայ կաթոլիկական 4, այժմ գոցված, մասամբ այլ նպատակներով են օգտագործվում:

Հոգևորականներ. Լատինական ծեսի չկա, հայկական չկա: Նրանք բոլորն էլ եպիսկոպոսի հետ տարագրվել են: Միայն Կոստանդնուպոլսից արտաքսվածներն իրենց մեջ մեկ հոգևորական ունեն, որը սակայն միայն արտաքսվածների շրջանում է կարողանում հոգևոր ծառայություններ կատարել:

Դպրոցներ. Ֆրանցիսկյան դպրոցական եղբայրության արական դպրոցը (փակված է):

Անհրաժեշտ միջոցառումներ. Մի հայ հոգևորականի թույլատրել գործել (ցարդ շարունակ մերժվում է) մինչև գերմանացի անհրաժեշտ հոգևորականի գալը: Առնվազն մեկ եկեղեցու բացումը: Դպրոցը կհետևեր դրան անմիջապես: Նյութական կարիքը փոքր ինչ մեղմել: Հոգևոր կարիքն ավելի է այնուամենայնիվ, հունական ուղղափառ դավանանքով գայթակղելու հետևանքով դավանափոխությունը:

Այլ զեկուցագրերը վկայում են, որ Անգորայում նյութական մեծ կարիք կա: Դոկտոր Դավիթը վեց որբ երեխա է պահում և թույլատրում է այլոր բաժանել: Մեծագույն կարիքը այնուամենայնիվ հոգևոր բնույթի է: Մնացյալ 1500 կաթոլիկ հայերը (նախկին թվաքանակի 1/7-ը) հոգևորական չունեն և շարունակ ավելի շատ են դավանափոխության հարկադրված լինում: Թուրքական կառավարությունը չնայած բազում ջանքերին թույլ չի տալիս ոչ մի հայ հոգևորականի Անգորա գալ, նրանց բոլոր եկեղեցիները գոցել է և անձամբ դոկտոր Դավիթին արգելել է իր տանը ժամասացություն կատարել: Վալին հայտնել է, որ հայկական երկու եկեղեցի բացվելու են, հենց որ մի

հայ հոգևորական գա: Բայց վերջինս երբեք թույլատրություն չի ստանում այնտեղ գնալու համար:

“Österreich-Armenien”, Bd VII, 1916-1917, p. 5054:

*Հավելված 4.
Մեկ միսիոների զեկուցագիրը.*

Դեպի Իզմիթ կատարած միսիոներական իմ առաջին ուղևորության թերումով ես անձամբ հետևյալ հավաստումները կարողացա անել.

1. Իզմիթի և Պարտիզակի շրջանների հայերի նկատմամբ ներկայումս թուրքական կառավարության կողմից այլևայլ հալածանքներ են գործադրվում: Մեծամասնությունը, իրենց ամբողջ ունեցվածքը վերգրելուց հետո, արտաքսվեց երկրի խորքերը, որտեղ մահն անշուշտ ամենամեծ դժբախտությունը չէ, որ նրանց սպասում է:

2. Կաթոլիկ հայերն այս առումով բացառություն չկազմեցին, որոնք Իզմիթից օգոստոսի 2-ին և օգոստոսի 16-ին Պարտիզակից արտոբեյն:

3. Ուղևորությունից առաջ այս դժբախտները փորձեցին ծածուկ իրենց գույքը վաճառել, ըստ հնարավորին շատ վաճառել, որպեսզի ուղևորության որոշ գումար ստեղծեին, առանց որի նրանք սովի պիտի մատնվեին: Նման հանգամանքներում նրանք ստիպված էին՝ օրինակ, կարի մեքենան 5 պիաստրով (դուրուշով), նրբաճաշակ կերպով պաստառապատված բազկաթոռները ընդամենը 20 փարալով վաճառել և այլն:

4. Ես առիթ են ունեցել քրիստոնյաների կողմից լքված տարբեր տներ քննել: Ամենուրեք նկատելի էին թարմ կողոպուտի հստակ հետքերը, որը կատարվել էր թուրքական ազգաբնակչության, հատկապես կանանց կողմից և որը իշխանությունների կողմից հավանության էր արժանանում:

5. Լքված շատ տներ վեր են ածվել պահեստների, որտեղ պահեստավորվում են քրիստոնյաներից կողոպուտած կահույքը, որպեսզի կամ դրանք թուրքական ընտանիքներին բաժանեն, կամ էլ հրապարակավ աճուրդի հանեն: Լքված բնակարանների վարձակալունը դրվելու է աճուրդի:

6. Իզմիթի կայարանի պահեստներում են գտնվում ժամանակավորապես մոտ 100 կին և աղջիկ (այն քրիստոնյա զինվորների ըն-

տանիրների բոլոր անդամները, որոնք ներկայումս իրենց «հայրենիքն» են պաշտպանում), որոնց որոշել են ի վերջո երկրի լարքերում գտնվող քուրքական բնակավայրերի վրա բաժանել, և ոչ ավելի, քան 5 քրիստոնյա 10 քուրքական ընտանիքին հարաբերակցությամբ: Բնականաբար նրանք հարկադրված հսկատափոխ կլինեն:

7. Օգոստոսի 27-ին, ուրբաթ օր, Իզմիրի հայկական գրեթե ամբողջ քաղաքն ամայացավ մի մեծ հրդեհի հետևանքով, ավելի քան 600 տուն փլվեց...

8. Շաբաթ օրը կաթոլիկ հայերը պիտի իրենց արտոբավարից վերադառնային Իզմիր, մեծամասնությունը նույն օրն իրենց քահանայի հետ միասին եկան: Նրանք գրեթե այլևս ոչինչ չունեին այն ամենից, ինչը նրանք իրենց սեփականությունն էին համարում, այնուամենայնիվ գոհունակություն էին հայտնում աստծուն, որ զեք ողջ վերադարձել են, և հավատում են, որ հետ այսու ապահով կլինեն:

9. Նրանց վերադարձի դեմ ավելի հիմնավոր առարկելու նպատակով բազում անգամ նրանցից պահանջել են ուղեվարձ, սակայն նրանց դրա համար առանց համապատասխան տոմս տալու: Վերջինս նրանք գնել են միայն Իզմիր վերադառնալուց հետո, որտեղ բնականաբար ևս մեկ անգամ և վերջնականապես վճարում են կատարել:

10. Իրենց վերադարձից հետո նրանք, որոնց տները զերծ էին մնացել հրդեհից, չկարողացան այլևս տիրել իրենց սեփականությանը, քանզի այլ սեփականության պես իրենց միակ բնակարանները իշխանությունների կողմից աճուրդով վաճառվել էին կամ էլ կառավարությունը դրանք բռնագրավել էր:

11. Օգոստոսի 29-ին, կեսօրին մոտ, հանկարծ մի անբացատրելի հակահրաման պարտադրում է օր առաջ վերադարձած կաթոլիկներին անմիջապես կրկին արտրել: Այդ նույն պահին զնացքով նոր վերադարձողներ եկան, որոնց թույլ չտվեցին նույնիսկ իրենց բեռնատար վագոններից դուրս գալ, նրանք պիտի միանային առաջիններին, անհապաղ, վերստին հետ գնային:

12. Լուսավորչական հայերը, որոնց Օսմանյան կայսրության տարբեր մասերից ի մի էին հավաքել, խմբերով անցնում էին Իզմիրի մոտով, որպեսզի իրենց արտրի ճամփան բռնեն, այստեղի հայ աղանդավորական եկեղեցում այլևայլ հարցաքննության և կտտանքների նրանց ենթարկեցին: Որպեսզի նրանցից կասկածելի «կոմիտեականների» մասին ցուցումներ կորզեն, նրանց կապկալել են նստարանին, մերկ ոտքերի ներբանները բրածեծի են ենթարկել այնքան

ժամանակ, մինչև որ նրանք ուշաթափ են եղել կամ էլ կտրտանքներից ստիպված որևէ պատահական անուն են տվել, որն այնուհետև հետագա ձերբակալումների առիթ է տալիս: Այսպես, օրինակ, ես տեսա այդ կտտանքների գոհեղից մեկին, որին քարշ էին տալիս եկեղեցուց դուրս, որը ուշաթափված էր և որի երկու թևերը ու մի ոտքը դուրս էին ընկած:

Իզմիրի մասին այս գեկուցագիրը 1915թ. սեպտեմբերի 1-ին ես հանձնել եմ ավստրո-հունգարական դեսպանին: Նորին գերազանցությունը չէր կամենում իմ տվյալներին հավատալ և վկայակոչեց օգոստոսի 30-ին Թալեթ րեյի կողմից իրեն տված հավաստիացումը, որի համաձայն հայերի հալածանքներն ընդհանրապես դադարեցվել են և հատկապես կաթոլիկ հայերն արդեն իրենց լքած տներն են վերադարձել, ձեռնամուխ են եղել իրենց նախկին խաղաղ աշխատանքին:

Ես, բնականաբար, պնդեցի, որ նորին գերազանցությունը հավաստի հակառակը, որն ավստրո-հունգարական դեսպանության կողմից անհապաղ հետագա քայլեր ձեռնարկելու առիթ կտա: 1915թ. սեպտեմբերի 4-ին ես մեկնեցի վերստին Իզմիր, հաստատ համոզված լինելով դրա նպատակով արդյունքների մեջ և այնտեղ վիճակը ավելի վատթար գտա, քան դրանից առաջ էր:

1. Աքտրված հայերից ոչ միայն ոչ մեկը չէր վերադարձել, այլև այն քչերը, որոնք առ այս պահը խոնարհ կաթոլիկներ էին, քշվել են երկրի անհրապույր խորքերը:

Ոչ մի կաթոլիկ քահանա չկա, այն երեքը, երբ Պարտիզակը լքեցին, մնացել էին Իզմիրում, այժմ կանչվել են Կոստանդնուպոլիս:

2. Հայ կաթոլիկական մատուռը և համապատասխան, տակավին անավարտ կառուցված եկեղեցին կառավարության կողմից բռնագրավվել են: Քահանայի տան կտուրի վրա փողփողում է կարմիր դրոշը կիսալուսնով:

3. Ամբողջ եկեղեցական գույքը վանդալների պես գործող իշխանությունների կողմից դուրս է նետված, այդօրինակ հանգամանքներում մի քանի հույն կանայք բազմաթիվ խաչելություններ և սուրբ մեռու էին հավաքել և այնուհետև ինձ հանձնեցին:

4. Այս պահին Իզմիրում լատինական ծեսի 70 կաթոլիկ կա, դրանց թվում հինգ ավստրիական ընտանիք: Վերջիններս նախկինում այցելում էին տեղի լատինական եկեղեցին, որը սակայն, գտնվելով ֆրանսիական հովանավորության ներքո, շատ ամիսներ առաջ կառավարության կողմից զոցվել էր: Դրանից հետո նրանք մասնակցում էին մշտապես հայ կաթոլիկական ժամերգությանը և

այժմ հայ կաթոլիկներին արտոնելուց հետո լրիվ առանց քահանայի և որևէ հոգևոր մխիթարանքի:

5. Լատինական ծեսի այս կաթոլիկները, բացի այդ, գտնվում են միայնակ մոլեռանդ բնակչության շրջանում, որը այսուհետև սովորել է, որ քրիստոնեական բոլոր ունեցվածքը համարել իր սեփականը, և չի կարողանում հասկանալ, թե այս անիծյալ «գլավորներին» Իզմիթում ընդհանրապես դեռ ինչու են հանդրուրժում:

Պատահում է, որ կաթոլիկ աղջիկներին թուրքերը շատ լկտի ձևով վիրավորում են:

6. Նախորդ զեկուցագրի 6-րդ կետում հիշատակված զինվորների ընտանիքների կին անդամները չեն խուսափել նրանց ճակատագրից: Նրանք արդեն երկրի խորքերն են արտրվել:

7. Վերը բերված փաստերը հավաստելուց հետո ես անմիջապես այցելեցի մութասերիֆին այդ դեպքերի դեմ բողոքելու և նրան խնդրելու համար լատինական ծեսի կաթոլիկների համար կիրակնօրյա ժամասացության նպատակով հայ կաթոլիկական եկեղեցի բացել: Թեև ես ավստրիացի էի, ընդունեցին ինձ խիստ կոպիտ ձևով և այնուհետև ավելի քան երեք ժամ շարունակ մի պաշտոնյայից մյուսի մոտ էին ուղարկում ոչնչի չհասնելու համար:

“Österreich-Armenien”, Bd VII, 1916-1917, p. 5055-5058:

№ 68

Սամսուն,
9 հունվարի, 1918

ZL. 3/Pol.

Իրադրությունը և տիրույթ
մտայնությունը Սվազում
(Համեմատիր 1917թ. հունվարի
30-ի զեկուցագրի թիվ 8 /pol. քաղվածքը)

Նորին զերազանցություն, կ. և բ. արքունի և արտաքին գործերի պարոն
մինիստր, կոմս Օտտոկար Չերնին ֆոն Խուլենիցին.

Վիեննա

Սվազում գտնվող զերմանական հյուպատոս դոկտոր Բերգֆելդի հավաքած տեղեկությունների մասին ես կարող եմ ամփոփ ձևով հետևյալը զեկուցել.

Վալի Մուլեյման Նեջմեդինը, որը որպես Սամսունի մութասե-

րիֆ¹ այնտեղ բարի հիշողություն է թողել, պատվով և ջանասեր անձ է, սակայն իր ձգտումների հետևանքով մոլորվում է մանրուքների մեջ շատ խորամուխ լինելով, մյուս պաշտոնյաները թուրքական սովորական միջակությունից բարձր չեն:

Թվով սահմանափակ մտավորականության շրջանում մտայնությունը կենտրոնական տերությունների նկատմամբ անբարյացկամ է. երիտթուրքական կոմիտեի հանդեպ, որը նվիրյալ շատ կողմնակիցներ չունի, տիրում է բացահայտ դժգոհությունը: Բնակչության համար Արևելյան Անատոլիայից բուն մահմեդական վերաբնակիչների համար շատ քիչ բան է արվում, այստեղից էլ մեծ զանգվածների աճող աղքատությունը քչերի հարստացմամբ հանդեմ: Հայերի արքարումը, որոնց թվաքանակը ամբողջ վիլայեթում 180 000 էր մոտավորապես հասնում, որոնք առևտրում, արհեստագործության և երկրագործության մեջ նշանակալի չափով գործունյա էին, այժմ զգալիորեն նկատելի է: Արտադրական որոշ ճյուղեր պարզապես դադարել են գոյություն ունենալուց:

Չորքերը բարձիթողի վիճակում են, տառապում են կարիքից, այստեղից էլ բազմաթիվ դասալիքներ:

Թղթաղրամը բռնկված է արագ ընթացող արժեզրկմամբ, երբեմն 1 ոսկե լիբան հավասար է 6-7 թղթե լիբայի, այստեղից էլ համապատասխան քանկություն:

Գերմանական դեսպանը Առստանդուպուսում, կոմս Բերնդորֆը, պարզվում է, որ քաջատեղյակ է, աշխույժ հետաքրքրություն է ցուցաբերում ամեն մի մանրամասնության նկատմամբ: Դոկտոր Բերգֆելդի հրաժեշտի առթիվ ընդունելությունը 2 ժամից ավելի է տևել:

Համահեչուն զեկուցագիր ես ուղարկել եմ Առստանդուպուլիս:

Կ. և բ. հյուպատոս
(ստորագրություն)

Լրացում. Հայկական թաղամասերը գրեթե ամենուրեք ավերումների պատկեր են ներկայացնում: Տեղաբնիկները և վերաբնակիչները կողոպուտի են ենթարկում լքված տների դռները, պատուհանների շրջանակները և հատակի տախտակամածները: Ամասիայում տնկված պտղատու, խաղողի և թփի ծառերը կտրատվել և որպես վառելափայտ են օգտագործվել, շենքերի կողոպուտներից քա-

¹ Զաղարապետ:

րեր են հանվում, որի հետևանքով հողի քերքատվության աստիճանական անկում և՛ ճանապարհների, և՛ ուղիների վերացում է տեղի ունենում:

“Österreich-Armenien”, Bd VIII, 1918, p. 5512-5513:

№ 69

ZL. 17 (քաղաքական)

Մամսուն,
13, մարտի 1918

Պայքարը հայերի և հույների դեմ
Արևելյան և Միջին Անատոլիայում
(1915-1918)

Նորին գերագանցություն կայսերական և բազավորական արքունիքի և արտաքին գործերի կ. և բ. պարոն մինիստր, կոմս Օտտոկար ֆոն Խուլենտիցին

Վիեննա

Արևելյան և Միջին Անատոլիայի համար որպես պատերազմի հետևանքներ են համարում նաև թուրքերի պայքարը հայերի և հույների դեմ, պայքար, որ իր ծագմամբ և հետագա ընթացքով որոշ նմանություն է դրսևորում:

Հայերը, ինչպես և հույները, եկեղեցական և դպրոցական գործերում լայն ինքնուրույնություն ունեին: Առևտրում և արհեստագործության մեջ, ազատ մասնագիտություններում շատերը ակնառու հաջողությունների էին հասել և այդպիսով երկրի տերերին հավանաբար հետին պլան էին մղել:

Իհարկե, բոլոր դեպքերում հայ, ինչպես և հույն գյուղացիությունը տառապում էին իշխանությունների կամայականություններից, հայ բնակչությունը, դրանից զատ, տառապում էր քրդերի կեղեքումներից, սակայն ամբողջապես երկուսի դրությունը, հատկապես քաղաքներում, ամենևին աննպաստավոր չէր, և այդ պայմաններում հայտնվեցին ցանկացած պահին նրանց օգնականները. նրանց բարձր հոգևորականությունը և օտար ներկայացուցիչները:

Այն ժամանակ, երբ թուրքերի և հայերի հարաբերությունները արդեն համիդյան ժամանակներում լուրջ մթազումների ենթարկվեցին և հանգեցրին վերջին երկու տասնամյակի հայտնի արյունահեղություններին, առնչությունները թուրքերի և հույների միջև շարունա-

կում էին մնալ տանելի, մինչև վերջիններս շրջանում զույս չբարձրացրեց հանդուգն այն տրամադրությունը կապված հունական գորքի Բալկանյան պատերազմում անակնկալ հաջողությունների, բրակյան մուհաջիրներին տեղերում բռնի վերաբնակեցման փորձերի, թուրքական կողմի հունական առևտրական ձեռնարկումների վաղորդ բոյկոտի ենթարկելու հետ, երկու կողմից էլ թշնամանք առաջացրեց: Տրապիզոնի հույներն իրենց մետրոպոլիտ Խրիզանտոսի զսպող ազդեցության շնորհիվ, զգուշավոր կեցվածք էին որդեգրել, սակայն այլ ընթացք ընդունեց հայերի և հույների գրեթե ողջ հանրությունը համաշխարհային պատերազմի սկզբին նրանց այն ժամանակվա եռյակ դաշինքի հանդեպ տաժաժ զգացմունքներով հանդերձ, նրա հետ բաժանում էր ուրախությունը և տառապանքը իր հոգում, կարոտով սպասում էր անգլո-ֆրանսիական նավատորմի մուտքին Բոսֆորում, ինչպես նաև նրա միավորմանը ցարական ծովային ուժերի հետ Սև ծովում: Սակայն դարդանելյան դիմակայությունը, 1915թ. գարնանը հաղթական առաջխաղացումը Գալիցիայում, վրա հասավ, և դրա փոխարեն սկսեց հայերի ճակատագիրը ի կատար ածվել:

Էջմիածնի կաթողիկոսի սաղրիչ կոչը ցարերի օգտին պատերազմի սկզբին, ծագումով հայ զինվորների զանգվածային դասալիքությունը հրոսակային կազմավորումները:

Ամենից առաջ սակայն Վանի հայերի ապստամբությունը (1915թ. ապրիլ), բորբոքեց թուրքերի հին գայրույթը և ռազմաքաղաքական դրդապատճառներով բոլոր հայերին աքսորելու առիթ տվեց 1915թ. ամռանը:

Այդ արտակարգ դաժանությամբ իրականացված միջոցառումը տարածվեց Արևելյան Անատոլիայի վեց վիլայեթներում, Տրապիզոնի վիլայեթում և Մամսունի սանջակում բնակվող շուրջ միլիոն հայերի վրա, որոնցից շատ քչերին վիճակվեց խուսափել մահից կամ Միջագետք, համապատասխանաբար Միրիա արքայությունը: Այն ժամանակվա դաժան իրադարձությունները, որոնք զազաբնակետին հասան Սվազի և Տրապիզոնի վիլայեթներում իրենց լրացուցիչ լուսաբանումը ստացան ներկայիս մեծ վեզիր Թալեաթ փաշայի պարզաբանումներում, որ նա արեց երիտթուրքական վերջին համագումարի առթիվ:

Ծովափի հույները հայերի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքից չզգուշացան: Ըստ ամենայնի պահպանում էին Տրապիզոնի հույները մինչև ռուսների կողմից քաղաքի գրավումը /1916թ. ապրիլի 18/ իրենց զգուշավոր կեցվածքը, դրան հակառակ ես կարո-

դացա արդեն Կերասունատում բազում շարքեր իմ գտնվելու (1916թ. մարտ-ապրիլ) ընթացքում նկատել և այդ մասին զեկուցել, հույների հակվածությունը դեպի Ռուսաստան, հակվածություն, որ դրսևորվում էր անխոհեմ բազմաթիվ դատողություններում: Էլ ավելի վատթար զարգացում էին ստանում իրադարձությունները Մամսունում և շրջակայքում:

Արդեն 1915թ. դասալիքներից հրոսակախմբեր էին կազմվել, որոնք բռնաբարքներ էին անում հունական գյուղերում, նկատելի համարում էին ստանում թուրքական կողմից. միայն 1916թ. օգոստոսին հավաստվեց հունական հրոսակախմբերի կապը ռուսական նավերի հետ, հարձակումներ փոստի և ժանդարմական բաժանմունքների վրա, առիթ տվեցին թուրքական կառավարությանը բազմահազար զինվորներից բաղկացած զորական ուժ ուղարկել Մամսուն և շրջակայքը՝ հրոսակների դեմ պայքարելու համար: Նաև այստեղ տեղաբնիկ բազում հույների Ռուսաստանի նկատմամբ հակումը այնպիսի անխոհեմ ձևով էր դրսևորվում, որ դա թուրքերի համար այլևս գաղտնիք չէր:

1916թ. վերջին և 1917թ. սկզբին ծայր առան բազմաթիվ հունական գյուղերի կողոպտումը և հիմնովին հրկիզումը; 200-ից ավելի Մամսունի մերկացված և կասկածելի հույների արտաքսումները, Մամսունի երկու արվարձանների (Կաղիբոյ և Էլիասբոյ) հույների անակնկալ արքսորումը 1917թ. հունվարի 9-ին, հաջորդ ամիսներին անընդհատ պայքարը հրոսակախմբերի դեմ, հրոսակների և դասալիքների բազմաթիվ սպանությունները:

Անցյալ տարվա ամռանը նկատելի էր մեղմ տրամադրվածություն հույների նկատմամբ: Իզեթ փաշան հանդես եկավ նրանց օգտին, Ռեֆեստ փաշան և մյուսները հետ կանչվեցին: Մակայն հրոսակախմբերի շարունակվող գործունեությունը, մետրոպոլիտ Գերմանոսի գուտ ջանքերը՝ ավագակային գործողությունները դադարեցնելու ուղղությամբ, ամենից առաջ հունական մի հրոսակախմբի հարձակումը 1917թ. հոկտեմբերին Բաֆրայի մոտ գտնվող թուրքական մի գյուղի վրա, առիթ տվեցին Բաֆրայի շրջակայքի հունական գյուղերի շարունակվող մարդաթափությանը:

Մետրոպոլիտ Գերմանոսը, որն երկար ժամանակ սպառնացող վտանգը չէր զգում, այդ ընթացքում (1917թ. հոկտեմբերի 28-ին) հանկարծ արտաքսվեց Կոստանդնուպոլիս:

Ընդհանուր առմամբ ծովափից՝ Տիրեբոլից մինչև Բաֆրա մոտ 70 000 հույն է արքսրի և հարկադիր բնակեցման ենթարկվել երկրի խորքերում և պիտի դրա մեծ մասը, քանզի միջոցառումը ան-

բարենպաստ տարիներին իրականացվեց, զոհված լինի:

Քաղաքները, Օրդուն բացառյալ, ցարդ զերծ են մնում հույների ընդհանուր արտաքսումից:

Այսպես ճայքեց այն հատուցումը, որպիսին պատմությունը հազվադեպ է արձանագրել, հայերի և հույների գլխին և շատ դժվար կլինի գոյության պայքար մղող Թուրքիայի ներքին թշնամուց համառորեն պաշտպանվելու իրավունքը վիճարկելը, սակայն Թուրքիան այս դեպքում անցավ պետական անհրաժեշտության բոլոր առողջ չափերը, անթիվ դաժանություններ կատարվեցին, ոչնչացվեցին հսկայական քանակությամբ տնտեսական ուժեր, այժմ արդեն ավելի քան ողջ հայության ոչնչացումն այդ պատճառով և հույների զգալի նվազեցումը, այդպիսով հասան այդ տարածաշրջանի քրիստոնյա տարրի ծրագրված նվազեցմանը: Մակայն թուրքերի դեմ կուտակված ատելությանը, որի մասին են վկայում նաև Արևելյան Անատոլիայում տեղի ունեցող ծանր մարտերը հայկական հրոսակախմբերի դեմ, հայերն ու հույները արտասահմանում իրենց պաշտպանների հետ միասին, հայկական և հունական հարցը անուշադրության չեն բողմի և Թուրքիայի համար նաև պատերազմից հետո ևս ծանր բարդություններ են ստեղծելու:

Գրանից, պատմական փորձը ցույց է տալիս, որ ազգային հարցերը տևական ժամանակով բռնությամբ չի կարելի խեղդել և ազատարար լուծումը թեկուզ և ուշ, բայց այնուամենայնիվ միշտ վրա է հասնելու:

Համահնչուն զեկուցագիր ես ուղարկել եմ Կոստանդնուպոլիս:

*Կ. և Բ. հյուպատոս
(տտորագրություն)*

Կոստանդնուպոլիսում

Կ. և Բ. դեսպանության միջոցով.

“Österreich-Armenien”, Bd VIII, 1918, p. 5703-5707:

№ 70

Թիվ 10713

Հեռագիր

Գաղտնի

Բարոն Սիլաշի

Բերա, 25 հունիսի 1918

Ս/ք.

Թիվ 386

Ընդունված է ժամը 6-ին

Ծածկագիր

Կոնֆերանսին մասնակցելու եկած մի քանի օր արդեն այստեղ գտնվող հայկական պատվիրակության առաջին պատվիրակներ Ահարոնյանը և Խատիսովը այցելել են Գերմանիայի դեսպանին և ինձ: Առաջինն ազգային խորհրդի և պատվիրակության նախագահ է, երկրորդը՝ Թիֆլիսի նախկին քաղաքապետն է, արտաքին գործերի մինիստրը: Նրանք լավ, կիրք տպավորություն թողեցին:

Նրանք ինձ պատմեցին, որ Բաթումի բանակցությունների ժամանակ թուրքերը առաջ են խաղացել և այդ պատճառով կովկասյան կոնֆեդերացիան փլուզվել է, նրանք հարկադրված են եղել միայնակ մնալ հաշտության պայմանագիրը ստորագրելու համար, որպեսզի իրենց ժողովրդին պաշտպանեն հետագա հալածանքներից:

Նրանք բազմիցս բողոքել են թուրքերին, որ իրենց ևս թույլ տան պայմանագիրը ստորագրել:

Բաթումի հաշտության պայմանագիրը, որ նրանք ինձ տվեցին և որը ես այսօրվա սուրհանդակի հետ ուղարկում եմ, թողնում է հայկական պետությանը Կովկասի երկու միլիոն հայերից և Թուրքիայից 300 000 փախստականից հազիվ 200000:

Իմ գրուցակիցները միանգամայն հավատարժան կերպով պատմում էին ինպես թաթար բնակչության, այնպես էլ թուրքական գործերի կողմից իրագործված սարսափելի հալածանքների և կոտորածների մասին: Կարսը՝ լրիվ հայաբնակ, նրանք կամավոր կերպով թողել են, քանզի թուրքերը հայտարարել էին, որ հենվում են Բրեստի հաշտության պայմանագրի վրա, որն էլ իրենք ընդունեցին: Թուրքերի կողմից գրաված ամբողջ շրջանում հազիվ թե որևէ հայ գտնվի, այդ շրջանից ավելի քան 60000 մարդ դեպի Վրաստան և հյուսիս է փախել:

Երկու պատվիրակն էլ ասացին, որ ինձնք իրենց ողջ հույսը մի մեծ կենսունակ պետություն կազմելու հույսը, դնում են մեր և Գերմանիայի վրա, և պատրաստ կլինեն՝ իրենց տարածքային պահանջները (որոնց մասին ես գեկուցել եմ) հաշվի առնելու դեպքում անցյալի վրա թող նետել և Թուրքիայի հետ բարեկամաբար ապրել:

Ես պատասխանացի, որ երբ կոնֆերանսը կայանա, կ. և թ. կառավարությունն իհարկե իր ազդեցությունը կօգտագործի պրորբն մի արդարացի լուծման համար: Նրանք պատասխանեցին, որ մեր

իրազեկությունն ազգային խնդրում դրա երաշխիքը կարող է լինել:

Պարոնայք պատվիրակները վերջում ինձ ասացին, որ Բաթումի պարտադրված հաշտության պայմանագիրը մինչև հուլիսի 4-ը պիտի վավերացվի այն և իմ խորհուրդն էին խնդրում իրենց երկընտրանքի առթիվ: Եթե պայմանագիրը վավերացնեն, դա կնշանակի, որ այն ընդունել, եթե այն չվավերացնեն, ապա կարող են թուրքերը վերսկսել իրենց հետապնդումները: Ես իրենց ասացի, ես չեմ կարողանա պաշտոնական խորհուրդ տալ, քանզի մենք այդ ամենը չենք ընդունել: Անձամբ ես սակայն ճշգրիտ տեղեկություններ չունեմ հանգամանքների մասին:

“Österreich-Armenien”, Bd VIII, 1918, p. 6135-6136:

№ 71

Հայերի կոտորածը Արդահանում

Երբ թուրքական գործերը այս տարվա մարտին մոտեցան 1914թ. առաջ նախկին ռուսական սահմանին, տեղի թուրքերը կազմակերպեցին ապստամբություն Կարսի և Բաթումի մարզերի Արդահանի, Օլթիի և Արդվինի գավառներում թուրք էմիսարի հրամանատարությամբ ընդդեմ անդրկովկասյան հանրապետության: Նրանք այդ շրջաններում գրավեցին քաղաքները և գյուղերը ու դրանք հանձնեցին թուրքական իշխանություններին: Այդ իրադրությունը նկատի առնելով, հայերը փախչում էին իրենց բնակության վայրերից և հավաքվում էին հիմնականում Արդահանում (7000 անձ) և Օլթիում (1500 անձ): Այդ հայերը բազմիցս Արդահանը և Օլթին լքելու և դեպի Կարսի ուղղությամբ հեռանալու փորձ են կատարել, բայց տեղի թաթարները և աջարները թույլ չեն տվել հեռանալ վկայակոչելով, որ ճանապարհներն անվտանգ չեն և նման այլ պատճառաբանություններով: Իրականում նրանք միանգամայն այլ մտադրություն ունեին: Մարտի 15-ին Արդահան եկավ տխրահեռչակ թուրք Աղա Արդուլան իր 200 հեծյալով հանդերձ և արժանացավ տեղի թաթարների և աջարացիներից բաղկացած իշխանությունների, որոնք միացել էին ապստամբներին և անցել Թուրքիայի կողմը, ցնծալի ողջույններին: Արդուլան անձամբ համարվում էր որպես թուրքական ծառայության մեջ գտնվող:

Հաջորդ օրը սկսվեց հայերի կոտորածը Արդահանում: Ականատեսներն են. վրացիները, հույները և ռուսները՝ սպաներ և ռուսա-

կան տարրերը ատյանների պաշտոնյաներ, որոնք փախուստի ժամանակ մի քանի օրով ձերբակալված են եղել Արդահանում, նկարագրել են այդ սարսափելի գազանությունները: Նրանք սեփական աչքերով տեսել են, թե ինչպես Արդուլահի հրոսակախմբերը և տեղի քաթարների ու աջարացիների խմբերը մոտենում էին հայերի տներին, որոնք նախորդ գիշեր հատուկ նշանով տարբերակվել էին: Նախ յուրաքանչյուր տուն փակվեց, այնուհետև ներխուժեցին ներքին շինությունները, դուրս էին քարշ տալիս տղամարդկանց և զնդակահարում նրանց շենքի մոտ: Հաճախ տղամարդիկ դուրս էին վազում տներից կամ ցատկում էին պատուհաններից, սակայն նրանք գրեթե առանց բացառության փախուստի ընթացքում զնդակահարվում էին: Եզակիներին հաջողվեց քաքնվել ձեղնահարկերում և նկուղներում: Սակայն նրանք ևս հայտնաբերվեցին և տեղնուտեղը զնդակահարվեցին: Ականատեսները տեսել են սպանվածների մեջ ոչ սակավ թվով կանանց և երեխաների դիեր: Այդուհանդերձ երիտասարդ կանանց մեծամասնությանը տեսել են առանձին տներում կալանավորված: Այդ տներից մի քանիսը, որոնց մեջ կանայք և երեխաներ էին զետեղված, հրկիզվեցին ընդ որում ներսում գտնվողները ողջակիզվեցին:

Այս կերպ մոտ 7000 անձ կոտորվեց, որոնց միակ մեղքն այն էր, որ նրանք որպես հայ էին ծնվել: Նույնը պատահեց այն 1500 հայերին, որոնք հավաքվել էին Օլթի քաղաքում:

“Österreich-Armenien”, Bd VIII, 1918, p. 6223:

№ 72

*Գերմանական զինվորական
պատվիրակությունը Կովկասում
Թիվ 138*

*Թիֆլիս,
11 հուլիսի, 1918*

*Նորին գերագնացություն ռախսկանցիներ
պարոն կոնս ֆոն Վերտլինգին*

Այսօր ինձ այցելել է հայ եպիսկոպոս Մեսրոպը, Թիֆլիսի եպիսկոպոսության նախկին տեղապահը, ինչպես Չերդ գերագնացությանը արդեն հատկապես զեկուցել են:

Եպիսկոպոսը՝ հարգարժան մի անձնավորություն, հիսուն տարեկանին մոտ, ծնվել է Դորպատում և լավ է խոսում գերմաներեն:

Նա մենակ ձիով սարերով քաթարական հրոսակախմբերի միջով, մշտապես կյանքը վտանգելով Երևանից Թիֆլիս է եկել խնդրելու գերմանական օգնությունը հայ ազգի մնացյալը փրկելու համար:

Ցնցող բառերով նկարագրում է եպիսկոպոսը իր ազգի ճակատագիրը: Նա ազնվորեն ջանում է մեղմել թշվառությունը և օգնել: Ավելի քան կես միլիոն հայեր թուրքերի կողմից զավթած և վտանգված շրջաններից ապրիլի առաջին կեսին խուճապահար դիմել են փախուստի, թողնելով իրենց գյուղերը, փախել են թուրքերից: Նրանք ներկայումս կուտակվել են Երևանի շրջանում: Նրանց աջակցելու համար դրան չկա, սակայն մեծ գումարով էլ նրանք չեն կարողանում ուտելիք հայթայթել: Բազում, բազում հազարները նրանցից ապրում են միայն խոտ ուտելով: Ինքնին հասկանալի է, որ մոլեգնում են սարսափելի հիվանդությունները և տանում անթիվ զոհեր կիսատվյալ և թշվառ մարդկանց շրջանից:

Թուրքերը չնայած Բաթումի հաշտության պայմանագրին և Հայաստանի անկախությանը չեն լքում հայկական շրջանը, թույլ չեն տալիս Թիֆլիսում գտնվող Ազգային Խորհրդին և Վրաստանում գտնվող փախստականներին վերադառնալ հայրենիք, որպեսզի Ազգային Խորհուրդը ոչ մի կապ չունենա Հայաստանի հետ և չկարողանա այնտեղ իր կառավարող պարտականությունը կատարել:

Բերքը մոտակա օրերին կհասունանա: Այն առանձնապես լավ պիտի լինի Մարդարապատ-Իզդիլը և Դարցալայի միջև ընկած շրջանում:

Սակայն եթե հայ գյուղացիներին մոտակա ժամանակ չթույլատրվի վերադառնալ իրենց հայրենիքը, ապա բերքը կկորչի: Ուրեմըն հայերը պիտի կամ սովից մահանան, կամ նրանց կերակրումը բեռի պես ընկնելու է կենտրոնական տերությունների վրա:

Մոտ 14000 հայ 17-ից մինչև 60 տարեկան հասակի թուրքերի կողմից հարկադիր աշխատանքի են բռնությանը ուղարկվել: Ըստ եպիսկոպոսի տվյալների նրանց շրջանում մեծ թշվառություն է տիրում: Յուրաքանչյուր հայ օրական ստանում էր, չնայած ծանր աշխատանքին, մի հատ թուրքական չոր հաց (մոտ 200 գրամ): Հայ ազգի անունից և որպես քրիստոնյա եկեղեցիներից մեկի եպիսկոպոսնա դիմում է նորին մեծություն կայսեր և գերմանական կառավարության մեծահոգությանը: Միայն Գերմանիան է ի վիճակի հարկադրել Թուրքիային, որ նա հրաժարվի հայ ազգի չնչին մնացորդը սիստեմատիկ սովամահության մատնելու իր հանցավոր ձեռնարկումից:

Գերմանիան պիտի իրեն հաշիվ տա, որ ինքը պատմության առաջ պատասխանատվություն է կրում, քանզի այն իր հզորությունը

չօգտագործեց մի քրիստոնյա ազգ մահմեդականների կողմից բնաջրնջելուց փրկելու համար:

Չերդ գերագանցությանը, իմ անճանական կարծիքը, որը ես կազմել եմ բազմաթիվ լուրերի և զեկուցագրերի հիման վրա, որոնք ես ստացել եմ այստեղ, վկայում է այն, որ հազիվ թե կասկած լինի այն առթիվ, որ թուրքերը սխտեմատիկորեն ձգտում են այն բանին, որ ցարդ մի բանի հարյուր հազար ողջ թողած հայերին սխտեմատիկ սովամահությանը բնաջրնջել:

Ինձ պատշաճ չէ Չերդ գերագանցության ուշադրությունը հրավիրել այն պարտականությունների վրա, որ Գերմանիան որպես քրիստոնյա ազգ քրիստոնյա հայերի նկատմամբ պիտի կատարած լիներ, և այն տպավորությունը, որ մեր հասարակական կարծիքի և ամբողջ քրիստոնյա աշխարհի վրա պիտի ներազդի, եթե մենք հայերին բնաջրնջումից չփրկենք:

Բայց ես պարտավոր եմ Չերդ գերագանցության ուշադրությունը հրավիրել այն իրողության վրա, որ մեր հեղինակությունը Կովկասում և շրջակա տարածքներում ծանր վնասներ կարող է կրել, եթե մեզ չհաջողվի հայերին պաշտպանել թուրքերից:

Անտարակույս մեզ կկշտամբեն, որ մենք գուրկ ենք բարի կամքից, կամ կարող են ենթադրել, որ մենք ոչ ուժ և ոչ էլ իշխանություն ունենք թուրքերի դեմ մեր կամքը իրականացնելու: Մենք մեր անհաշտ բշտամբները կդարձնենք բազմաթիվ և իր հարստության շնորհիվ շատ ազդեցիկ հայկական ծագում ունեցող վրացիներին, և մեր հակառակորդները մեր դեմ ձեռք կրերեն թացառիկ ազդեցության քարոզչամիջոց:

Ուստի ես Չերդ գերագանցությանը նույնքան հաստատականորեն, որքան և խոնարհաբար խնդրում եմ բոլոր հնարավոր միջոցներով և ըստ հնարավորության արագ թուրքական կառավարության վրա եռանդուն ճնշում գործադրել, որ նա անհապաղ իր զորքերը Հայաստանից դուրս հանի, փախստական հայերին իրավունք ընձեռի վերադառնալ իրենց հայրենիքը, հոգ տանի այն մասին, որ հայերը առանց իրենց կյանքը և կայքը վտանգելու անխափան կարողանան իրենց բերքը հավաքել, և որ հարկադիր աշխատանքի համար բռնությանը տարված հայերին թույլատրվի անմիջապես վերադառնալ իրենց հայրենիքը:

Ստորագրված է՝ գեներալ քարոն ֆոն Կրես

“Österreich-Armenien”, Bd IX, 1918, p. 6335-6337:

*Հավելված՝ Ավստրո-Հունգարիայի դեսպանից՝
Արտաքին գործերի նախարար Ստեփան Բուրիանին*

2 սեպտեմբերի, 1918

Արտաքին գործերի մինիստրության
նկատառումները Կովկասի հարցերի վերաբերյալ

Նորագրություն

*Կայսերական կառավարությունը հանձնարարում է Թալեաթ
փաշայի հանդեպ Կովկասի հարցերում հետևյալ դիրքը գրավել:*

1. Արդահան, Կարս և Բաթում

Բրեստի պայմանագրի 4-րդ հոդվածը Թուրքիային ամենևին իրավունք չի տալիս այդ տարածաշրջանը անբասիայի ենթարկել, ընդհակառակը, բազմիցս շեշտվել է, որ Ռուսաստանը չի միջամտելու այդ երեք մարզերի պետաիրավական և միջազգային իրավական նոր իրավակարգի հանգամանքներին, այլ՝ թողնում է դրանց բնակչությանը նոր իրավակարգ իրականացնել դրացի պետությունների, հատկապես՝ Թուրքիայի, համաձայնությամբ: Մինչդեռ Թուրքիան այդ մարզերը միակցել է իր կազմին սոսկ հանրաքվեի հիման վրա, որի լրջությունը կասկածի տեղիք է տալիս: Դաշնակիցները, որպես Բրեստի պայմանագրի համաստորագրողներ, իրավունք ունեն ստուգել հանրաքվեի օրինականությունը և հարկ եղած դեպքում՝ բողոքարկել: Սակայն հնարավոր է հանձնարարել, որ թուրք դաշնակցին ընդառաջելու միտումից ելնելով, հրաժարվել դրանից:

2. Վրաստան

Այն իրողությունից հետո, երբ Ռուսաստանը լրացուցիչ պայմանագրի 13-րդ հոդվածով իր համաձայնությունը տվեց Վրաստանը որպես ինքնուրույն պետականություն ճանաչելուն, այլևս ոչ մի խաչընդոտ չկա մոտ ապագայում լրացուցիչ պայմանագիրը վավերացնելուց հետո հռչակել այդ ճանաչումը. Թալեաթ փաշան կամենում է, որ մենք առաջմ այդ առթիվ հապաղենք: Այդ հապաղումը կարող է տևել մինչև մեծ վեճի հետ մտքերի փոխանակումը:

Բաթումի հաշտության պայմանագրով, որը վրացիները պարտադրված են համարում, Թուրքիան Բրեստ-Լիտովսկի պայմանագ-

րով որոշված սահմաններից ավելի հարկադրել է իրեն զիջել Ախալց-խայի և Ախալքալաքի շրջանները: Վրացիները դա համարում են նորաստեղծ պետության համար կյանքի խնդիր: Որպես Բրեստի պայմանագրի համաստորագրող մենք կկարողանանք պահանջել որպեսզի այդ շրջանները վերադարձվեն վրացիներին: Թալեսթ փաշային ընդառաջելու համար, սակայն, պիտի հանձնարարել այդօրինակ պահանջից ձեռնադաշտ մնալ, բավարարվել բարի խորհրդով և, ասենք, թուրքերին վրացիների հետ բարեկամարար միավորվելու խորհուրդ տալ: Ընդ որում մենք կարող ենք մեր միջնորդությունը առաջարկել և, այդ ընդունելու դեպքում, այդ ուղղությամբ ջանքեր գործադրել, որ երկու կողմերը վիճելի տարածաշրջանը երկուսի միջև կես առ կես բաժանեն:

3. Հայաստան

Բաթումի հաշտության պայմանագրով Թուրքիան հայերից ևս Բրեստ-Լիտովսկի պայմանագրով որոշած սահմաններից ավելի՝ կարևոր նշանակություն ունեցող տարածաշրջաններ է զավթել: Երկիրը, որը մնացել է հայերին, շատ փոքր է բնակչությանը կերակրելու համար: Հարյուր հազարավոր հայեր փախել են Վրաստան կամ լեռները: Մենք, որպես Բրեստի պայմանագրի համաստորագրող, պարտավոր ենք պահանջել, որ Թուրքիան հետ քաշվի դեպի Բրեստի նշված սահմանները և փախստական հայերին հնարավորություն ընձեռի վերադառնալ իրենց բնակավայրերը: Թուրքիային խնայելու համար հանձնարարվում է այդօրինակ պահանջից հրաժարվել և սահմանափակվել սոսկ թուրքական գործողությունների դեմ առարկությամբ, սակայն՝ առանց այդ առարկություններին հետևող գործողությունների: Ընդամենը, այնուամենայնիվ, Թալեսթ փաշայի ուշադրությունը [պետք է] հրավիրել այն պարագայի վրա, որ մենք ոչ հայկական պետության ինքնուրույնության ձգտումն ենք սատարում, ոչ էլ Հայաստանում Թուրքիայի քաղաքական կամ ռազմական ձեռնարկումներին կարող ենք աջակցություն ցուցաբերել: Թուրքիան գործում է իր սեփական պատասխանատվությամբ և ռիսկով և չի կարողանա մեր օգնության վրա հույս դնել Ռուսաստանի կամ այլ տերությունների հետ բարդություններ առաջանալու դեպքում:

Թուրքիայի և Հայաստանի միջև միջնորդությունից մենք ավելի լավ կլինի խուսափենք, քանզի մենք կարող ենք հայտնվել մի իրավիճակում, երբ պարտավոր կլինենք հայերի, ասել է թե ռուսների, հաշվին թուրքերի սահմանափակ տարածքային նվաճումներին հավանություն տալ և Հայաստանը որպես բանակցություն վարող ինքնուրույն գործոն ճանաչել:

4. Ադրբեջան

Կովկասյան Ադրբեջանի պորթլեմից ամենից առաջ, որպես հատուկ կետ, առանձնանում է Բաքվի հարցը: Մենք պիտի պնդենք, որ թուրքերն իրենց գորքերը հետ քաշեն լրացուցիչ պայմանագրի 14-րդ հոդվածով նշված սահմանագծից և այդ սահմանագիծն ապագայում վերստին չխախտեն: Մենք այնուհետև թուրքերին իրագել ենք դարձնելու, որ մենք հաստատապես որոշել ենք դաշնակիցների նավթի կարիքները հաշվի առնելով այնտեղ ներխուժած անգլիացիներին փոխարինել գերմանական գորքերով: Բաղաքի վերահանձնումը պետք է փորձել կատարել խաղաղ ճանապարհով, առաջին հերթին՝ սովետական կառավարության օգնությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ռազմական ուժի միջոցով: Եթե անհրաժեշտ լինի ռազմական գործողության դիմել, ապա թուրքերի օգնության վրա հույս չպետք է դնել, ընդհակառակը, ակնկալվում է, որ նրանք պահպանելու են վերը հիշատակված պաշտպանական գիծը: Դրա փոխարեն մենք պատրաստ ենք ինչպես երկու մյուս դաշնակիցներին, այնպես էլ թուրքերին ապահովել համապատասխան մասնակցություն Բաքվում արդյունահանվող նավթին:

Ինչ վերաբերվում է Ադրբեջանի մյուս շրջաններին, ապա մենք նաև այստեղ հրաժարվելու ենք բնակչության անկախության ձգտումը սատարել և նպաստելու ենք Թուրքիայի քաղաքական կամ ռազմական ձեռնարկումներին: Ադրբեջանում ևս Թուրքիան գործում է սեփական պատասխանատվությամբ և ռիսկով, հնարվոր բարդությունների դեպքում՝ առանց մեր օգնության վրա հույս դնելով: Դրանից զատ մենք պետք է պահանջենք, որ մեր գաղութաբնակներին լավ վերաբերվեն և հնարավորինս հատուցվեն [նրանց կորուստները], իսկ նավթամուղը, ինչպես և երկաթուղին, որը Բաքվից դեպի արևմուտք թափարների երկրով է անցնում, անհրաժեշտ դեպքում պետք է անվտանգ դարձվեն գերմանական, համապատասխանաբար՝ ավստրո-հունգարական պահակությամբ:

5. Հյուսիսային Կովկաս

Հյուսիսային Կովկասի համար հիմնականում պետք է կիրառել նույն մոտեցումը, ինչ Ադրբեջանի համար, ուրեմն, ոչ մի աջակցություն թուրքական հնարավոր ձեռնարկումներին. թուրքերը դրանց կարող են դիմել լոկ սեփական պատասխանատվությամբ և բարդությունների դեպքում չեն կարող գերմանական օգնության վրա հույս դնել:

Հայաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի համար պատշաճ է, որ մենք այդ տարածաշրջանի անկախության ոչ ձևա-

կան, ո՛չ էլ դե ֆակտո ճանաչմանը պարտավոր չենք նպաստելու: Դրան հակառակ, քանի դեռ Ռուսաստանը Անդրկովկասում, բացի Բաքվից, ոչ մի կառավարական իշխանություն չի իրականացնում, ոչ մի խանգարող հանգամանք չկա, որպեսզի մենք, առանց մեր օժանդակության կազմված կամ տակավին կազմելիք հիշյալ երեք պետությունների կառավարությունների հետ մեր տեղական շահերի շուրջ անմիջականորեն բանակցություններ վարենք: Մենք կարող էինք այդ նպատակով, օրինակ, հյուպատոս գործուղել: Ընդհակառակը դեսպանորդների գործուղումն առայժմ տեղի չի ունենա:

Wien, Haus, – Hof – und Staatsarchiv (HHSTA), Politisches Archiv (PA), X 157 (Beilage).

№ 74

Հայաստանի հանրապետության պատվիրակությունը Վիեննայում
Վիեննա, 7 սեպտեմբերի 1918
Հյուրանոց Կրանց

Նորին գերագանցություն Ավստրո-Հունգարիայի
արտաքին գործերի պարոն մինիստրին

Վիեննա

Ձերդ գերագանցություն.

Մենք պատիվ ունեցանք Բեռլինում կայսերական և քաղաքական ղեկավարի միջնորդությամբ Ձերդ գերագանցության կառավարությանը ներկայացնել մեր ազգի հոգսերը և ցանկությունները:

Մարսափելի այն փորձությունները, որոնց ենթարկվեց մեր ժողովուրդը այս պատերազմի ընթացքում Թուրքիայում և որի մեծագույն մասը գոհ դարձավ դրանց, հայտնի են Ձերդ գերագանցությանը: Այժմ այդօրինակ աղետ է սպառնում մեր ժողովրդի կովկասյան հատվածին:

Թուրքական զորքերը անցել են այն սահմանները, որ հաստատված է Բրեստի պայմանագրով, արհամարհելով այդ պայմանագիրը և զավթել են Կովկասյան Հայաստանի կեսը, մի պարագա, որի հետևանքով տեղի ունեցավ կես միլիոնից ավելի հայերի զանգվածային փախուստ զավթած շրջաններից, կես միլիոնից ավելի հայեր, որոնք այժմ անօթևան և հացից զուրկ դեգերում են լեռներում և անտառներում և որոնք զանգվածաբար տառապում են գրկանքն-

րից ու հիվանդություններից:

Դրա և թուրքական զավթումի հետևանքով նրանց անվտանգությանը մշտապես սպառնացող վտանգի պատճառով ստեղծվել է հույժ օրհասական մի իրավիճակ կովկասյան հայերի համար, իրավիճակ, որն անվարան ավարտվելու է նրանց ամբողջապես բնաջրնջմամբ և դրանով իսկ տեղի է ունենալու Ասիայում մշակույթ ստեղծող քրիստոնյա մի ազգի վերջին մնացորդների ոչնչացում, եթե շատ շտապ մի օգնող ձեռք չպարզվի սպառնացող չարիքը կանխելու համար:

Թուրքիան հիմնավորում է իր ներխուժումը Կովկաս այնտեղ բնակվող մահմեդականների պաշտպանությամբ: Գերմանիայի կառավարությունը գործուն օգնություն է ցույց տվել վրացիներին և երբ մենք դիմում ենք ավստրո-հունգարական կառավարությանը՝ մեզ իր հզոր պաշտպանության տակ առնելու խնդրանքով, ապա մենք հավատում ենք, անտարակույս հույս ունենք, որ այդ օգնությունը մեզ չի մերժվի մի տերության կողմից, որը ստորագրել է Բրեստի պայմանագիրը և որն արևելյան քրիստոնյաների պաշտպանությունը մշտապես համարել է իր բարձրագույն խնդիրներից մեկը:

Թուրք-կովկասյան սահմանի առումով Բրեստի պայմանագրի ճշգրիտ և անհապաղ կիրառումը Կովկասի, հատկապես Կովկասյան Հայաստանի հաջող զարգացման կանխադրյալն է: Եվ մենք համակված ենք այն համոզմամբ, որ Կենտրոնական տերությունները, որոնք ստորագրել են այդ պայմանագիրը, չեն հանդուրժի դրա հետագա խախտումը:

Մենք խնդրում ենք ամենայն խոնարհությամբ, պետք է ասել, որ մարդասիրական նկատառումներից զատ, որոնք Ձերդ գերագանցության կառավարության փրկարար գործուն միջամտությունը նշանակալից են դարձնելու, հայերի պաշտպանությունը հատուցվելու է մշակութային, տնտեսական և քաղաքական առումով:

“Österreich-Armenien”, Bd X, 1918, p. 7208-7209:

№ 75

Տեղակայման վայրը՝

Թիֆլիս

Բաքու

27.09.1918

Հատված ականատեսի զեկուցագրից Բաքվում
թուրք-քաքարական խաժամուժի վայրագությունների մասին

Արդեն 15/9-ի ցերեկվա ժամը 3-ին անգլիացիները լքեցին քաղաքը և նավարկեցին դեպի Էնգելի: Նաև «Կենտրոնական» նույն զիշեր ռազմամթերք և կենսամիջոցներ բեռնեց նավերի մեծ մասին և բողեց քաղաքը: Հայ ազգաբնակչության մեծ մասը՝ գլխավորապես մտավորականությունը և բուրժուական դասին պատկանողները խուճապահար փախչում էին դեպի նավերը: Շահումյանը և Ջափարիձեն, նաև բոլոր կալանավորված բուլղիկները նավ դրվեցին և իրենց հետ վերցվեցին:

Միայն մոտ 400-500 ռուսներ և սակավ թվով հայեր սեփական նախաձեռնությամբ ռազմաճակատը գրավեցին և սրանց դեմ թուրքերը 15/9-ի ժամը առավոտյան 6-ին ձեռնարկեցին հարձակում: Փոքր այդ գորախումբը կասեցրեց թուրքական զորոն մինչև առավոտյան ժամը 10-ը և մինչև վերջին մարդը մարտնչելով նահանջեց քաղաքի խորքը, նույնիսկ քաղաքի կենտրոնում գտնվող զբոսայգում մարտնչում էր: Թուրքերը քաղաք ներխուժեցին 15/9-ի առավոտյան 10-ին ձախ քեից Կրասնի փուկանի կողմից, աջից՝ Շարանդաղ լեռան կողմից:

Բաքվի զրավումից մտավորապես երեք օր առաջ թախանձազին խնդրեցին Բիչախովին՝ օգնություն ուղարկել: 13/9-ին 300 մարդուց բաղկացած բիչախովականների ջոկատը եկավ: 15/9-ին սպասում էին 1500 մարդ անձամբ Բիչախովի հետ մեկտեղ, խոստացան քայց այլև չեկան:

Անմիջապես ներխուժումից հետո թուրք ասկյարների և տեղաբնիկ թաքարների կողմից սկսվեցին սանձարձակ կողոպուտները և հայ բնակչության կոտորածը: Երեք օր քաղաքը մատնված էր կողոպուտների և կոտորածների: Կոտորածը շարունակվեց նաև քաղաքի գրավումից հետո 4-րդ օրը: Չորրորդ օրը թուրքական հրամանատարության կողմից խիստ հրամաններ արձակվեցին, որից հետո մի քանի դիակողոպուտիչներ կախաղան բարձրացվեցին և զնդակահարվեցին:

Չոհերի թիվը.

Խոսում են 10-20000 դիակի մասին: Մտույզ թվաքանակը հնարավոր չէ ճշտել: Հայկական մի գյուղ՝ Արմենիքենը գլխովին կոտորածի ենթարկվեց և 24/9-ին տակավին եղբայրական զերեզմաններից նկատելի էին դուրս ցցված մարդու մարմնի մասեր: Փախըստականներին խնամող ծառայությունում գրանցված 23000 անձանցից 7000-ը սպանվել են: Կան հայկական ընտանիքներ, որոնց զերդաստանի 26 անդամից միայն երեքն են ողջ մնացել: Դաժանու-

բյուրները ոչ մի սահաման չէին ճանաչում: Տակավին 19/9-ին անթաղ դիակներ էին ընկած, օրինակ «Մետրոպոլ» հյուրանոցի առջև, երեխաներ կտրված ձեռքերով և ոտքերով: Ըստ բնակիչների պատմածի, կենտրոնում ներխուժումից 5 օր հետո էլ դիակների հոտի պատճառով բնակարանների պատուհանները չեն բացում: Վորոնցովսկայա, Կրասնովոդսկայա և Բուչայա Մորսկայա փողոցների մայրերի վրա կարելի էր տեսնել չորացած արյան հետքեր:

Ընդհանուր բնակչության մոտ 80 %-ը ենթարկվեց կողոպուտի: Այդ կողոպուտը որոշ փողոցներում այնքան կազմակերպված էր կատարվել, որ ճոխ կահավորված բազում բնակարաններից միայն մերկ պատերն են մնացել: Որոշ հարուստ թաքարների բնակարանները ևս չլնայվեցին և կողոպուտի ենթարկվեցին: Կողոպուտվածը մասամբ սայլերով, մասամբ էլ երկաթուղով տարան: Ողջ մնացած շատ բնակիչներ, անկախ իրենց ազգային պատկանելության, իրենց կյանքը մեծ փրկագնով են պահպանել: Քյուրդամիրի և Բաքվի միջև ընկած ճանապարհին թուրք ասկյարները և տեղաբնիկ թաքարները կողոպուտված զանազան իրերի աշխույժ առևտուր են անում:

Ներկայումս Բաքվում անդորր է տիրում, կողոպուտված իրերը վերադարձնելու մասին թուրքական հրամանները բնականաբար ուշացած են և միայն մի հետևանքի են հանգեցրել, որ զրեթե ամեն օր գլխավոր փողոցներում նորանոր կախաղան հանվածներ են երևում: Նուրի փաշայի դեմ կեղծ դավադրությունը բացահայտելու պատճառով ողջ մնացած բազում հայեր են ձերբակալվում:

Թուրքական զորքերը շարժվում են Ղարաբաղ

Արդեն 20/9-ին թուրքերը սկսել են շարժվել դեպի Շուշի, որտեղ Անդրամիկը իր հայկական զորքով վերստին թուրքերի դեմ գործողություններ է սկսել: 12.000 մարդուց բաղկացած զորամիավորման մեջ կան 2 հետևակային գունդ, լեզգիական մահմեդական հեծելազունը (ռուսական նախկին վայրի դիվիզիան), 1-ին և 2-րդ թաքարական հեծելազունները:

“Österreich-Armenien”, Bd X, 1918, p. 7481- 7482:

№ 76

*Կ. և ք. ավստրո-հունգարական
դեսպանություն*

*Ենիքյոյ,
28 սեպտեմբերի 1918*

**Հայաստանը և
փախստականների
հարցը**

*Նորին գերագանցություն կ. և ք. արքունի և արտաքին
գործերի պարոն մինիստր, կոմս Ստեփան Բուրիանին*

Հայաստանի արտաքին գործերի մինիստրը հայտնել է կ. և ք. գինվորական լիագործին, որ իր կառավարության այստեղ ստացված վերջին գեկուցագրից հենց մի քանի օր հետո թուրքական կովկասյան բանակի գլխավոր հրամանատարությունը հայերին շատ մեծ տարածքային զիջում է կատարել: Լոռու և Փամբակի շրջանները մաքրվում են թուրքական զորքերից և դրանք հայերին են բողոնվում: Մաքրված շրջանները ընդունելու համար ուղարկված են 6 գումարտակ: Դրանցից զատ, թուրքերը հայերին են զիջել Ղազախի շրջանը մինչև Ուզուն-թալա բնակավայրը, Գյուկչա լճի շուրջը գտնվող շրջանը Նովո-Բայազետ հատվածով հանդերձ և Շարուրի շրջանի հյուսիս-արևմտյան մասը մինչև Արփա գետը:

Դրա շնորհիվ Հայաստանի Հանրապետության տարածքը 9000 քկմ մեծանում է և կազմում մոտ 21000 քկմ:

Դրանից զատ, պարոն Խատիսյանը կամենում է հեռագիր ստանալ Բեռլինում գտնվող իր ներկայացուցչից: Ըստ որի Թալեաթ փաշան նրան հավաստիացրել է, որ ցարդ չլուծված տարածքային տարածայնությունները Թուրքիայի և Հայաստանի միջև ամենամոտ օրերին լուծվելու է վերջին երկրի օգտին:

Կովկասում թուրքական գլխավոր հրամանատարության կողմից հայերին բողոնված շրջանները մասամբ այնպիսին են, որոնց նկատմամբ Վրաստանը, Ադրբեջանը հավակնություն են ներկայացրել:

Բացի դրանից, Հայաստանի արտաքին գործերի մինիստրը պնդում է, որ Կովկասում թուրքական և հայկական շրջաններում տեղի է ունենալու ազգաբնակչության փոխանակում: Արդեն 100000 մահմեդականներ պիտի Հայաստանից գաղթեն և պիտի հաստատվեն Կարսի մարզում: Երևանի նահանգից մահմեդականների արտագաղթի շնորհիվ Հայաստանի ազգաբնակչության և այնտեղ գաղթած

ազգակիցների պարենավորման հոգսերը այլևս այդչափ մեծ չեն լինի: Բացի դրանից, տեղի ունենալիք զիջման շնորհիվ փախստականների մեծ մասին կընձեռվի բնակվելու հնարավորություն: Եթե այժմ տակավին, ինչի հույսը պարոն Խատիսյանն ունի, Էմվեր փաշան իր խոստումը պահի և Ախալքալաքի հարավային մասը վերադարձվի հայերին, ապա փախստականների հարցը վերջնականորեն կլուծվի:

Թուրքերի և հայերի միջև փոխհարաբերությունները պիտի, դարձյալ նույն աղբյուրների համաձայն, վերջին ժամանակ էականորեն լավացած լինեն: Ալեքսանդրապոլից դեպի Բաքու շարժվող թուրքական զորքերը ոչ մի խժոժություն չեն անելու և իրենց վարքով հանդիմանություն չեն հարուցելու:

Գերմանական կայսերական հավատարմատարը վերջին սուրհանդակի միջոցով հրահանգ է ստացել՝ փախստականների օգտին ձեռնարկված մեր դեմարշը սատարելու և կամենում է այդ առաջադրանքը մոտ ժամանակ արտաքին գործերի մինիստրի ընդունելությանը կատարել:

“Österreich-Armenien”, Bd X, 1918, p.7419-7422:

№ 77

*Կ. և ք. ավստրո-հունգարական
հյուպատոսություն
Հալեպ
Թիվ 15/քաղ.*

*Հալեպ, 29 սեպտեմբերի
1918*

Հայերի հետապնդումները

*Նորին գերագանցություն կ. և ք. արքունի և արտաքին գործերի
մինիստր, կոմս Ստեփան Բուրիան ֆոն Ռայնցիին.*

Իմ վերջին գեկուցագրում պատիվ եմ ունեցել հայտնելու, որ այստեղ երեկ վերստին հայերի, գերագանցապես կանանց, տարագրություններ են սկսել: Առայժմ այդպիսիք մեծ ծավալ չեն ստացել, սակայն դաժանությունները շատ խիստ են:

Այդ միջոցառումները պետք է որ առաջացած լինեն Գամակոսի, Ռայաքի և Բեյրութի մերձակայքում տիրող ռազմական իրադրության մասին տարաբնույթ լուրերի, որոնք օրավուր բազմիցս հակասում են միմյանց, հետևանքով ազդեն նաև բարքերի ծայրահեղ սրացման վրա: Սակայն այսօր արդեն առաջին օրերի խուճապից

հետո հանդարտ մտայնությունն է տեղ գտնում, հավանաբար այս միջոցառումներից ձեռնպահ են մնալու:

Բոլոր դեպքերում սակայն հայերը թուրքական իշխանությունների կողմից ո՛չ համակրանք կամ նույնիսկ ո՛չ էլ աջակցություն և պաշտպանություն չեն կարող ակնարկել:

“Österreich-Armenien”, Bd X, 1918, p.7423-7424:

№ 78

*Հայաստանի Հանրապետության
պատվիրակությունը Բեռլինում
Թիվ 118.*

*Բեռլին,
30 հոկտեմբերի, 1918*

*Նորին պայծառափայլությանը, Բեռլինում
Ավստրո-Հունգարիայի պարոն դեսպանին*

Ձերդ պայծառափայլություն, հենց նոր ես հայրենիքից ստացա մանրամասնություններ այն սահմուկեցուցիչ արարքների մասին, որ կատարել են թուրքական զինվորականությունը և թաթար բնակիչները Բաքուն գրավելու ժամանակ այնտեղի հայազգի բնակչության նկատմամբ: Բազմահազար խաղաղ հայեր, որոնց թվում անվանի հայ մտավորականներ, կանայք, երեխաներ և ծերեր, կոտորվել են, հայերի բնակարանները, շնչին բացառությամբ, կողոպտվել են, բանտերը լցվել են հայերով, որտեղ նրանք տակավին հիմա էլ ենթարկվում են սոսկալի տանջանքների: Ասկյարները և թաթարները պնդում են, որ իրենց թույլատրված է եղել երեք օր շարունակ սպանել և կողոպտել: Եվ դա նրանք կատարում էին հիմնավոր կերպով ու անողորմաբար:

Թուրքական գլխավոր հրամանատար Խալիլ փաշային առընթեր գործողված գերմանացի մի սպա Թիֆլիսում մեր դիվանագիտական ներկայացուցչին չարագործությունների առթիվ իր դժգոհությունն է արտահայտել հետևյալ բառերով. «Բաքվում կատարված բարբարոսությունն աննկարագրելի է: Որպես քրիստոնյա և եվրոպացի այդօրինակ սարսափներին ականատես լինելը իմ ուժերից վեր է; արդեն այսօր երեկոյան Խալիլ փաշային կտամ իմ հրաժարականը: Որքա՞ն հայ է սպանվել, ես չեմ կարող ստույգ ասել: Գուցե այդ թիվը շատ մեծ էլ չի, սակայն սպանությունը կատարվում էր բարբարոսաբար, և ամբողջ քաղաքը ենթարկվեց կողոպուտի: Փողոցներից մեկում ես տեսա 20-ից մինչև 35 տարեկան շղթայված հա-

յեր, իսկ նրանց մոտ գտնվում էին պահակներ: Նրանց ճակատագիրը ինձ համար պարզ էր, և ես մեծ ջանքերի գնով նրանց փրկեցի: Սակայն որքան այդօրինակ դեպքեր մնում են առանց փրկարար օգնության: Երբ մենք անցնում էինք փողոցներով, ապա մշտտապես տներից օգնության կանչող ձայներ էինք լսում: Որոշ կանչերի մենք արձագանքեցինք, սակայն որքան շատերին չարձագանքեցինք... Մենք չորս գերմանացի էինք, և մենք չէինք կարող մեծ օգնություն ցույց տալ, քանզի վարքագիծը վերջի վերջո նաև մեր նկատմամբ ապշեցուցիչ էր: Խալիլ փաշան կատարված չարագործությունների համար անմիջական մեղավորը չի: Ամբողջ պատասխանատվությունը ընկնում է Նուրի փաշայի և նրա շտաբի վրա, նրանք կարող էին, եթե այդ ցանկանային, կոտորած և կողոպուտ թույլ չտալ: Այդ տեղի չունեցավ ոչ միայն զորքերի քաղաք մտնելու ժամանակ, այլև ավելի ուշ: Ես այնպիսի տպավորություն եմ ստացել, որ սպանող նախապես էր ծրագրված: Հավանաբար այդ է պատճառը, որ թուրքերը ամեն ինչ արեցին, որպեսզի խանգարեն գերմանական զորքերի արշավանքին մասնակցելուն:

Բաքվում տեղի ունեցած իրադարձությունների մասին լրացուցիչ տեղեկություններ տալու նպատակով ես թույլ եմ տվել ինձ սույն գրությունը կցել Թիֆլիսի «Կավկասկոյե սովոդ» թերթից քաղվածքներ:

Բաքուն գրավելուց հետո հայերին ոչնչացնող կոտորածներ են տեղի ունեցել նաև Նուխիի և Արեշի ենթաշրջաններում: Հայազգի հոգևորականները և ավագանին կոտորածի ենթարկվեցին, կանայք և աղջիկները պատվազրկվել են, երեխաներին ժողովել և մահակներով ծեծելով, սպանել են: Մահմեդական հոգևորականները, որոնց դիմում էին հայերը խնդրանքով՝ խնայել իրենց կյանքը, և որոնք հոժարակամ ուզել են իսլամ ընդունել, պատասխանել են նրանց, որ Նուխիի և Արեշի գավառներում իրենք կուզենային մարդկանց հիշողությունից արմատախիլ անել հայերին: Նուխիի և Արեշի հայ հոգևորականների զեկուցագրի պատճենը ես թույլ եմ տալիս կցել:

Այնուհետև Թիֆլիսում մեր դիվանագիտական ներկայացուցչին հայտնել են թուրքերի մտադրության մասին՝ Ադրբեջանից նահանջելու դեպքում թուրքական հինգերորդ և տասնհինգերորդ դիվիզիաները այնտեղ թողնել, որպեսզի որպես թաթարական հանրապետության զինվորներ թաթարական համագզեստով մասնակցեն հայ ազգաբնակչության դեմ ավագակային և բնաջնջող, հատկապես Ղառաբաղի դեմ ծրագրված արշավանքներին: Արդեն այժմ Ղառաբաղից լավում են խիստ անհանգստացնող լուրեր: Թուրքական զոր-

քերն Ասկերանի վրայով առաջ են շարժվել և ջմբակոծում են հայկական գյուղերը: Ակներն է, թուրքերը նաև այդ վայրում հայերին բնաջնջելու մտադրություն ունեն:

Իմ կառավարությունը հանձնարարել է ինձ կ. և ք. ավատորհունգարական կառավարությանը բողոքել հայ բնակչության նկատմամբ թուրքական զորքերի և քաթարների անմարդկային խժոժությունների դեմ:

*Հայաստանի Հանրապետության
լիազոր ներկայացուցիչ
դոկտոր Հ. Օհանջանյան*

“Österreich-Armenien”, Bd X, 1918, p. 7490-7492: